Это уважение к традиции и обычаям растущих институтов и правил, об истоках и причинах которых мы не знаем, не означает, конечно, как считал Томас Джефферсон со свойственным ему рационалистическим представлением, что мы “приписываем людям прошедшего века мудрость, превосходящую человеческую, и... предполагаем, что то, что они делали, было выше поправок” [3, р. 54-55]. Не утверждая, что те, кто создал институты были мудрее нас, эволюционная точка зрения основана на понимании того, что результат экспериментирования многих поколений может воплощать больше опыта, чем обладает один человек. Тут уместно вспомнить Ренана: “Во всех человеческих делах прежде всего достойны изучения истоки” [8, с. 19-20]. Не гарантировать, не абсолютизировать, ибо это противоречит идее свободы. Не прививать мысль, что нужен кто-то, чтобы обеспечить свободу. Учитывая тоталитарное прошлое постсоветских стран, рационалистический подход опасен. Эволюционный возводит каждого человека до роли основных субъектов истории, что необходимо для достижения внутренней свободы. А без внутренней свободы нет внешней свободы. Тут уместно вспомнить русскую поговорку: “Холоп никогда не мечтает о свободе, он мечтает иметь своих холопов”. Именно “холопа” нужно искоренять из “постсоветского” человека, ибо холоп на руководящих постах не то что не союзник свободе, он ей враг. В этом смысле уместно вспомнить творчество философа и писателя Алена (Эмиль – Огюст Шартье). В своем творчестве он утверждал значимость человека пусть и “маленького”, но трудящегося и дорожащего своей свободой, отстаивал его в борьбе против любых видов властного подавления: государственного бюрократизма, милитаристского угара, религиозного фанатизма.

Идея гармонии человека и природы — одна из главных мыслей Алена. Согласие вырастает из противоборства взаимно уважительного, основанного на равноправном соперничестве, а не слепом разрушении.

Политику Алена трактует с точки зрения этического здравого смысла. Отстаивая свободный критический гражданский разум человека, он отмечает, что власть в современном обществе демистифицируется, все больше утрачивает свое абсолютное, сверхъестественное очарование.

В бедствиях войны он видел, прежде всего, нравственную деградацию общества, пренебрежение к человеческой жизни, бессовестное извращение понятий о справедливости, долге и праве. Против злых наваждений политики он видел только одно

средство борьбы — воспитание людей, их гражданского сознания, умения судить власть и властителей, делая сознательный выбор между могуществом и справедливостью. Подлинный гражданский разум должен вечно бороться против восхищения перед властью и всепоглощающего вождения ее.

Одно из фундаментальных понятий Алена — учтивость, позволяющая человеку быть естественным, мягким, соблюдать меру в своих поступках. Недостаток уверенности в себе и естественности влечет за собой всевозможные пороки [9, с. 827].

Следует обратиться к правилам поведения, которые возникли как часть свободы, и которые являются как ее результатом, так и условием. Из этих обычаев и традиций человеческих отношений, правила морали являются наиболее, но не обязательно единственно важными. Мы понимаем и ладим друг с другом и можем успешно действовать соответственно нашим планам, потому что большую часть времени члены нашей цивилизации следуют бессознательным примерам поведения, бывают стандартны в своих поступках, что не является результатом принуждения, приверженности известным правилам, но результатом четко установленных привычек и традиций. Общее следование этим обычаям является необходимым условием порядка мира, в котором мы живем, нашего умения найти свой путь в нем. В некоторых случаях было бы необходимым ради спокойного развития общества, защитить единообразие методом принуждения, если таковые правила или условия достаточно часто не выполнялись. Принуждения, однако, можно иногда избежать только в случае высокого уровня добровольного следования правилам. Это означает, что именно добровольное подчинение может быть условием для благотворной, результативной деятельности свободы. Истиной является то, что свобода никогда не будет осуществлена без глубоко укоренившихся нравственных, моральных убеждений, и что принуждение может быть сведено к минимуму только в том обществе, где индивидуумы, как правило, будут добровольно, (при необходимости сознательно заставляя себя), осуществлять определенные принципы. К сожалению, в постсоветских странах политическое прошлое пока что оставляет след на понимание свободы, когда не всегда осознается, что свобода это ответственность, умение подчинять самого себя. Иногда инерция политического прошлого бросает эти общества от хаоса безвластия к диктатуре и наоборот. Тут уместно отметить, что только тот человек может быть свободным, кто господин самому себе. К сожалению, в постсоветских обществах люди часто ищут хороших господ для себя, а не в себе. А политические элиты не искореняют эту привычку.

Именно подчинение незапланированным правилам и традициям, важность которых мы полностью не осознаем, это почтение к традиционному, которое рационалистический тип мышления не признает, обязательно для функционирования свободного общества. Правила морали не являются заключениями нашего ума. На каждом этапе нашей эволюции система ценностей, в которой мы рождены, предоставляет цели, которым должен служить наш разум. Эта данность ценностной системы подразумевает, что, несмотря на то, что мы всегда должны бороться за улучшение наших институтов, мы никогда не должны намереваться переделать их в целом, и, что в наших усилиях улучшить их, мы должны принимать как данность многое, чего мы не понимаем. Мы всегда должны работать в рамках, как ценностей, так и институтов, которые не мы создали. В частности, мы никогда не сможем синтетически сконструировать новую основу моральных правил или сделать наше подчинение известным правилам, зависимым от нашего понимания того, что подразумевает это подчинение на данном примере.

В этом плане прослеживается несовместимость с вышеизложенной системой, например, армянского понимания, уважения традиций. Так, для армянской консервативной традиции хорош тот внук, у которого в буквальном смысле те же ценности, что у деда. Но ведь это нонсенс для диалектики. Однако вместе с этим прослеживается обратная тенденция. Из-за полного слома старых ценностей, оказавшись в совершенно новых условиях, постсоветские общества делают неосторожный вывод, что они больше не детерминированы прошлыми поколениями и традициями [8, с. 23-24]. Примечательно, что в ценностной сфере существует любопытный феномен: с появлением новых актуальных проблем и отвечающих этим проблемам новых ценностей старые нормы и установки частично пересматриваются и постепенно перестраиваются в духе времени. Вспомним, например, какими радикальными изменениями в ценностной сфере сопровождались промышленные революции на Западе и на Востоке. Это позволяет предположить, что ценностные системы разных цивилизаций в будущем станут сближаться по мере расширения поля общих проблем и общих нравственных норм. Уже сегодня основным принципом нового полагания ценностей в разных цивилизациях является стремление избежать риска перед угрозой экологической катастрофы и обострением глобальных проблем.

Итак, обобщенная модель разрешения конфликта ценностей при взаимодействии цивилизаций обозначилась. Если попытаться представить ее в виде схемы, то получим последовательность: взаимодействие цивилизаций - общее поле духовных проблем -

общее поле ценностей – перестройка всей системы оценок в каждой из цивилизаций – ценностный консенсус [10, с. 335-336].

В этом плане примечательно то, что нам не следует верить всему, что люди признали ошибочным, но это не означает, что мы должны верить в то, в чем нас демонстративно убеждают. Существуют причины, согласно которым, каждый человек, желающий жить и успешно действовать в обществе, должен принимать большинство общих убеждений, хотя ценность этих убеждений может иметь мало общего с явной правдой. Такие убеждения могут быть основаны на некоем прошлом опыте, потерявшем ресурс эффективности. Умение отказываться от этих традиций и есть здоровый консерватизм.

В этом плане для того, чтоб действовать рационально, обоснованно, нам следует руководствоваться, беря то, что сохраняет свою эффективность, отказываясь от того, что эффективность утратило, критерием же всего этого является опыт.

Мы вынуждены подчиниться правилам, разумного объяснения которых мы не знаем, и независимо от того следуем мы им или нет, мы можем убедиться, что в определенном случае многое зависит от их выполнения. Правила морали помогают достижению иных человеческих ценностей, однако, так как мы едва ли можем знать, что зависит от их выполнения в определенном случае, уже само следование им должно рассматриваться как ценность.

Конечно, ни один разумный гражданин не станет сожалеть об эмансипации человека. Увеличение свободы заключается в том, что прекращается чужое господство со стороны абсолютных властителей. Но и у прогресса, как и у свободы, есть свои границы. Изобретатель классического либерализма Адам Смит отнюдь не трактовал теорию так позитивистски просто. Этические связи как ограничение были для него совершенно само собой разумеющимися [11, с. 60-61].

Эти рассуждения, конечно, не доказывают, что все моральные правила, возникшие в обществе, будут полезными. Только возможные окончательные результаты могут показать, являются ли идеалы, которыми руководствуется группа, полезными или разрушительными. Факт, что общество рассматривает учения определенных людей как воплощение блага, не является доказательством, что следование их правилам не является упущением общества. Может оказаться, что нация разрушит себя, следуя учениям тех, кого она рассматривает как выдающихся людей, возможно святых персон, руководствующихся бескорыстными идеалами. Это одна из основных проблем постсоветских обществ. Наименьшая опасность этого может быть в обществе, члены которого свободны в выборе жизненного пути, так как в таком

обществе такие тенденции были бы саморегулируемыми: группы, руководствующиеся «непрактическими» идеалами придут в упадок, а другие – займут свое место. Но это может иметь место только в свободном обществе, в котором нет принудительных идеалов. Там же, где всех заставляют служить одинаковым идеалам, и где инакомыслящим не позволяют служить другим идеалам, в таких обществах, то, что правила являются нецелесообразными, может быть доказано только после упадка целой нации, руководствующейся ими, и это серьезная проблема большинства постсоветских обществ, ибо многие из них опять идут по пути сотворения кумиров.

Свобода является не только системой, при которой все правительственные действия руководствуются принципами, но она является также идеалом, который не будет сохранен, пока не будет принята как основополагающий принцип, руководящий всеми актами законодательства. Там, где упрямо не следуют этому фундаментальному правилу, как основному идеалу, где не может быть компромисса из-за материальных привилегий – как идеалу, который даже, несмотря на то, что может быть временно нарушен, в случае неожиданности, должен формировать основу всех перманентных соглашений - свобода обязательно будет частично уничтожена агрессией. И это еще одна из проблем постсоветских обществ. Если свобода не будет рассматриваться как высший принцип, то на арену выйдет принцип не естественности, а дарения свободы руководящей элитой, а это уже иерархия, а не свобода.

Какую же роль играет сознание в упорядочении социальных отношений. То, что до сих пор было сказано, не означает, что мы определенно не подразумевали, что сознание не выполняет важной позитивной задачи. Несомненно, разум является наиболее драгоценным имуществом, собственностью человека. Наш довод был просто направлен на то, чтобы показать, что разум не является всемогущим, и убеждение, что он может стать своим собственным хозяином и контролировать свое собственное развитие, может разрушить его. Это призыв к тому, чтоб люди поняли, что мы должны использовать наш разум умно, и для того, чтоб так поступать, мы должны сохранить важную, обязательную матрицу неконтролируемого и нерационального, эволюционного, что является единственным окружением, в котором разум может расти и действовать, оперировать эффективно.

Условием для интеллектуального использования разума в упорядочении человеческих отношений является то, что мы понимаем, какую роль он фактически играет и может играть в работе каждого общества, основанного на взаимодействии многих отдельных умов. Это означает, что до того, как мы попытаемся

изменить общество интеллектуально, мы должны понять, как оно функционирует, мы должны осознать то, что даже когда мы считаем, что понимаем его, мы можем ошибаться. Мы должны научиться понимать, что человеческая цивилизация имеет свою собственную жизнь, что все наши попытки улучшить мир должны действовать внутри общего, которое мы не можем полностью контролировать. Нам придется иметь дело с самостоятельным целым, который руководствуется силами, которые мы не можем переставить, и которые, поэтому, мы должны использовать во всем, чего мы пытаемся достигнуть. Чтоб улучшить их, следует работать скорее с этими силами, чем против них. Во всех наших попытках улучшения мы должны работать внутри этого данного целого, иметь целью частичную, скорее, чем тотальную конструкцию и улучшить детали постепенно, чем пытаться изменить целое. Конечно, и свободное общество управляется, но тут действует принцип диктатуры закона и верховенства права, а не диктатуры «хорошего» руководителя и верховенства интересов властвующей элиты.

Ни один из вышеизложенных выводов не является доводом против употребления разума, но доводом против исключительной монополистической силы экспериментировать над обществом – силы, которая не допускает, не терпит альтернативы, и которая предъявляет права на владения некоторой высшей мудростью. И именно стать такой силой есть та опасность, которая угрожает постсоветским элитам и обществам.

На сегодняшний день единственная традиция, которая существует в большинстве постсоветских стран – это отсутствие традиций, обеспечить стабильность при такой системе власти, которая основана на принципах сдержек и противовесов. Ибо только при такой системе возможно гарантировать свободу. Пока что в большинстве постсоветских стран стабильность обеспечивается за счет системы власти, основанной на принципе перевесов, и не имеет значение, этот перевес в сторону президентской власти или любого другого института власти. Факт остается фактом, что в условиях перевеса невозможно гарантировать свободу.

ЛИТЕРАТУРА

1. **Науек**, “The Constitution of Liberty”. London and New York” 2006, p. 49-63.
2. **Talmon L.**, “ The Origins of Totalitarian Democracy”. London, 1952, p.2.
3. **Науек**, op. cit. p. 54-55.
4. **Филипп Бенетон**, “Введение в политическую науку”. М., 2002, с. 285-300.
5. “Общество и политика (современные исследования, поиск концепций)”. Под ред. **В. Ю. Большакова**. С-Петербург, 2000, с. 91- 92.
6. **Шаронов В.В.**, “Основы социальной антропологии”. С-Петербург, 1997, с. 119-120.
7. **Денхофф М.Г.**, “Границы свободы”. М., 2001, с. 59.
8. **Марк Блок**. “Апология истории”. М., 1986, с. 19-20.
9. **Малахов В.П.**, “Правовая мысль: Антология”. М.-Екатеринбург, 2003, с. 827.
10. **Василенко И. А.**, “Политическая глобалистика”. М., 2000, с.335-336.
11. **Денхофф М.Г.**, “Границы свободы”. М., 2001, с. 60-61.

ARMEN HARUTYUNYAN

*Human Rights Defender of the RA,
Doctor of Sciences (Law), Professor*

FREEDOM AND TRADITION

The most characteristic feature of liberal democracy in the West is particularly obvious: this regime won, he firmly established itself in the reality. Its political success is very notable: liberal democracy combines the equality of right, personal freedoms and civil world. A politics always divides people, but political disagreements are settled peacefully due to the law of majority, and nobody more risks his life and freedom because the authorities do not like him.

It was exactly liberalism that someday became the godfather of present western regime. The regime was born with acknowledgement (immediate or gradual) of a certain number of fundamental principles which are liberal principles. These principles which thereby can be called fundamental, are present principles of equality, freedoms and organizations of power (in their liberal version).

Freedom is not only the system where all governmental actions follow the principles, but it is also an ideal which will not be kept until it is recognized as fundamental principle, leading all acts of legislation. Where this fundamental rule is not persistently followed, as main ideal, where there is no compromise because of material privileges, as an ideal, which even in spite of having possibility of being violated in case of unexpectedness, must form the bases of all permanent agreements, the freedom will certainly be partially destroyed by aggression. And this is one of the problems of postsoviet societies. If freedom is not considered as the highest principle, the principle of not naturalness, but of giving of freedom by the leading elite will emerge, and it is already a hierarchy, but not freedom.

The only tradition existing today in most postsoviet countries is the absence of traditions, to provide stability at such system of power which is based on principles of checks and balances, because only at such system it is possible to guarantee freedom. As yet in most postsoviet countries stability is provided due to the system of power, based on principle of preponderances, and it does not matter, this preponderance is toward presidential power or any other institute of power. The fact remains, that in the conditions of preponderance it is impossible to guarantee freedom.

ԳԵՎՈՐԳ ԴԱՆԻԵԼՅԱՆ

ՀՀ արդարադատության նախարար,
իրավաբանական գիտությունների
դոկտոր, պրոֆեսոր

ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏԱՐԱՆՋԱՏՄԱՆ ՍԿՁԲՈՒՆՔԻ ԸՆԿԱԼՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ

«Սահմանադրությունը իշխանական, նյութական և հոգևոր հարաբերությունների ինքնակենսագրություն է, ուստի ինչպես և ցանկացած այլ ինքնակենսագրությունում, դրանում առկա է մեծարանք՝ զերծ յուրաքանչյուրին հատուկ արատներից...»

Հ. Ֆիներ

Հասարակական ինքնագիտակցությունը ներկայումս միտում ունի ակնհայտ բարդ հարցադրումների առավել լայն սահմաններ ներառելու, ինչը դրական որակ է հաղորդում պետական շինարարության մեջ սոցիալական բոլոր խավերի անհրաժեշտ մասնակցությունն ապահովելու տեսանկյունից: Սակայն մտահոգողն այն է, որ ինչպես քաղաքական, այնպես էլ իրավագիտական շրջանակներում հաճախ միևնույն չափանիշներով, մեթոդաբանությամբ և միևնույն հարթության վրա քննարկման առարկա են դարձել տեսական բարդությամբ միմյանցից էապես տարբերվող ինստիտուտներ ու իրավաքաղաքական երևույթներ, ինչի արդյունքում կարելի է ականատես լինել մի այնպիսի իրավիճակի, երբ խիստ բարդ հարցադրումներին տրվում է կամայական, հաճախ էլ՝ բացառապես դիլենտանտային (սիրողական) մոտեցում:

Վերը նշվածը հիմնավորելու համար, թերևս, անդրադառնանք իշխանությունների տարանջատման սահմանադրական սկզբունքին: Չարմանալիորեն շատերի մոտ այն թյուր կարծիքն է, որ դա պարզ ու դյուրըմբռնելի իրավական սկզբունք է, ինչի մասին է վկայում այն, որ իրավագիտության հետ քիչ թե շատ առնչություն ունեցող յուրաքանչյուր ոք համարձակ ու տարակարծություն չհանդուրժող տոնով փորձում է իր սպառնիչ տեսակետը ներկայացնել հիշյալ սկզբունքի առնչությամբ:

Նպատակահարմար չեն գտնում կոնկրետ անուններ նշել, քանզի տեսակետերը, որոնց կանդրադառնամ ստորև, ինչել են իրապարակայնորեն, մասամբ հանրաճանաչ են և, բացի այդ, խնդիրը բնավ մասնակի դեպքեր չեն: Մտահոգողը տվյալ դեպքում այն է, որ իշխանությունների տարանջատումը, ինչպես և շատ այլ կատեգորիաներ, ներ-

կայուն ակնհայտ պարզունակ ընկալումների տեղիք է տվել: Բավարար է նկատել միայն, որ իշխանությունների տարանջատումը նույնացվել է լիազորությունների տարանջատման հետ:

Չեմ բացառում, որ դա կարող է լինել սոսկ շփոթության հետևանք, սակայն, երբ ոչ բավարար պատրաստվածությունն ուղեկցվում է նաև կոնկրետ սուբյեկտիվ գործոններով ղեկավարվելու միտումով, արդյունքը, մեղմ ասած, բավարար չի կարող: Մասնավորապես, այն տպավորությունը կարելի է ստանալ, որ առանձին դեպքերում հատկապես ընդդիմադիր քաղաքական ուժերը փորձում են սահմանադրական դրույթների յուրօրինակ մեկնաբանություններով պարզապես ծախողել պետական շինարարության բնականոն ընթացքը, որպեսզի արհեստականորեն ձեռք բերեն իրենց քաղաքական հակառակորդներին ինչ-ինչ մեղադրանքներ ներկայացնելու հնարավորություն:

Այս ամենը չէր կարող այնքան մտահոգիչ լինել, եթե այդ նկատառումներով արտահայտված տեսակետերը հաճախ շփոթություն չառաջացնեին և իրենց աջակիցները չունենային նաև իրավագետների շրջանում: Կարծում եմ, որ վերջին դեպքում իրեն արդեն զգացնել է տալիս իրավագիտության ոլորտում տեսական բարդ հարցադրումների հետազոտության մեթոդաբանությանն առնչվող որոշ շեղումների առկայությունը: Սա ևս ունի իր բացատրությունը, իրավագիտությունն առավել սերտորեն է փոխկապակցված քաղաքականության հետ, ինչի արդյունքում դեռևս խորհրդային համակարգում իրավագիտության զարգացման միտումները կանխորոշվել են բացառապես երկրում իշխող քաղաքական գաղափարախոսությամբ: Ցավոք, խորհրդային իրավական համակարգին բնորոշ որոշ երևույթներ իներցիայի ուժով իրենց զգացնել են տալիս նաև մեր օրերում, ինչով էլ բացատրվում է քաղաքական գործիչների տեսակետերի նկատմամբ յուրահատուկ մոտեցումը:

Ինչևէ, փորձենք հնարավորինս համակարգված տեսքով ներկայացնել իշխանությունների տարանջատման և հավասարակշռման սահմանադրական սկզբունքի գիտագործնական ասպեկտները ու դրանց արդի դրսևորումները: Անհրաժեշտ է նաև նկատել, որ այս հարցի խորքային դրսևորումները համարժեքորեն պատկերացնելու համար հարկ է վերլուծել նաև այս սկզբունքի և սահմանադրականության ինստիտուտի փոխհարաբերության հարցը: Նախ, նկատենք, որ հաճախ սահմանադրականությունը մեկնաբանվում է, որպես «հասարակական հանդարտության» շահերով պայմանավորված պետական իշխանության սահմանափակում [1, Ծ. 20]: Կարծում եմ, որ այսպիսի բնորոշումները ծայրահեղականության տարրեր են բովանդակում և սոսկ միտված են ժողովրդավարության ինստիտուտները հնարավորինս «պատկերավոր» ներկայացնելուն, մինչդեռ զուտ գիտական չափանիշներով հարցի ուսումնասիրությանն անդրադառնալիս, պարզ է դառնում, որ այդ սահմանափակումները վերաբերում են ինչպես իշխանություններին, այնպես էլ, յուրաքանչյուր անձի: Այլ կերպ լինել չի

էլ կարող, քանզի Սահմանադրությունում առնվազն առկա են բազմաթիվ նորմեր, որոնք ֆիզիկական անձանց համար ուղղակիորեն սահմանում են պարտականություններ:

Ընդ որում, անձանց իրավունքների սահմանափակումները և ուղղված են, այսպես կոչված, «հասարակական հանդարտության» շահերի պաշտպանությանը, քանի որ չի կարելի խոսել այդ շահերի պաշտպանվածության մասին, եթե անձի իրավունքների և ազատությունների իրականացման համար չեն սահմանվում հստակ չափանիշներ: Այսինքն՝ դրանք կարող են սահմանափակվել, «եթե դա անհրաժեշտ է ժողովրդական հասարակությունում պետական անվտանգության, հասարակական կարգի պահպանման, հանցագործությունների կանխման, հանրության առողջության ու բարոյականության, այլոց սահմանադրական իրավունքների և ազատությունների, պատվի և բարի համբավի պաշտպանության համար» (ՀՀ Սահմանադրության 43-րդ հոդվածի 1-ին մաս):

Այսպիսով, սահմանադրականության գաղափարն անխուսափելիորեն ենթադրում է ինչպես պետական իշխանության, այնպես էլ՝ անձերի իրավական հնարավորությունների սահմանափակման անհրաժեշտություն:

Ինչու՞ ենք այս հարցադրմանն անդրադառնում: Խնդիրն այն է, որ իշխանությունների սահմանափակման բացարձակականության վերաբերյալ պատկերացումները, ինչի մասին խոսվեց վերևում, գործնականում ուղեկցվում են այնպիսի թյուր եզրահանգումներով, ըստ որոնց իշխանությունների տարանջատման սկզբունքը բացարձակ իրավաքաղաքական կատեգորիա է և «չի հանդուրժում» իշխանության որևէ ճյուղի կողմից իշխանության մեկ այլ ճյուղին բնորոշ գործառույթների իրականացում:

Փորձենք խնդիրը դիտարկել հենց նույն իշխանությունների տարանջատման սկզբունքի պահպանման զուտ օբյեկտիվ անհրաժեշտության տեսանկյունից: Մասնավորապես, փորձենք պատասխանել հետևյալ հարցին, կարո՞ղ է, արդյոք, դատական իշխանության որևէ մարմին իր բնականոն գործունեությունն իրականացնել առանց գործադիր իշխանությանը բնորոշ որոշ գործառույթների: Այս հարցին իմ պատասխանը բացասական է. չի կարող: Առաջադրենք հաջորդ հարցը, տվյալ դեպքում դատական իշխանության կողմից գործադիր իշխանության տարրեր պարունակող գործառույթներ իրականացնելը չի՞ հանդիսանում, արդյոք, իշխանությունների տարանջատման սկզբունքի խախտում: Այս հարցին ևս իմ պատասխանը բացասական է. չի հանդիսանում:

Վերը նշված դիրքորոշումը հիմնավորելու համար կարելի է բազմաթիվ օրինակներ բերել: Այսպես, Հայաստանի Հանրապետության Դատական օրենսգրքում առկա են դատարանների նախագահներին, արդարադատության խորհրդին, արդարադատության խորհրդի անդամներին վերապահված այնպիսի լիազորություններ, որոնք առ-

երևույթ որևէ առնչություն չունեն դատական իշխանության հետ և միանշանակ պարունակում են գործադիր իշխանության տարրեր¹: Վերջին հաշվով, պետական յուրաքանչյուր մարմնի բնականոն գործունեությունն ապահովելու համար, անկախ այն հանգամանքից, թե իշխանության որ ճյուղին է այն պատկանում, անհրաժեշտություն է առաջանում դրան կամ դրա համապատասխան պաշտոնատար անձանց վերապահելու գործադիր իշխանությանը բնորոշ այնպիսի լիազորություններով, որոնք վերաբերում են, ասենք, դիմումների, առաջարկությունների քննարկմանը, ընդհանուր վարչարարությամբ պայմանավորված հարցերի լուծմանը (կենսաթոշակի նշանակում, արձակուրդի տրամադրում) և այլն: Այլ կերպ ասած, հիշյալ պաշտոնատար անձինք ոչ թե իրականացնում են հակասահմանադրական գործունեություն, այլ սոսկ ապահովում են իրենց առջև դրված խնդիրների լուծումը:

Միաժամանակ, հարկ է նկատել, որ վերը նշված բացառությունը վերաբերում է միայն գործադիր իշխանությանը, քանզի ՀՀ Սահմանադրությունն օրենսդիր և դատական իշխանության իրականացումը միանշանակ վերապահել է հատուկ դրա համար ստեղծված մարմինների:

Այն, որ ՀՀ Սահմանադրությունը չի բացառում գործադիր իշխանության տարրեր պարունակող որոշ գործառույթների իրականացումն ևս այլ պետական մարմինների կողմից, հիմնավորվում է մի շարք դրույթներով: Այսպես, Սահմանադրության 5-րդ գլուխը նվիրված է գործադիր իշխանությունը ներկայացնող մարմնի՝ Հայաստանի Հանրապետության կառավարության կազմավորմանն ու գործունեությանը: Սակայն հենց այդ գլխում հստակ ամրագրված է հետևյալ դրույթը. «Կառավարության իրավասությանն են ենթակա պետական կառավարման բոլոր այն հարցերը, որոնք օրենքով վերապահված չեն այլ պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինների»: Սա ուշագրավ վերապահում է, ինչից ուղղակիորեն բխում է, որ կառավարությունը գործադիր իշխանության *հիմնական*, բայց ոչ միակ կրողն է:

Հարկ է նկատել նաև, որ վերը նշված պատկերացումներին մեծ չափով նպաստել է նաև հայրենական սահմանադրականության շարադրանքի ակնհայտ ծայրահեղական ոճը, ինչը բնորոշ է այն դեպքերին, երբ ժողովրդավարության չափանիշներ որդեգրած նորանկախ պետությունները փորձում են հնարավորինս շեշտադրված ամրագրել իրենց դիրքորոշումը նույն այդ չափանիշներին: Իսկ երբ դրան ավելանում է քաղաքական հակամարտության շրջանակներում որոշակի քաղաքական վարկանիշ ձեռք բերելու համար անհարկի զիջումների գնալու երևույթը, ապա պատկերը դառնում է ամբողջական:

¹ Այդպիսիք են՝ հիշյալ օրենսգրքի 61-րդ հոդվածի 3-րդ մասի 4-6-րդ կետերով, 73-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետով ամրագրված լիազորությունները: Վերջին հաշվով, այդպիսի լիազորությունների առկայության մասին է խոսում, այսպես կոչված, դատական իշխանության ինքնակառավարման մարմինների ինստիտուտի գոյությունը:

Այսպես, գրեթե ոչ մի երկրի հիմնական օրենքում չեք կարող հանդիպել իրավանորմի, որը համահունչ լիներ Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 2-րդ հոդվածում ամրագրված հետևյալ դրույթին. «Ժողովուրդն իր իշխանությունն իրականացնում է ազատ ընտրությունների, հանրաքվեների, ինչպես նաև *Սահմանադրությամբ նախատեսված* (ընդգծումը մերն է) պետական և տեղական ինքնակառավարման մարմինների և պաշտոնատար անձանց միջոցով»: Ընդհանուր առմամբ սահմանադրական կարգի բնորոշման համար նշված հիմնադրումն առանցքային նշանակություն ունի և այն ընդհանուր գծերով համապատասխանում է նաև իրավունքի միջազգային սկզբունքներին: Սակայն անհասկանալի է այն, թե ինչու վերը նշված մարմինները պետք է բացառապես նախատեսված լինեն Սահմանադրությամբ: Համեմատության համար նկատենք, որ ինչպես Վրաստանի, այնպես էլ Ադրբեջանի Սահմանադրությունների նույնաբովանդակ հոդվածները նախապատվությունը տվել են «Սահմանադրությամբ և օրենքներով սահմանված» ձևակերպմանը [2]:

Սակայն անգամ վերը նշված ձևակերպումներն իրավական խոչընդոտ չեն օրենքով ստեղծված պետական մարմինների գործունեությունն իրավաչափ համարելու համար: Տվյալ դեպքում նկատի ունենք այն, որ «նախատեսում» եզրույթը չի կարող նույնացվել «թվարկում» եզրույթի հետ, ինչպես սխալմամբ փորձ է արվում ներկայացնելու: Սահմանադրությամբ նախատեսելը, ցավոք, երբեմն ընկալվում է այն կտրվածքով, որ կոնկրետ պետության հիմնական օրենքով պետք է թվարկված լինի այս կամ այն պետական մարմինը, մինչդեռ՝ նախատեսել, նշանակում է իրավաչափորեն սահմանել պետական այնպիսի մարմնի կազմավորում և գործունեություն, որը բխում է բուն Սահմանադրության հիմնադրույթներից: Այլ կերպ ասած, եթե Սահմանադրությամբ ամրագրված է դրույթ, որի համաձայն, օրինակ՝ պետական կառավարման գործառույթներ կարող են իրականացնել նաև օրենքով նախատեսված պետական այլ մարմիններ, ապա նշանակում է, որ այդպիսով նախատեսվում է նմանաբնույթ պետական մարմնի ստեղծում:

Իշխանությունների տարանջատման սկզբունքի վերաբերյալ վերը նշված պարզունակ մոտեցումները մասամբ պայմանավորված են այդ սկզբունքի բուն կոչման, առաքելության վերաբերյալ ոչ համարժեք տեսակետներով: Վերջին հաշվով, հարկ է նկատել, որ հիշյալ սկզբունքի մեկնակետը դրսևորվում է ոչ թե այս կամ այն գործառույթը բացառապես որոշակի տեսակի պետական մարմինների կողմից իրականացնելու, որքան որոշակի տեսակի իշխանություն իրականացնող պետական մարմինների համակարգի կողմից գործունեության ինքնուրույնությունն ապահովելու, անհարկի միջամտությունները բացառելու և անհրաժեշտ հավասարակշռությունն ապահովելու պահանջի մեջ: Բնականաբար, ինչպես արդեն նշվեց, օրենսդիր և դատական իշխանության պարագայում, առանձնահատկությունն այն է, որ այդ իշխանության տեսակները կարող են բացառապես իրականացնել միայն հատուկ

դրա համար ձևավորված պետական մարմինները, սակայն նույնիսկ այդ դեպքում Սահմանադրությունը սոսկ ամրագրում է սկզբունքային նորմերը կամ տվյալ տեսակի պետական մարմինների համակարգի հիմնադրույթները, հնարավորություն ընձեռելով ընթացիկ օրենսդրական ակտերով կատարելու անհրաժեշտ իրավական կարգավորումներ:

Այսպես, ՀՀ Սահմանադրության 92-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն. «Հայաստանի Հանրապետությունում գործում են ընդհանուր իրավասության առաջին ատյանի, վերաքննիչ դատարանները և վճռաբեկ դատարանը, իսկ *օրենքով նախատեսված դեպքերում* (ընդգծումը մերն է) նաև մասնագիտացված դատարանները»: Այլ կերպ ասած, անգամ դատական իշխանության պարագայում ՀՀ Սահմանադրությունն ամբողջական տեսքով չի թվարկում դատական բոլոր մարմինները, այլ որոշակի հնարավորություն է ամրագրում, որպեսզի այդ հարցը կանոնակարգվի հստակ օրենքով: Այսինքն՝ սա ևս *սահմանադրությամբ նախատեսելու* ընթացակարգի մի ինքնուրույն տարբերակ է, ինչին անդրադարձանք վերևում:

Իշխանությունների տարանջատման սկզբունքի հետ առնչվող մի կարևոր հարցադրում ևս. արդյո՞ք յուրաքանչյուր պետական մարմին պարտադիր կարգով պետք է պատկանի այս կամ այն իշխանության ճյուղին: Այս հարցին գիտագործնական և քաղաքական շրջանակներում միանշանակ դրական պատասխան են տալիս, ավելին, խիստ զարմանում են՝ հարցնելով, թե ինչպե՞ս կարելի է պատկերացնել պետական մարմիններ, որոնք դուրս լինեն իշխանության այս կամ այն ճյուղի համակարգից, և, արդյո՞ք, դա չի խաթարում իշխանությունների տարանջատման սկզբունքը:

Չանդրադառնալով նշված սկզբունքի բովանդակային տարրերի հանգամանակից վերլուծությանը՝ նկատենք միայն, որ այն բաղկացած է նվազագույնը երկու՝ իշխանության տարանջատման և դրանց հավասարակշռության պահանջներից: Ընդ որում, այդ պահանջներից և ոչ մեկը չի բացառում իրավիճակ, երբ կլինեն առանձին պետական մարմիններ, որոնք չեն պատկանի իշխանության երեք ճյուղից և ոչ մեկին: Նախ՝ մենք հղում կատարեցինք ՀՀ Սահմանադրության 85-րդ հոդվածը և շեշտեցինք այն մոտեցումը, որ գործադիր իշխանության գործառույթներ կարող է իրականացնել ոչ միայն Հայաստանի Հանրապետության կառավարությունը: Սակայն, եթե մենք այդ խնդրին անդրադառնանք մեկ այլ տեսանկյունից (ընդգծելու համար, որ իշխանական գործառույթներ կարող են իրականացնել նաև այլ՝ օրենքի հիման վրա ստեղծված մարմիններ), ապա այս դեպքում կարևոր ենք համարում ընդգծել հետևյալ եզրահանգումը՝ սահմանադրությունը չի բացառում իշխանության որևէ ճյուղի մեջ չմտնող պետական մարմնի գործունեություն: Ավելին, այն անհրաժեշտ է համարում այդպիսի իրավիճակը, հատկապես, երբ խոսք է գնում իշխանությունների հավասարակշռման սահմանադրական սկզբունքի մասին:

Ընդ որում, գործնականում ևս վերը նշված եզրահանգումը իր համարժեք արտացոլումն է գտել: Այսպես, օրինակ, մեր երկրի դատախազությունը չի կարելի անվերապահորեն դասել իշխանության որևէ ճյուղին, և տվյալ դեպքում որևէ իրավական նշանակություն չունի այն, որ վերջինիս վերաբերյալ նորմերը գետեղված են ՀՀ Սահմանադրության «Ռատական իշխանությունը» վերտառությամբ 6-րդ գլխում, քանի որ հենց այդ գլխի նորմերի վերլուծությունը ցույց է տալիս, որ դատական իշխանության միջուկը կազմող գործառույթը՝ արդարադատությունը, կարող են իրականացնել միայն դատարանները (ՀՀ Սահմանադրության 91-րդ հոդված): Ընդ որում, հատկապես դատախազության հարցում խիստ իրարամերժ են ձևավորված տեսակետերը, քանի որ մի մասն էլ գտնում է, որ այն բացառապես պատկանում է գործադիր իշխանությանը [3, Ծ. 7-11]:

Վերը նշված, ըստ էության, անպտուղ ու անվերջանալի բանավեճերը կշարունակվեն այնքան ժամանակ, քանի դեռ ելակետ չենք ընդունել այն, որ կան և հետագայում էլ կլինեն պետական մարմիններ, որոնք չեն պատկանի իշխանության որևէ ճյուղին: Իսկ այն հարցին, թե ի՞նչ խնդիրներ են լուծում այդ մարմինները, կարող ենք պատասխանել, որ վերջիններս իրենց լիազորությունների սահմաններում իրականացնում են առանձնահատուկ գործառույթներ և կոչված են երաշխավորելու անձանց սահմանադրական իրավունքներն ու ազատությունները, ինչպես նաև ապահովելու իշխանությունների հավասարակշռման սկզբունքի բնականոն կիրառումը:

Իշխանությունների տարանջատման սկզբունքի վերաբերյալ մեր օրերում դեռևս հանդիպող չափազանց կարծր տեսակետերը, իմ կարծիքով, պայմանավորված են նաև որոշակի պատմափիլիսոփայական նախադրյալներով: Խնդիրն այն է, որ այդ սկզբունքի տեսական հիմնադիրները՝ Ջոն Լոքը և Շարլ Լոփ Մոնտեսքյոն, չէին էլ կարող նախատեսել որոշակի ճկունություն ու վերապահումներ, քանի որ սկզբունքի ձևավորման պատմական ժամանակահատվածում պետական ապարատը դեռևս չուներ ներկայիս բարդ համակարգը, իսկ ներկայումս գործող որոշ առանձնահատուկ պետական մարմիններ կամ ընդհանրապես գոյություն չունեին (ինչպես, օրինակ՝ դատախազությունը, մարդու իրավունքների պաշտպանը, գործադիր իշխանության գործառույթներ իրականացնող տարաբնույթ անկախ հանձնաժողովները և այլն), կամ դեռևս անվերապահորեն ընդգրկված էին այս կամ այն իշխանության ճյուղի մեջ և օժտված չէին առանձնահատուկ գործառույթներ իրականացնելու իրավական հնարավորությամբ [4, Ծ. 312-318, 333-339]:

Ցավոք, երբեմն պատմականորեն ձևավորված որոշ տեսությունների նկատմամբ մենք դրսևորում ենք զուտ դոգմատիկ մոտեցում, ինչի արդյունքում ինքներս մեզ զրկում ենք ներկայիս իրողություններին համարժեք գնահատական տալու հնարավորությունից: Մինչդեռ, առավել տրամաբանական է յուրաքանչյուր դեպքում ոչ թե ղեկավարվել

դոգմատիկ մեթոդաբանությամբ, այլ, անվերապահորեն պահպանելով յուրաքանչյուր տեսության բուն էությունը, փորձել այն համապատասխանեցնել արդի գիտական ձեռքբերումներին և հիմնախնդիրների համարժեք լուծման պահանջներին:

Ի դեպ, պատմականորեն ձևավորված տեսությունների նկատմամբ անհարկի դոգմատիկ մոտեցումները դեռևս անցյալ դարի սկզբներին են քննադատության ենթարկվել մի շարք իրավագետների կողմից: Բնորոշ է, հատկապես, իրավունքը հանրային և մասնավոր հատվածների ստորաբաժանելու վերաբերյալ Հին Հռոմեական տեսության առնչությամբ ձևավորված գաղափարախոսությունը, ինչին ժամանակին հանգամանորեն անդրադարձել է ռուս դասական իրավագետ Ի. Պոկրովսկին [5]:

Չպետք է անտեսել նաև այն, որ տարբեր իրավական համակարգեր ունեցող երկրների օրենսդրությունում ևս կարելի է հանդիպել, այսպես կոչված, իրավունքի հիմնարար սկզբունքների որոշ տարընթերցումների, ինչը ևս վկայում է վերը նշված մեթոդաբանության խոցելիության մասին:

Կարծում ենք, որ իշխանությունների տարանջատման սկզբունքի բնույթը համարժեքորեն պատկերացնելու համար, հարկ է ելակետ ընդունել մեկ այլ չափանիշ ևս. իշխանության յուրաքանչյուր ճյուղի հիմնական, վճռորոշ, առավել բնորոշ գործառույթները կարող են վերապահվել բացառապես մեկ պետական մարմնի կամ նույնաբնույթ պետական մարմինների համակարգին, իսկ մյուս մարմինները կարող են օժտված լինել միայն ածանցյալ բնույթի, ոչ էական լիազորություններով:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. **Шайо А.**, Самоограничение власти (краткий курс конституционализма), перевод с венгерского, Москва, Юристь, 1999.
2. Конституции Азербайджана, Армении и Грузии, Ереван, GTZ, 2007.
3. **Ястребов В. Б.**, Прокурорский надзор., М., Городец издат, 2001.
4. **Азаркин Н.М.**, Всеобщая история юриспруденции, Курс лекций, М., Юрид. лит., 2003, ст. 312-318 и 333-339:
5. **Покровский И.А.**, Основные проблемы гражданского права. М., Статут, (в серии «Классика российской цивилистики»), 1998.

GEVORG DANIELYAN

*Minister of Justice of the RA,
Doctor of Sciences (Law), Professor*

**THE ISSUES OF UNDERSTANDING OF THE
PRINCIPLE OF POWER SEPARATION**

In the article the author examines scientific practical aspects of constitutional principle of separation and balance of powers and their modern manifestations. Particularly, the Armenian case is considered in the article. Also, comparisons are made with the ancient and modern approaches of other authors and countries. The author concludes that it is necessary to accept as a starting point other criteria as well: main functions of each branch of power can be given to one public authority or the system of public authorities, other authorities can be delegated of powers of minor importance.

ՌՈՒԶԱՆՆԱ ՀԱՎՈՐՅԱՆ

*Գավառի պետական համալսարանի ռեկտոր,
իրավաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ,
ՀՀ ՊԿԱ դոկտորանտ*

**ԱՐԴԱՐՈՒԹՅՈՒՆԸ՝ ՈՐՊԵՍ ԻՐԱՎՈՒՆՔԻ
ՀԻՄՆԱՐԱՐ ՍԿՁԲՈՒՆՔ**

Իրավունքը մարդկային քաղաքակրթության մեծագույն նվաճումներից է: Դեռևս Հին Հռոմում իրավունքը սահմանվել է որպես «բարու և արդարության արվեստ»¹: Արդարությունն իրավունքի կարևորագույն սկզբունքներից մեկն է²:

Ինչպես նշում է Վ. Ս. Ներսիսյանցը, «Իրավունքն իր էությամբ պետք է արդարացի լինի, իսկ արդարությունը պետք է ներառվի իրավունքի հասկացության մեջ՝ որպես վերջինիս ներքին, որակական հատկանիշ: Արդարությունը հանդիսանում է իրավական և ոչ թե արտաիրավական կատեգորիա: Ուստի, երբ հարցադրում է լինում օրենքի արդարացիության կամ անարդարացիության մասին, ապա, ըստ էության, պետք է պարզել, թե օրենքը իրավական է, թե ոչ: Ի տարբերություն օրենքի՝ իրավունքը միշտ արդարացի է և հանդիսանում է սոցիալական կյանքում արդարության կրողը» [1, c. 28]: «Իրավունքի առջև ծառայած հիմնական խնդիրն արդարության սկզբունքի իրականացումն է,- գտնում է Դ. Լլոյդը, - իրավունքը կոչված է մարմնավորելու արդարությունը և ծառայելու արդարության հաստատման նպատակին» [2, c. 132-133]:

Արդարության, ազատության և հավասարության գաղափարներն արտահայտվել են հույն փիլիսոփաների բնական-իրավական հայացքներում, զարգացել Հին Հռոմում, ապա միջնադարում՝ արևմտաեվրոպական մտածողների կողմից, այնուհետև նոր իմաստ ու բովանդակություն ստացել քրիստոնեական մշակույթի շնորհիվ և այսօր էլ շարունակում են հարստանալ ժամանակակից քաղաքակրթական համակարգերում:

«Արդարություն» հասկացությունը դրսևորվում է նաև որպես արդարադատություն: Հունական դիցաբանության մեջ պատահական չեն արդարադատության աստվածուհի Թեմիսի խորհրդանիշերը (աչքերի կապը, կշեռքը, արդարադատության սուրը), որոնք հստակորեն ար-

¹ «Jus est ars boni et aequi»:

² Սույն հոդվածում կփորձենք արդարության սոցիալական, բարոյական, քաղաքական, կրոնական, իրավական և այլ ըմբռումների մեջ առանձնացնել իրավական արդարության սկզբունքը:

տահայտում են հասարակության պատկերացումներն անկողմնակալության, անաչառության, արդարության մասին: Ինչպես նշում է Ա. Մատյուխինը, «Արդարադատությունը ծնվել է սոցիալական պահանջից՝ ունենալու «անկողմնակալ երրորդ կողմ», որն ի գորու լինի սոցիալական բախումները վերափոխելու մրցակցության և դրանց արդարացի լուծում տալու որոշակի դատավարական կարգով ու ձևով» [3, c. 440]:

Վերջին տարիներին «արդարություն» հասկացությունն ավելի հաճախ է հանդիպում Հայաստանի Հանրապետության օրենսդրության մեջ, դատական մարմինների որոշումներում: Այսպես, ՀՀ Սահմանադրության II գլուխը, ի թիվս մարդու և քաղաքացու այլ հիմնական իրավունքների ու ազատությունների, 19-րդ հոդվածում սահմանում է. «Յուրաքանչյուր ոք ունի իր խախտված իրավունքները վերականգնելու, ինչպես նաև իրեն ներկայացված մեղադրանքի հիմնավորվածությունը պարզելու համար հավասարության պայմաններում, արդարության բոլոր պահանջների պահպանմամբ¹, անկախ և անկողմնակալ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում իր գործի հրապարակային քննության իրավունք»: Այս սկզբունքն ամրագրվել է նաև ՀՀ Դատական օրենսգրքի 7-րդ հոդվածի 2-րդ մասում²: Գործի արդարացի քննության սահմանադրական պահանջը՝ որպես քրեական դատավարության և, մասնավորապես, քրեական գործի դատական քննության կարևորագույն սկզբունք, ամրագրվել է ՀՀ Քրեական դատավարության օրենսգրքում (17-րդ հոդված):

«Արդարություն» հասկացությունը հիշատակվում է ՀՀ Քրեական օրենսգրքի ընդհանուր մասի չորս հոդվածներում: Նախ՝ 4-րդ հոդվածում քրեական օրենսդրության սկզբունքների շարքում հիշատակվում է արդարության և պատժի անհատականացման հույժ կարևոր սկզբունքը, ապա՝ 10-րդ հոդվածում բացահայտվում է այդ սկզբունքի էությունը, ըստ որի՝ հանցանք կատարած անձի նկատմամբ կիրառվող պատիժը և քրեաիրավական ներգործության այլ միջոցները պետք է լինեն արդարացի, այսինքն՝ համապատասխանեն հանցանքի ծանրությանը, հանցագործության կատարման հանգամանքներին, հանցավորի անձնավորությանը, անհրաժեշտ և բավարար լինեն նրան ուղղելու ու նոր հանցագործությունները կանխելու համար: Քրեական օրենսգրքի 48-րդ հոդվածի 2-րդ մասում՝ որպես պատժի առաջնային նպատակ, նախատեսվել է սոցիալական արդարության վերականգնումը: Իսկ 61-րդ հոդվածի 1-ին մասում՝ որպես պատիժ նշանակելու ընդհանուր սկզբունք, սահմանված է արդարացի պատժի նշանակման ելակետային պահանջը:

ՀՀ Քաղաքացիական օրենսգիրքը նույնպես դրույթներ է բովանդակում արդարության մասին: Մասնավորապես, օրենսգրքի 467-րդ հոդվածի 3-րդ մասում սահմանվում է, որ հանգամանքների էական փո-

¹ Այս և մյուս ընդգծումները մերն են – Ռ. Հ.:

² ՀՀ Դատական օրենսգիրքը ընդունվել է 2007 թ. փետրվարի 21-ին:

փոխության հետևանքով պայմանագիրը լուծելիս դատարանը ցանկացած կողմի պահանջով որոշում է դրա հետևանքները՝ ելնելով այդ պայմանագիրը կատարելու կապակցությամբ կողմերի կրած ծախսերը նրանց միջև արդարացի բաշխելու անհրաժեշտությունից:

Նորմատիվ ակտերում, ինչպես նաև իրավաբանական գրականության մեջ, արդարության՝ որպես իրավունքի ընդհանուր սկզբունքի հաճախակի օգտագործումը պահանջում է վերջինիս իմաստի բացահայտում: Հատկանշական է, որ տարբեր հեղինակներ այլ կերպ են ընկալում և մեկնաբանում արդարության սկզբունքը: Օրինակ՝ Արիստոտելը «Էթիկա» աշխատությունում տարբերակել է երկու տեսակի արդարություն՝ որպես իրավաբանական կատեգորիա և համաչափության կամ հավասարաչափության իմաստ կրող հատուկ հասկացություն: Արիստոտելն արդարությունը՝ որպես իրավաբանական կատեգորիա, հավասարեցրել է օրինականությանը: Համապատասխանաբար օրենքի խախտումը նա դիտել է որպես անարդարության առաջին դրսևորում: Ի տարբերություն իրավաբանական արդարության՝ հատուկ արդարությունը համարել է մարդկանց միջև բարիքների, փողի և ընդհանրապես այն ամենի բաշխման համաչափությունը, ինչը հնարավոր է բաժանել մարդկանց միջև [4, c. 13]:

Արդարությունը որակվել է որպես «հիմնական բարոյական արժեք» (Պլատոն), «յուրաքանչյուրին փոխհատուցում՝ ըստ արժանվույն» (Ցիցերոն), «մարդկանց կյանքի արժեք» (Է. Կանտ), «հանապազօրյա հացին համարժեք անհրաժեշտություն» (Լ. Բյորնս), «ճշմարտություն գործողության մեջ» (ժուլեր) [5, c. 119] և այլն:

Հռոմեական դասական իրավունքի համակարգում արդարությունը համարվել է «անփոփոխ և մշտական կամք՝ յուրաքանչյուրին հատուցելու ըստ իր արժանիքների և վաստակի»: Արդարության ընկալումը՝ որպես յուրաքանչյուրին հատուցում, ըստ արժանվույն ամրագրվել է նաև Հուստինիանոսի օրենսգրքում: Մեկնաբանելով Հուստինիանոսի օրենսգիրքը՝ Ուլպիանը գրում է, որ անհատների և պետության միջև հարաբերություններում արդարության հիմքը և չափանիշը իրավունքն է և ոչ թե պետությունը: Հետևաբար, պետությունը պետք է վերաբերվի անհատներին ոչ թե իր սեփական հայեցողությամբ ու կանոններով, այլ որպես օրինապահ սուբյեկտ՝ իրավունքի համապարտադիր պահանջներին համապատասխան պետք է վերաբերվի հանրությանը [6]:

Ըստ Բլեզ Պասկալի՝ արդարությունն առանց ուժի անզորություն է, ուժն առանց արդարության՝ բռնակալություն, ուստի անհրաժեշտ է արդարությունը զուգորդել ուժի հետ և հասնել նրան, որ արդարությունն ուժեղ լինի, իսկ ուժը՝ արդարացի [7, c. 130, 286]:

«Արդարություն» հասկացությունը մանրամասն վերլուծել է XIX դարի գերմանացի ճանաչված իրավաբան Ռ. Հիերինգը իր «Նպատակը իրավունքում» աշխատության մեջ: Նա արդարությունը համարել է հասարակության շահերով պայմանավորված և այդ շահերին համապատասխանող «հավասարակշռություն արարքի և այդ արարքը կատա-

րած անձի համար առաջացած հետևանքների, այսինքն՝ չար գործի և պատժի, բարի գործի և հատուցման միջև»: Արիստոտելից հետո Ռ. Հիերինգն է հռչակել, որ «դատավորի որոշումը մենք կոչում ենք արդարացի»՝ հստակեցնելով, որ «արդարություն հասկացությունը հիմնվում է իրավունքում հավասարության սկզբունքի վրա» [8, c. 14]:

Հանրագիտարանային բնորոշմամբ՝ արդարությունն այնպիսի կատեգորիա է, որը «բովանդակում է տարբեր անհատների (սոցիալական խմբերի) իրական նշանակության և նրանց սոցիալական վիճակի, նրանց իրավունքների ու պարտականությունների, արարքի և դրա համար հատուցման, աշխատանքի և պարգևատրման, հանցագործության ու պատժի միջև համապատասխանության պահանջ: Այս և նմանատիպ փոխառնչակցություններում ու հարաբերություններում անհամապատասխանությունը գնահատվում է որպես անարդարություն» [9, c. 11262]:

Փիլիսոփայական ըմբռնմամբ՝ արդարությունը բարոյականության նորմատիվ հասկացությունն է, որը գնահատում է ոչ թե որևէ երևույթ ամբողջության մեջ, այլ մի քանի երևույթների հարաբերակցությունը՝ մարդկանց մեջ բարիքի ու չարիքի բաշխման տեսակետից... [10, էջ 38]:

Այսպիսով, սոցիալական արդարության հիմնական պահանջը կարելի է ձևակերպել հետևյալ կերպ. «ուղղակի գործառույթային կախվածության ստեղծում այն ամենի միջև, որ առանձին սուբյեկտը տալիս է հասարակությանը և ստանում հասարակությունից» [11, c. 112]:

Արդարությունը սահմանելիս օրինաչափորեն նշվում է հավասարության սկզբունքը: Սոցիալական հավասարությունն արդարության բաղկացուցիչ մասերից մեկն է: Արդարությունը կայանում է ոչ միայն հավասարության, այլև «համապատասխան իրավիճակների և ճիշտ, պրոգրեսիվ անհավասարության մեջ» [8, c. 16]: Օրինակ՝ գույքային բնույթի միանման իրավական միջոցի կիրառումը սոցիալապես ապահով և անապահով անձանց նկատմամբ՝ իրավաբանական առումով նրանց միատեսակ արարքների համար, դիտվում է անարդարացի ցանկացած սոցիալական համակարգի պայմաններում: Եվ, ընդհակառակը, միասնական իրավական մասշտաբի կիրառումը ոչ միայն իրավական, այլև սոցիալական, տնտեսական առումներով հավասար մարդկանց արարքների համար սկզբունքորեն հնարավոր է և արդարացի: Սակայն մարդիկ անխուսափելիորեն անհավասար են իրենց ֆիզիկական ու մտավոր ընդունակություններով, ընտանեկան և նյութական վիճակով, այլ հատկանիշներով և, որպես դրա հետևանք, անհավասար են նաև իրենց նյութական ու մշակութային պահանջների բավարարման մակարդակով [12, էջ 65-73]:

Այսպիսով, միևնույն միջոցի կիրառումը տարբեր անձանց նկատմամբ հանգեցնում է բուրդովին տարբեր ազդեցության, ուստի տարբեր սուբյեկտների արարքների նկատմամբ ոչ միայն դյուրին չէ, այլև անհրաժեշտ էլ չէ կիրառել միասնական միջոց: Ինչպես նշում է Ա. Ի. Իլյինը, արդարությունը նշանակում է, որ իրավանորմերը չպետք է սահմանեն միատեսակ պարտականություններ երեխայի և մեծահասակի, ունե-

գուրկի և հարուստի, առողջի և հիվանդի համար [13, Բ. 92-93]: Իրավա-
նորմերի պահանջները պետք է համաչափ լինեն մարդկանց հնարավոր-
ություններին և կարողություններին: Արդարությունը հասարակական
հարաբերությունների իրավական կարգավորման ելակետային պա-
հանջ է նաև որոշակի իրավաբանական գործեր լուծելիս (օրինակ՝
նպաստի չափը որոշելիս, կենսաթոշակ նշանակելիս, քրեական պատ-
ժի տեսակը որոշելիս և այլն) [14, Բ. 72]: Արդարության սկզբունքը նշա-
նակում է իրավունքի՝ որպես վարքագծի հավասարաչափ մասշտաբի
ճիշտ կիրառում և կատարված իրավախախտման ու իրավաբանական
պատասխանատվության միջև խիստ համաչափության ապահովում
[15, Բ. 297]:

Արդարությունը իրավաբանական պատասխանատվության ելակե-
տային սկզբունքներից է, ըստ որի՝ իրավախախտի նկատմամբ կիրառ-
վող պատասխանատվության միջոցները պետք է համապատասխանեն
կատարված իրավախախտման բնույթին ու հասարակական վտանգա-
վորության աստիճանին: Որքան հանրորեն վտանգավոր է տվյալ իրա-
վախախտումը, որքան մեծ վնաս է հասցվել հասարակական հարաբե-
րությունների սահմանված կարգին, այնքան լուրջ պետք է լինեն իրա-
վախախտի նկատմամբ կիրառվող պատասխանատվության միջոցնե-
րը և հակառակը: Մյուս կողմից, օրենքը պետք է նախատեսի պատաս-
խանատվության անհատականացման հնարավորություն յուրաքան-
չյուր կոնկրետ դեպքում՝ պայմանավորված իրավախախտման կա-
տարման փաստացի հանգամանքներով, իրավախախտի անձով: Որոշ
հեղինակներ կարծիք են հայտնել, որ կատարված իրավախախտման
ծանրությունը պետք է հաշվի առնվի միայն «պատժական» պատաս-
խանատվություն կիրառելիս [16, Բ. 245], [17, Բ. 144]: Կարծում ենք, որ
նման դիրքորոշումն այնքան էլ ճիշտ չէ: Գտնում ենք, որ պատասխա-
նատվության փոխհատուցման միջոցները կիրառելիս ևս արտահայտ-
վում է կապը պատճառված վնասի չափի և կիրառվող պատասխա-
նատվության միջոցների չափի միջև: Բացի այդ, Հայաստանի Հանրա-
պետության քաղաքացիական օրենսդրությամբ նախատեսված է պա-
տասխանատվության միջոցներ (այդ թվում և վնասի փոխհատուցման
ծևով) կիրառելիս պարտապանի պատասխանատվության չափի նվա-
զեցման հնարավորություն՝ կախված պարտատիրոջ մեղքից, այսինքն՝
պատասխանատվության փոխհատուցման (կոմպենսացիոն) միջոցնե-
րը, ինչպես և «պատժական» միջոցները կիրառվում են իրավախախտ-
ման կատարման փաստացի հանգամանքների հաշվառմամբ:

ՀՀ Սահմանադրության 17-րդ հոդվածը սահմանում է, որ ոչ ոք
չպետք է ենթարկվի խոշտանգումների, ինչպես նաև անմարդկային
կամ նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի: Միջազգային դաշ-
նագրերով ևս արգելվում է դաժան, մարդկային արժանապատվությու-
նը նվաստացնող պատիժների կիրառումը: Պատասխանատվությունն
ու պատիժը պետք է համապատասխանեն իրավախախտման բնույթին
և հասարակական վտանգավորության աստիճանին: Պատասխանատ-

վության բոլոր մյուս սկզբունքների լիարժեք իրականացման դեպքում անգամ պատասխանատվությունը կլինի անարդարացի, եթե իրավախախտը ենթարկվի չափազանց խիստ կամ չափազանց մեղմ պատժի: Այսինքն՝ արդարացի պատասխանատվության հիմքում ընկած է օրենսդրի կողմից իրավախախտման և դրա համար պատժի համաչափության սկզբունքի պահպանումը: Իրավաբանական պատասխանատվության արդարության սկզբունքին համապատասխան՝ պատիժները չպետք է լինեն ինքնանպատակ կամ հակասեն սոցիալապես օգտակար և ընդունելի արժեքնորմատիվային համակարգին: Օրինակ, եթե կողոպուտի կամ ավազակային հարձակման համար սուբյեկտները պատժվեն հավասարաչափ կամ ավելի խիստ, քան սպանության համար, ապա դա կնշանակի, որ մարդկային կյանքը հավասարեցվում (կամ անգամ՝ ստորադասվում - Ռ. Յ.) է գույքային արժեքներին, ընդ որում՝ կխթանվի տուժողի, ականատեսների սպանությունը՝ վկայից «ազատվելու», հանցագործության հետքերը թաքցնելու նպատակով [18, c. 461]: Արդարության սկզբունքն ենթադրում է պատասխանատվության հավասար միջոցների կիրառում միատեսակ իրավախախտումների համար՝ իրավախախտների անհատական հատկանիշների հաշվառմամբ: Այս դրույթը նշանակում է, որ մնացած հավասար պայմաններում միատեսակ իրավախախտումների կատարման համար անձանց նկատմամբ կիրառվում են պատասխանատվության միատեսակ միջոցներ: Սակայն իրավաբանական պատասխանատվության նպատակների իրականացման համար մեծ նշանակություն ունի պատասխանատվության անհատականացումը: Ըստ այդմ՝ օրենսդրությունը նախատեսում է, որ անձին պատասխանատվության ենթարկելիս անհրաժեշտ է հաշվի առնել նրա անհատական հատկանիշները: Օրենքը, որը սահմանում կամ խստացնում է պատասխանատվությունը, հետադարձ ուժ չունի: Նշված սկզբունքն ամրագրված է ՀՀ Սահմանադրության 42-րդ հոդվածում: Այս դրույթը սահմանված է նաև ՀՀ Քրեական օրենսգրքի 13-րդ հոդվածում և նշանակում է, որ արարքի հանցավորությունը սահմանող, պատիժը խստացնող կամ հանցանք կատարած անձի վիճակն այլ կերպ վատթարացնող օրենքը հետադարձ ուժ չունի, և իրավասու մարմինը կիրառում է այն սանկցիաները, որոնք նախատեսված էին տվյալ իրավախախտման կատարման պահին: Հակառակ դեպքում հասարակական հարաբերությունների մասնակիցներին սպառնում է պատասխանատվություն այն արարքի համար, որը նախկինում (կատարման պահին) հանցավոր չէր համարվում: Այս կամ այն արարքի համար պատասխանատվություն սահմանող օրենքին հետադարձ ուժ տալը ըստ էության կնշանակի օբյեկտիվ մեղսայնացում: Արարքի հանցավորությունը սահմանող օրենքը հետադարձ ուժ չպիտի ստանա արդեն այն պատճառով, որ իրավունքը՝ որպես պատշաճ վարքագծի կանոնների համակցություն, միտված է ապագային, կարգավորում է մարդկանց կամային վարքագիծը, ներգործում հասարակական հարաբերությունների մասնակիցների վրա, որոնք իրենց արարքները

չափում են՝ հիմք ընդունելով այդ պահին արարքներին տրվող իրավաբանական գնահատականը (ինչպե՞ս պատժել անձին, եթե նա չգիտեր և չէր կարող իմանալ, որ իր արարքը երբևէ կարգելի՞ որակվելով որպես հանրորեն վտանգավոր և քրեորեն պատժելի): Պատիժը խստացնող օրենքին հետադարձ ուժով օժտելը նույնպես անթույլատրելի է, քանի որ և՛ արգելքների, և՛ արգելքները խախտելու համար կիրառվող սանկցիաների սոցիալական նշանակությունն այն է, որ դրանք ներգործեն վարքագծի այս կամ այն ձևի ընտրության վրա (եթե անձը գիտենար, որ կպատժվի այդպես խիստ, ապա հնարավոր է, որ արգելքը չխախտեր): Եվ, ընդհակառակը, պատժելիությունը վերացնող կամ պատիժը մեղմացնող օրենքը պարտադիր պետք է ստանա հետադարձ ուժ, քանի որ խիստ պատիժն այն արարքի համար, որը նախկինում որակվում էր որպես հանցագործություն, իսկ հիմա այդպիսին չի ճանաչվում կամ պատժվում է ավելի մեղմ, ոչ միայն հակասում է մարդասիրության և արդարության սկզբունքներին, այլև հասարակական գիտակցության մեջ հավասարեցնում է հանցավոր և ոչ հանցավոր արարքները, վտանգավոր և պակաս վտանգավոր վարքագծերը [19]:

Արդարության սկզբունքի համաձայն՝ միևնույն իրավախախտման համար հնարավոր է միայն մեկ պատիժ: Ոչ ոք չպետք է միևնույն հանցագործության համար երկրորդ անգամ դատապարտվի կամ պատժի ենթարկվի, եթե արդեն օրենքին համապատասխան դատապարտվել է կամ արդարացվել:

Միևնույն իրավախախտման համար մեկից ավելի պատասխանատվության և պատժի կիրառումն ակնհայտորեն չի համապատասխանում արդարության բնորոշմանը՝ որպես «արաքի և հատուցման համապատասխանություն» և, բացի այդ, կարող է ծնել վրդովմունք, բողոք և չժառայել հասարակական հարաբերությունների իրավական կարգավորման նպատակներին:

2003 թվականի ապրիլի 18-ին ընդունված ՀՀ Քրեական օրենսգրքի 10-րդ հոդվածի երկրորդ մասը սահմանում էր, որ «արգելվում է անձին երկրորդ անգամ դատապարտել նույն հանցագործության համար, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի»:

Անհասկանալի էր ՀՀ Քրեական օրենսգրքում այնպիսի բացառությունների նախատեսումը, որոնց առկայության դեպքում հնարավոր էր միևնույն հանցանքի համար երկրորդ անգամ դատապարտումը: Այս հակասությունը վերացվեց «ՀՀ Քրեական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքով (ընդունված 2004 թվականի հունիսի 9-ին), որի 1-ին հոդվածով ՀՀ Քրեական օրենսգրքի 10-րդ հոդվածի երկրորդ մասից հանվեց «բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի» բառակապակցությունը:

«Միանգամյա պատասխանատվության» պահանջից նահանջ չպետք է համարել այն դեպքը, երբ օրենքը թույլ է տալիս միևնույն հանցագործության համար թե՛ հիմնական և թե՛ լրացուցիչ պատիժների միաժամանակյա կիրառում: Այստեղ առկա է մեկ հանցագործու-

յուն, մեկ պատասխանատվություն, մեկ պատիժ, թեև երբեմն թե՛ հիմնական և թե՛ լրացուցիչ պատժամիջոցների ձևով:

Քաղաքացիական իրավունքում նշված դրույթն օրենսդրորեն ամրագրված չէ, ինչի հետ կապված՝ իրավախախտի իրավունքների պաշտպանությունը, որի նկատմամբ արդեն կիրառվել են քաղաքացիաիրավական պատասխանատվության միջոցներ, կիրականացվի կամ անբարեխիղճ հայցվորից հայցադիմումի չընդունման ճանապարհով՝ ՀՀ Քաղաքացիական դատավարության օրենսգրքի նախատեսած հիմքերով, կամ անբարեխիղճ հայցվորի հայցը մերժելու միջոցով:

Ընդհանուր առմամբ, բնութագրելով արդարության սկզբունքը, կարևոր է ընդգծել, որ նշված սկզբունքից բխող պահանջները պետք է ամրագրվեն օրենքում, հակառակ դեպքում, որքան էլ այդ պահանջները տեղին ու ճշմարիտ լինեն, իրավասու մարմինները նորմատիվ հիմքեր չեն ունենա դրանք կատարելու համար:

Բացի այդ, իրավախախտներին պատասխանատվության ենթարկելիս արդարության սկզբունքի պատշաճ իրագործման անհրաժեշտ պայման է համապատասխան երաշխիքների առկայությունը: Այդպիսի երաշխիքներ սահմանված են դատավարական օրենսդրությամբ: Այսպես, ՀՀ քրեական դատավարական օրենսդրությամբ դատավճռի բեկանման կամ փոփոխման հիմք է հետաքննության, նախաքննության կամ դատաքննության ոչ լիարժեքությունը, այնպիսի հանգամանքների չբացահայտումը, որոնք կարող էին ունենալ էական նշանակություն դատավճիռ կայացնելիս: Այսինքն, եթե դատարանը դատավճիռ կայացնելիս կամ որոշում ընդունելիս, արդարության սկզբունքը խախտելով, չի հետազոտում բոլոր հանգամանքները, որոնք պետք է հաշվի առնվեին պատասխանատվության միջոց ընտրելիս, ապա նման դատավճիռը կամ որոշումը պետք է վերացվի: Բացի այդ, արդարության սկզբունքի բովանդակությունը կազմող որոշ պահանջներ ամրագրված են նյութական իրավանորմերում (օրինակ՝ մեկ արարքի համար մեկ պատասխանատվության կիրառման պահանջը), իսկ նշված սկզբունքի պահպանման երաշխիքը դատավարական նորմն է, որը նախատեսում է նյութական իրավունքի նորմերի խախտումներով կամ ոչ ճիշտ կիրառմամբ ընդունված դատավճռի կամ որոշման վերացում: Արդարության ողջ համակարգը պետք է գործի առաջին հերթին արդարության և օրինականության սկզբունքներով: Արդարության սկզբունքի իրականացման կարևոր երաշխիք են սահմանադրական արդարադատության համակարգի գոյությունը, սահմանադրական վերահսկողության իրականացումը [20]: Ինչպես գրում է Գ. Գ. Հարությունյանը, սահմանադրական արդարադատությունը ներառում է իրավական նորմերի այն համակարգը, որոնք կարգավորում են սահմանադրական վերահսկողությամբ պայմանավորված հանրային բնույթի իրավահարաբերությունները և սահմանադրական դատավարության հիմք են հանդիսանում [21, էջ 602]:

«Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) 21-րդ հոդվածի համաձայն՝ «Սահմանադրական դատարանը պարտավոր է անաչառ կերպով ապահովել, որպեսզի կողմերն ունենան հավասար հնարավորություններ գործի քննության ամբողջ ընթացքում, այդ թվում՝ յուրաքանչյուր կողմին ընձեռել քննվող գործի վերաբերյալ իր դիրքորոշումը ներկայացնելու լիարժեք հնարավորություն»¹: Այսինքն՝ խոսքը վերաբերում է սահմանադրական արդարադատություն իրականացնելիս արդարության սկզբունքի ապահովմանը: Օրենքի 4-րդ հոդվածի համաձայն՝ Սահմանադրական դատարանի անդամը պաշտոնն ստանձնում է Ազգային ժողովի նիստում տրված հետևյալ երդմամբ. «Ստանձնելով Սահմանադրական դատարանի անդամի պաշտոնը՝ Հայաստանի Հանրապետության ժողովրդի առջև երդվում եմ՝ ապահովել Սահմանադրության գերակայությունը, լինել անաչառ, հավատարիմ մնալ Սահմանադրական դատարանի անդամի կոչմանը»:

Այսինքն՝ պաշտոնը ստանձնելու հետ մեկտեղ՝ ՍԴ անդամը երդման փաստով ստանձնում է նաև իր սահմանադրաիրավական կարգավիճակից բխող պոզիտիվ սահմանադրական պատասխանատվություն, իսկ ՍԴ-ում քննվելիք գործի վերաբերյալ նախապես կարծիք հայտնելու կամ այլ գործողություններով իր անաչառությունը կասկածի տակ ղնելու կամ դռնփակ խորհրդակցության ընթացքի մասին տեղեկություններ հայտնելու կամ այլ կերպ սահմանադրական դատարանի անդամի իր երդումը դրժելու դեպքերում ՍԴ անդամի լիազորությունները կարող են դադարեցվել (Օրենքի 14-րդ հոդվածի 3-րդ մասի 4-րդ կետ), այսինքն՝ նա կարող է ենթարկվել նեգատիվ սահմանադրական պատասխանատվության:

Արդարության՝ որպես իրավունքի ընդհանուր սկզբունքի պահպանումը ոչ միայն արդարադատության մարմինների, այլև պառլամենտի [22], կառավարության, բոլոր պետական և տեղական ինքնակառավարման մարմինների [23] պարտականությունն է: Ամփոփելով վերը շարադրվածը՝ արդարությունը կարելի է բնորոշել որպես իրավունքի հիմնարար սկզբունք, օրենսդրորեն ամրագրված ելակետային պահանջ, որով պետք է առաջնորդվեն իրավահարաբերությունների մասնակիցները, բոլոր իրավասու սուբյեկտները՝ թե՛ իրավաստեղծ և թե՛ իրավակիրառ ու իրավապահպան գործունեություն իրականացնելիս:

¹ «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքն ընդունվել է 01.06.2006թ.:

ԳՐԱՎՈՒԹՅՈՒՆ

1. **Нерсесянц В. С.**, Философия права, М., 2003.
2. **Денис Ллойд**, Идея права. Репрессивное зло или социальная необходимость? (Перевод с английского), М., 2002.
3. **Матюхин А.**, Государство в сфере права: институциональный подход, Ал-ма-ты, 2000.
4. **Боннер А. Т.**, Законность и справедливость в правоприменительной деятельности, М., 1992.
5. **Щенникова Л. В.**, Справедливость и добросовестность в гражданском праве. Государство и право, 1997, N 6.
6. Հոռնեական իրավունքի մասին մանրամասն տե՛ս **Ասիյան Ն. Ա., Սաֆարյան Գ. Դ.**, Հոռնեական իրավունք, Երևան, 2002:
7. Мудрость -тысячелетий. Энциклопедия, М., 2004.
8. **Боннер А. Т.**, Указ. соч.
9. Советский энциклопедический словарь, М., 1987, с. 11262.
10. Փիլիսոփայական բառարան, **Մ. Մ. Ռոզենտալի** խմբագրությամբ, Երևան, 1975, էջ 40, Բարոյագիտական բառարան, **Ի. Ս. Կոնի** խմբագրությամբ, Երևան, 1985:
11. **Мальцев Г. В.**, Социальная справедливость и право, М., 1977.
12. Այս մասին մանրամասն տե՛ս **Արզունյան Ս.** Հոգեբանություն, Երևան:
13. **Ильин А. И.**, Теория государства и права, М., 2003.
14. **Головистикова А. Н., Дмитриев Ю. А.**, Теория государства и права (Вопросы и ответы), М., 2003.
15. Теория государства и права, Курс лекции, Под ред. **М. Н. Марченко**, М., 1999.
16. Общая теория права и государства, Под ред. **В. В. Лазарева**, 1997.
17. Самощенко И. С., Фарукшин М. Х. Ответственность по советскому законодательству, М., 1971.
18. Теория государства и права, Под ред. **М. Н. Марченко**, М., Зерцало, 1999.
19. Общая теория государства и права, том 3, Отв. ред. **М. Н. Марченко**, **М., Зерцало**, 2002, с. 504.
20. **Չարությունյան Գ. Գ.**, Սահմանադրական վերահսկողություն, Երևան, 2002:
21. **Չարությունյան Գ. Գ.**, Սահմանադրական արդարադատությունը Հայաստանի Հանրապետությունում // Հայաստանի Հանրապետության սահմանադրական իրավունք, Երևան, 2000:
22. Պառլամենտի գործունեության սկզբունքների մասին մանրամասն տե՛ս - **Չակոբյան Դ. Դ.**, Պառլամենտը և պառլամենտարիզմը Հայաստանի Հանրապետությունում, Երևան, 2007:
23. Տեղական ինքնակառավարման մարմինների գործունեության սկզբունքների մասին մանրամասն տե՛ս **Չարությունյան Ա. Շ.** Հայաստանի Հանրապետության նունիցիպալ իրավունք, Երևան, 2004:

RUZANNA HAKOBYAN

Rector of Gavar State University

PhD of Law

JUSTICE AS THE FUNDAMENTAL PRINCIPLE OF LAW

Abstract. The article concerns justice as the fundamental principle of law. It is mentioned that justice is a broad notion with social, moral, political, religious, and legal meanings. The conceptions of justice, independence and equality were expressed in the Greek philosophers' ideas concerning the nature and law, later they developed in Ancient Rome, then, in the middle ages, those ideas were developed in the works of west European critics. The principle of justice acquired a new meaning and content due to the Christian culture, and, nowadays, it keeps developing in modern systems of civilization.

The law is a greatest achievement of civilization, the main feature of which is justice. The law should be justified, and the justice itself must be involved in the conception of law as its inner and qualitative feature.

ՏՆՄԵՍԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ (Կառավարում)

ԲԵՆԻԱՄԻՆ ԵՂԻԱԶԱՐՅԱՆ

*ՀՀ ԳԱԱ տնտեսագիտության
ինստիտուտի գլխավոր գիտաշխատող,
տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր*

ԱՐԱ ԳՅՈՒՐՅԱՆ

*ՀՀ Նախագահի
աշխատակազմի ղեկավարի տեղակալ,
տնտեսագիտության թեկնածու*

ԳԻՏԱԿՑՎԱԾ ԳՈՐԾՈՒՆԵՌԻԹՅԱՆ ԵՎ ԳԻՏԵԼԻՔԱՐԵՆՔ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ ՁԵՎԱՎՈՐԵԼՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Բնությունը մարդուն օժտել է մեծագույն շնորհով՝ մտածելու ընդունակությամբ, նաև այն օգտագործելու, իր պահանջմունքների մի մասն իր գործունեության և դրա արդյունքում ստեղծվող բարիքների միջոցով բավարարելու կարողություն: Իր բազմադարյան գոյության ընթացքում մտածելու և գիտակցված գործելու միջոցով նա հետզհետե ավելի ու ավելի է ճանաչել իրեն ու իր հնարավորությունները, աստիճանաբար զարգացել և ձևավորել է այսօրվա մարդկային քաղաքակրթությունը: Այդ գործընթացներում նա կարողացել է բացահայտել և հետազոտել իր գոյությանն ու զարգացմանն առնչվող շատ խնդիրներ, առաջարկել դրանց լուծումներ:

Մարդկության զարգացումը, որպես բնականոն երևույթ, շարունակվելու է նաև հետագա ժամանակաշրջանում, տեղի կունենան շատ փոփոխություններ, առկա են և դեռ կառաջանան այլ խնդիրներ, որոնք մարդու և իր կենսապայմանների հնարավոր ինտենսիվ զարգացմանը նպաստող լուծումներ են պահանջում: Մարդկությունն այժմ ձգտում է ձևավորել գիտելիքահենք տնտեսություն, որում յուրաքանչյուր գործողություն իրականացվելու է գիտելիքի հիմքով, որպեսզի նվազագույնի հասցվեն խնդիրների սխալ լուծումները ու դրանց կիրառման պատճառով հասարակությանը հասցվող վնասները:

Գիտելիքահենք հասարակությանն անցումն այդ գործընթացին առնչվող խնդիրների հետազոտության հետ մեկտեղ պահանջում է նաև բազում խնդիրների նախկինում ստացված լուծումների նորովի դիտարկում, անհրաժեշտության դեպքում դրանց վերանայում և ճշգրտում: Ստորև փորձ է արված հակիրճ ներկայացնել հասարակության համար, մեր կարծիքով, կարևոր ու հրատապ այդպիսի մի շարք խնդիրներ և դրանց լուծման ուղղությունների շուրջ մեր որոշ դատողությունները:

1. Մարդը, որպես գիտակից էակ, ձգտում է ճանաչել իրեն, իր գոյատևման միջավայրը, հետազոտել հասարակությունը, որում ապրում է, ձևակերպել դրա գոյատևման ու զարգացման օրինաչափությունները: Նա ցանկանում է յուրացնել և կիրառել այն ամենը, ինչը բացահայտվել, ընդունվել ու պահպանվել է իր նախնիների կողմից, և ստեղծում է նորը: Չետազոտման այսպիսի գործընթացը համահունչ է մարդու էությանը, այն մարդկային գիտակցված գործունեության մշտատև, լայն ընդգրկում և բարձր կարևորություն ունեցող տեսակ է, որի արդյունքները վերջին հաշվով ծառայում են մարդուն ու մարդկային հասարակությանը:

2. Իր գոյատևման համար մարդը ոչ միայն հարմարվում է կենսամիջավայրին, օգտվում բնության բարիքներից, այլև ձգտում է իր պահանջներին հարմարեցնել կենսամիջավայրը, դրանց ինչ-որ մասը բավարարել իր ստեղծած բարիքների հաշվին: Նա այդ նպատակին է ծառայեցնում բնության կողմից իրեն պարգևաված շնորհը՝ գիտակցված գործունեություն իրականացնելու կարողությունն ու հնարավորությունը: Եվ ինչքան մեծ լինի վերջինների օգտագործման աստիճանը, այնքան ավելի կլինի նաև այդ նպատակի իրականացման չափը:

3. Կենսամիջավայրը և դրա հնարավորություններն իր գոյատևմանը ծառայեցնելուն ուղղված գործունեությունն արդյունավետ կարող է լինել, եթե դրա հիմքում դրվում է մարդու և կենսամիջավայրի մասին բավարար գիտելիքներ, ձևավորվում են հստակ նպատակադրումներ, իրականացվում է առկա ռեսուրսների նպատակային օգտագործում: Դա նշանակում է, որ մարդու գործունեությունը գիտակցված կարող է համարվել, եթե այն նպատակային և արդյունավետ է: Այս պայմաններն ու դրանց ապահովումը ինչպես ողջ մարդկության ընդգրկումով, այնպես և դրա առանձին հատվածների համար, բարդ համակարգեր են: Դրանց ճանաչումն ու անհրաժեշտության գիտակցումը, իրագործման ուղղությունների ու միջոցների ընտրությունը պահանջում են գիտական խորը հետազոտությունների իրականացում, ստացված արդյունքների համակարգում, ներդրման կազմակերպում և այլ գործողություններ:

4. Ելնելով պատմական իրողությունից՝ ապացուցված կարելի է համարել մարդկային հասարակության շարունակական զարգացման տնտեսագիտական օրենքի գոյությունը, որի գործողության տնտեսական հիմքը գիտակցված գործունեություն իրականացնելու մարդու բնածին հնարավորությունն է: Հավաստելու համար նաև հետագա ժամանակաշրջանում այդ օրինաչափության անընդհատության վարկածը, անհրաժեշտ է պայմաններ ստեղծել և, ըստ ամենայնի, օժանդակել այդ օրենքի գործողությանը՝ կանխատեսելով այն խաթարող հնարավոր վտանգներն ու կիրառելով դրանց ազդեցությունը մեղմող համապատասխան միջոցառումներ: Չետևաբար, մարդկության գոյատևման ու զարգացման խնդիրների հետազոտությունը շարունակական և ամենուրեք պետք է լինի: Դրա ապահովումը հասարակության և այն կառավարող մարմինների կարևորագույն խնդիր պետք է համարվի:

5. Մարդկային յուրաքանչյուր գիտակցված գործունեություն պետք է նպատակային լինի, իսկ նպատակադրումն իրականացվելու է հնարավոր բարձր արդյունավետությամբ: Հիմնավորելով այս պահանջների արդարացիությունը, դրանց համալիրն ընդունելով որպես մարդկային գիտակցված գործունեության հիմնարար կանխադրույթ, ներկայացնելով կենսապահովման ոլորտներում դրանց իրագործման օգտակարության ապացույցներ՝ կարելի է եզրահանգել, որ այս պահանջներին չհամապատասխանող մարդկային գործունեությունը գիտակցված, իսկ այն իրականացնող անձը՝ գիտակից, համարվել չեն կարող: Այս եզրահանգումից շեղումներ պայմանավորող պատճառները տարբեր կարող են լինել, դրանց ի հայտ գալու հնարավորությունը պետք է նախապես բացահայտվի ու գնահատվի, ապա և կիրառվեն դրանց ազդեցությունը չեզոքացնող կամ մեղմող համապատասխան միջոցառումներ, որոնց կատարումը պետք է դիտվի որպես պետական քաղաքականության կարևոր հատված:

6. Նպատակը բարդ և համալիր հասկացություն է, էությունը պայմանավորված է տարբեր ուղղվածության ամբողջ շարք բնութագրերով, որոնցից յուրաքանչյուրը հիմք կարող է դառնալ հասկացությունն այդ տեսանկյունից կառուցվածքավորելու, հիերարխիկ պատկերը ձևավորելու, որոշակի արտահայտություններն ու ձևերը հստակեցնելու համար: Այս առումով, գիտակցելով նաև հասկացության էությունը ճշգրիտ ճանաչելու և աղեկվատ սահմանելու անհրաժեշտությունը, նպատակահարմար կարելի է համարել *Նպատակի* և դրան առնչվող այլ հասկացությունների (օրինակ՝ *Նպատակադրում*, *Նպատակային գործունեություն* և այլն) սահմանումների տարանջատումը *ընդհանրական* և *մասնակի* տեսակների: Երկրորդը կիրառելի է նպատակը կոնկրետ տեսանկյուններից բնութագրելու համար: Այն կարող է լինել *միա (մոնո) մասնակի*, *մասնակիորեն ընդհանրացված* և *նպատակային*:

7. Նկատի ունենալով գրականությունում հանդիպող տարաբնույթ և հաճախ խիստ տարբերվող բացատրությունների գոյությունը, ինչը բացատրվում է հասկացությունը տարբեր տեսանկյուններից բնութագրելու փաստով, նպատակահարմար պետք է համարել դիտարկվող *հասկացությունների միանշանակ սահմանումը նաև ընդհանրական ձևով*, դրանով արտահայտելով հասկացության հիմնական և բոլոր դեպքերի համար ընդհանրական բնութագրերը:

8. Նպատակների տեսակների, գնահատման բնութագրերի, կիրառման դեպքերի, օբյեկտների ու սուբյեկտների բազմազանությունը, մեծ թիվը և խիստ տարբերությունները դժվարեցնում են հասկացությունների մասնակի ձևերի համար դրանց միանշանակ սահմանումների ամբողջական ցանկ-բազայի ստեղծումը: Կարծում ենք, ավելի նպատակահարմար կարելի է համարել յուրաքանչյուր դեպքում հստակ և միանշանակ սահմանել թե իրականացվող հետազոտությունում ինչ որոշակի բովանդակությամբ են օգտագործվում դիտարկվող մասնակի հասկացությունները: Դա կօգնի հետազոտողին չչեղվել

տրված բացատրությունից, իսկ ծանոթացողներին՝ խուսափել հետազոտության ընթացքի թյուրըմբռնումից և արդյունքների ոչ տեղին կիրառությունից:

9. Մարդկային գործունեությունը՝ որպես կանոն, նպատակային է: Այն կախված իր ուղղվածությունից, ընդգրկումից, կարևորությունից և այլ բնութագրերից, կարող է միտված լինել մեկից ավելի նպատակների իրականացման: Ուստի գործունեությունները կարելի է տարատեսակել և դասակարգել նաև ըստ դրանցում իրագործվող նպատակների տեսակների և ընդգրկման աստիճանի՝ առանձնացնելով դրա *մասնակի* (միտված մեկ որոշակի նպատակի իրականացմանը) և *համալիր* (ներառում է մեկից ավելի նպատակներ) տեսակները: Նպատակների տարբեր թիվ և կազմ ունենալը հնարավորություն է ընձեռում առանձնացնել նպատակային գործունեության տարբեր տիպեր ըստ յուրաքանչյուրի առանձնահատկության, ներառվող նպատակների կազմի և ուղղվածության: Այդ հիմքի վրա կարելի է ձևավորել *գործունեությունների ընդգրկում տիպաբանություն*: Այն լայն և օգտակար կիրառություն կարող է ունենալ գործառությունների կառավարման գործընթացներում:

10. Չնայած գործունեությունների՝ նախորդ կետում նշված տիպաբանության գործնական օգտակարությանը, դրա ընդհանրական և մեծ ընդգրկում ունեցող տարբերակի ձևավորման դժվարություններն այն դարձնում են գործնականորեն աննպատակահարմար: Այս հակասությունը մեղմելու ընդունելի մոտեցում կարող է համարվել, եթե նպատակների ամբողջական համակարգը ձևավորել առանց նպատակների մանրամասնեցված (մասնակի) տեսակներն առանձնացնելու, դրանց ողջ հանրության համար: Հատուկ դեպքերում, ըստ անհրաժեշտության, կարող են իրականացվել որոշակի արտահայտությամբ նպատակադրումների մանրամասնեցված հետազոտություններ՝ պահանջվող խորությամբ, ընդգրկումով և հիմնավորվածությամբ: Օգտագործվելու են հետազոտվող դեպքի առանձնահատկություններին համապատասխանող նախապես ընտրված մեթոդական մոտեցումներ:

11. Մարդն իր շատ գործողությունները կատարում է նաև նախապես չսահմանելով դրանց հստակ նպատակները: Եթե դրանց համար հիմք է հանդիսանում մնան գործողությունների կատարման՝ մարդու ենթագիտակցությունում բնագրային (զենետիկ) կամ փորձով ամրագրված տարբերակը, ապա այդպիսի գործողությունները չգիտակցված համարել չի կարելի: Մյուս կողմից, դրանց գիտակցվածության աստիճանը կախված կլինի նրանից, թե կատարողը ինչ չափով է դրանք նպատակահարմար գտնում կիրառել տվյալ դեպքում: Հետևաբար, կարելի է տարբերել գիտակցված գործողության նպատակադրման *գիտակցական* և *ենթագիտակցական* տեսակներ՝ յուրաքանչյուրն իր գիտակցվածության աստիճանի տարբեր արտահայտություններով: Դրանցից առաջնայինը, անշուշտ, գիտակցականն է:

12. Մարդն ապրում և գործում է հասարակությունում, նրա յուրաքանչյուր գործողություն անմիջականորեն կամ միջնորդավորված ձևով առնչվում է հասարակության որոշ անդամներին: Նույն ձևով հասարակության յուրաքանչյուր անդամ իր հերթին կրում է այլ անդամների գործողությունների ազդեցությունը: Ուստի անհատի կամ դրանց խմբերի նպատակների համակարգը ձևավորելիս անհրաժեշտ է նկատի ունենալ նաև դրանք իրագործելու գործողությունների ազդեցությունը հասարակության այլ անդամների նպատակների իրականացման վրա: Դա անհրաժեշտ է դարձնում անհատների նպատակների փոխհամաձայնեցումն ու հասարակության համար ամբողջական նպատակների համակարգի ձևավորումը:

13. Հասարակության նպատակների համակարգի ձևավորումը բարդ և մասշտաբային գործընթաց է ինչպես գիտամեթոդական, տեխնիկական, խնդիրների մեծ թվի, հնարավորությունների սահմանափակվածության և այլ առումներով, այնպես և հասարակության տարբեր սուբյեկտների հաճախ հակասական շահերի առկայության տեսանկյունից: Ընդ որում հակասություններ հնարավոր են նաև նույն սուբյեկտի սեփական (կամ ներքին, իր շահերից արտածվող) և արտաքին (այլ սուբյեկտների կողմից թելադրվող) նպատակների միջև: Այդպիսի հակասություններ հնարավոր են նաև ներքին կամ արտաքին նպատակների համալիրի առանձին նպատակների միջև: Այդպիսի հակասությունների առկայությունն առաջնահերթ է դարձնում դրանց փոխհամաձայնեցումը: Դա կարելի է կատարել տարբեր մոտեցումներով՝ մեթոդը ընտրելով կոնկրետ դեպքի պայմաններին համապատասխան, ինչը նպատակահարմար է դարձնում տարբեր պայմանների համար կիրառելի այդպիսի մեթոդների համակարգի մշակումը:

14. Հասարակությունում նպատակների փոխհամաձայնեցման սկզբունքը համահունչ լինելով Պարետո սկզբունքի էությանը, դրանից տարբերվում է նրանով, որ կիրառվում է օպտիմալ տարբերակի ընտրության գործընթացի վաղ՝ նպատակների համակարգի ձևավորման փուլում: Դա հնարավորություն է ընձեռում նպատակների փոխհամաձայնեցման միջոցով ստեղծել զարգացման տարբերակների ձևավորման հիմքեր, ինչն իր հերթին նպաստելու է զարգացման լավագույն տարբերակը ճիշտ ընտրելու խնդրի լուծմանը: Այդպիսի լուծումը, ի տարբերություն Պարետո օպտիմալության պայմանի, ստացվում է ոչ թե այն տարբերակից հրաժարումով, որում վնաս կրող սուբյեկտներ կան, այլ սուբյեկտների նպատակադրումների փոփոխմամբ, ներառած նաև այս կամ այլ ձևով վնասի փոխհատուցման հնարավորությունը: Այդպիսի հնարավորության անտեսումը Պարետո սկզբունքում համարվում է վերջինի լուրջ թերությունը:

15. Հասարակության տարբեր սուբյեկտների ձգտումները կարող են տարբեր, ինչպես նաև իրար հակասող լինել: Այս հանգամանքի բացասական հետևանքներից հնարավորինս խուսափելու, հասարակության սուբյեկտներին հավասար իրավունքներ և գործունեության նույն

ճանճան հնարավորություններ ընճեռելու հիճնարար սկզբունքի կիրառությունն ապահովելու համար անհրաժեշտ է դառնում.

- հասարակությունում նպատակադրումների հիերարխիկ ամբողջական համակարգի ձևավորումը,
- այդ համակարգի տարբեր մակարդակների, ինչպես նաև յուրաքանչյուր մակարդակում տարբեր սուբյեկտների հակասական նպատակադրումների փոխհամաձայնեցումը,
- նշված միջոցառումների իրականացումը կառավարման պատասխանատու մարմինների կարևոր գործառույթներ համարելը, քանի որ հստակ ձևակերպված և գիտագործնականորեն բազմակողմ հիճնավորված և փոխհամաձայնեցված նպատակադրումների համակարգի գոյությունը հասարակության և դրա տնտեսական հատվածի արդյունավետ կառավարման անհրաժեշտ պայմանն է:

16. Կարող են ձևավորվել հասարակությունում նպատակադրումների համակարգի տարբեր տեսակներ, այդ թվում.

- նպատակների ամբողջական համակարգ չի ձևավորվում, այսինքն՝ նպատակների ձևակերպման և ընտրության, համակարգման և փոխհամաձայնեցման, այդ հիճնքի վրա նպատակների համակարգի ձևավորման խնդիր կառավարման հիերարխիայի վերին մակարդակներում դրված չէ, տնտեսությունը գործում է իներցիոն սխեմայով, մրցակցային սկզբունքների կիրառությամբ,
- ձևավորվում է նպատակային համակարգի որոշակի մասը՝ նվիրված մակրոնակարգակային առաջնային նպատակների մանրամասնեցմանը ստորադաս մակարդակներում, ուստի ընդհանուր փոխհամաձայնեցում չի իրականացվում,
- նպատակների ընդհանուր, ողջ հասարակության և տնտեսության ընդգրկումով, զարգացման բոլոր ուղղություններն ու ոլորտները ներառող համակարգի ձևավորում, որի իրագործումը մի շարք պատճառներով կապված է դժվարությունների հետ և իր ոչ մեծ ճշգրտության և զգալի ռիսկայնության պատճառով գործնական կիրառությունը նպատակահարմար չի կարող համարվել,
- ամբողջական համակարգի ձևավորում միայն ռազմավարական նպատակների ընդգրկումով՝ օգտագործելու համար տնտեսության երկարաժամկետ զարգացման կառավարման գործընթացներում,
- նպատակների մասնակի համակարգերի ձևավորում բավարար ինքնուրույնություն ունեցող խոշորացված ոլորտների համար, եթե այդպիսի համակարգերի գոյությունը և օգտագործումը համապատասխանում են այդ ոլորտները կառավարող մարմինների պահանջներին,

- մասնակի նպատակային համակարգերի միջև հիմնարար նպատակադրումների հնարավոր փոխհամաձայնեցման միջոցով ավելի մեծ ընդհանրություն ունեցող մասնակի համակարգերի համալիրի ձևավորում, որը շատ դեպքերում կարող է փոխարինել հասարակությունում նպատակների ամբողջական համակարգին, օգտագործվել որպես այդպիսին:
17. Նպատակների համակարգի ձևավորումը կարող է կատարվել.
- վերևից՝ ներքև, ընդունելով մակրոմակարդակային նպատակները, ապա և դրանք աստիճանաբար մանրամասնելով ու որոշակիացնելով ստորադաս մակարդակներում,
 - ներքևից՝ վերև, ստորին մակարդակների որոշակի նպատակների միավորման և ընդհանրացման միջոցով ձևավորելով վերին նպատակադրումները,
 - համատեղված մոտեցում, որպես նշված երկուսի միավորում, որում օգտագործվելու են յուրաքանչյուրի դրական կողմերը՝ հնարավորինս խուսափելով բացասականներից: Դրան կարելի է հասնել այդ մոտեցումների հաջորդական կիրառումով, առաջին խտրացիայում իրականացնելով նպատակների շարժը և մանրամասնեցումը վերևից ներքև, ապա երկրորդում համալրելով և ճշգրտելով դրանք ստորադաս մակարդակների առաջարկների հաշվառումով:

Մոտեցումներից յուրաքանչյուրի և, մասնավորապես, երրորդ մոտեցման գործնական կիրառությունը պահանջում է մասնագիտական բարձր հմտություններ:

18. Մարդակերպին հատուկ ընդհանրական բնութագրերը, մտածելակերպը և նպատակային գործելու հատկությունը հուշում են, որ չնայած դրանց արտահայտման ձևերի բազմազանությանը, պետք է ենթադրել մարդկության համընդհանուր կամ գլոբալ նպատակների գոյությունը, որոնց բացահայտումը և նպատակային օգտագործումը մեծապես կօժանդակի ինչպես ողջ հասարակության, այնպես և դրատարբեր մակարդակներում մարդկային գործունեությանը ճիշտ նպատակային ուղղվածություն հաղորդելուն:

19. Մարդկության գլոբալ նպատակները համապատասխանելու են մարդակերպի ընդհանրական էությանը, և ոչ թե մարդկության առանձին հատվածներին հատուկ բնութագրերին: Իրենց բովանդակությամբ դրանք ընդհանուր և նույնական պետք է լինեն մարդկության բոլոր հատվածների ու նրանցում ներառված խմբերի համար, արտահայտելու են մարդկանց ինչպես ենթագիտակցական, այնպես և գիտակցված գործողությունների ընդհանրական նպատակային ուղղվածությունները: Սակայն գլոբալ նպատակները մարդ-անհատների նպատակների մեխանիկական հանրագումարը կամ միջինացված արտահայտությունը չեն, այլ դրանց ամբողջական ընդհանրացումը, հաշվի առնելով մարդու գիտակցված գործելու ընդունակությունը: Այսպիսով, մարդկային գլոբալ նպատակը տեսական հասկացություն (գիտելիք) է:

Այն մարդկային ողջ հանրության բոլոր անդամների գիտակցված և ենթագիտակցական նպատակների ընդհանրացումն է ինչպես բովանդակային, այնպես և ձևակերպման առումով: Ձևակերպումը պետք է առավել չափով ընդգրկուն լինի, ամփոփ ձևով արտահայտի մարդ-անհատների և դրանց խմբերի նպատակների համալիրը, ընկալելի լինի կիրառություն ստանալու համար:

20. Էության բացատրությունն ու առաջադրվող պայմանները հիմք են հանդիսանում գլոբալ նպատակների հնարավոր տարբերակների ձևավորման համար: Դրանց համեմատական վերլուծությունն ու գնահատումը բերում են այն համոզման, որ *մարդկության գլոբալ նպատակներ կարող են համարվել մարդկության գոյատևումն ու զարգացումը*: Այս ձևակերպումները ստացվել են մարդկային առավել ընդհանրական նպատակների հնարավոր բազմությունից տրամաբանական ընտրության արդյունքում, օգտագործելով նաև նպատակներն ըստ իրենց բնույթի *արդյունքային* և *իրագործումային* տեսակների բաժանելու առաջարկությունը: Գլոբալ նպատակների այս ընդհանրական ձևակերպումներն անմիջական գործնական կիրառություն հազիվ թե ունենան, սակայն դրանց մանրամասն կառուցվածքավորման միջոցով հիմք կարելի է ստեղծել հասարակության ցանկացած մակարդակում, առկա կոնկրետ պայմանների հաշվառումով, մարդկային գիտակցված գործունեության բազմակողմ հիմնավորված և հասցեական նպատակների համակարգ ձևավորելու, հետևաբար և դրանց իրագործման միջոցառումներ մշակելու համար:

21. Նպատակների կառուցվածքավորման ներկայացված մոտեցմամբ կարելի է գլոբալ նպատակների իրականացման միջոցները կապել այժմ միջազգայնորեն ընդունված զարգացման այնպիսի կարևոր ուղղությունների հետ, ինչպիսիք են՝ մարդկային զարգացումը, տնտեսության կայուն զարգացման ապահովումը, անցումը գիտելիքահենք հասարակության, ազգային անվտանգության ապահովումը և այլն: Մանրամասն կառուցվածքավորված համակարգի ձևավորումը հնարավորություն ունի միջանկյալ մակարդակներում ներառել նաև սեփական նպատակները, որոնք չեն թելադրվում վերին մակարդակների նպատակների իրականացմամբ, ծառայում են տվյալ մակարդակում առկա խնդիրների լուծմանը: Եթե դրանք խանգարում են հիմնական նպատակների իրականացմանը, ապա խնդիրը լուծվելու է արդյունքային և իրագործումային նպատակներում համապատասխան փոփոխություններ կատարելու միջոցով:

22. Մարդկության գլոբալ նպատակները, ըստ էության, հանդիսանում են ողջ մարդկության, նրա առանձին հատվածների և նույնիսկ անհատների համար ուղեցույց՝ իրենց գործողություններում և գիտակցված գործունեությունում: Այսպիսի կարևորությունը, լայն կիրառության դաշտը և դրանց ձևակերպումներում թույլ տրվող բացթողում-

ների լրջագույն հետևանքների հնարավորությունը հուշում են, որ մարդկության գլոբալ նպատակներն ավարտուն ձևակերպումներ պետք է ստանան միջազգային բարձր մակարդակի կազմակերպություններում և մարմիններում, արժանանան մարդկային ողջ հանրության հավանությանը, անցնեն լայն ու բազմակողմ փորձաքննություն, ապա և առանձին երկրների ու տարածաշրջանային կառավարման պատասխանատու մարմինների կողմից առաջարկված համապատասխան կիրառություն:

23. Գլոբալ նպատակների ձևակերպումն ու դրանց իրականացման ուղիների ճիշտ ընտրությունն ու բարձրորակ մշակումը պահանջում են գիտելիքների հիմնավորված հիմք, հետևաբար և այդ ասպարեզում խորն ու համակողմանի գիտական հետազոտությունների իրականացում: Այս գործընթացներում ուշադրության են արժանանալու խնդրի շուրջ տարբեր կազմակերպությունների, գիտական հասարակայնության, անհատ մտավորականների կարծիքն ու առաջարկությունները:

24. Նպատակադրումն ու դրա իրականացման արդյունավետ ուղու ընտրությունը կախված է մի շարք գործոններից՝ դրանց փաստացի առկա համախմբի տեսակից, կազմից, քննարկվող խնդրի առանձնահատկություններից: Բացառիկ չեն այն դեպքերը, երբ նպատակայնության ու արդյունավետ լինելու պայմանները, կախված գործունեության նպատակաուղղվածությունից, կարող են որոշակի ձևով փոխկապված, փոխլրացնող, իրար պայմանավորող կամ նորմատիվորեն սահմանված լինել: Այդ պայմանները պետք է նախապես բացահայտվեն և հաշվի առնվեն տարբերակի ճիշտ ընտրություն կատարելու համար, ինչն իր հերթին պահանջում է ընտրության համար կիրառվելիք ճշգրիտ մեթոդական մոտեցումների առկայություն և դրանք օգտագործելու մասնագիտական հմտություններ, հետևաբար և դրանց նախապես ստեղծում:

25. Թվարկած պայմանների տարբերությունները մեծ հավանականությամբ կարող են պատճառ դառնալ, որ տարբեր դեպքերում և դիտարկվող տարբեր խնդիրներում նպատակային-արդյունավետ գործունեության պարադիգմի իրագործման աստիճանը տարբեր լինի: Մյուս կողմից, այդ պարադիգմի մեծ կարևորությունը մարդկության գոյատևումն ու զարգացումն ապահովելու գործում պահանջում է գիտակցված գործունեության իրականացում այդ պարադիգմի պահանջներին համարժեք ձևով: Ուստի անհրաժեշտ է բացահայտել այդ համարժեքության բարձր մակարդակ ապահովող հիմնական գործոնները և մշակել դրանց կարգավորման մեթոդներ՝ յուրաքանչյուր դեպքում հաշվի առնելով դրանց առանձնահատկությունները: Այս նպատակին կծառայի նաև *մարդու գիտակցված գործելու կարողություն* և *մարդու գործունեության գիտակցվածության աստիճան* հասկացությունների ներմուծումը տնտեսագիտությունում և դրանց քանակական գնահատման մեթոդների մշակումն ու կիրառությունը:

26. Գործունեության գիտակցվածության բարձր մակարդակ ապահովելու հիմնական պայմանը գործունեությունը նպատակադրող և իրականացնող սուբյեկտների մոտ դրան վերաբերող անհրաժեշտ գիտելիքի առկայությունն ու ճիշտ օգտագործումն է, այսինքն՝ տվյալ գործունեության *գիտելիքահենքության բարձր մակարդակի* ապահովումն է, ինչը ուղղակիորեն բխում է մարդու մտածող էակ լինելու և գիտակցված գործելու կարողություն ունենալու իրողությունից: Իսկ գիտելիքի ծավալի և ընդգրկման ինտենսիվ մեծացումը, գործունեության գիտելիքահենքության մակարդակի անշեղ բարձրացումը մարդկության գոյատևման համարյա ողջ անցյալ ժամանակաշրջանում, ինչպես և տարածաշրջանների միջև տարբերությունների աստիճանական համահարթեցումն արդեն իսկ բավարար հիմք են, որպեսզի մարդկային ցանկացած գործունեություն գիտելիքահենքության բարձր մակարդակով իրականացվի:

27. Մարդկության զարգացման հիմնական ուղղությունը ներկա և հետագա ժամանակաշրջաններում այժմ իրավացիորեն համարվում է գործունեության գիտելիքահենքության մակարդակի հնարավոր ինտենսիվ բարձրացումը: Ձևավորվելու է *գիտելիքահենք տնտեսության* (knowledge based economy) համակարգ, որը բոլոր երկրների համար դառնալու է ժամանակակից տնտեսակարգ: Դրանում հանրային կամ առանձնացված ցանկացած մարդկային գործունեություն գիտելիքի վրա հիմնված և գիտելիքով հիմնավորված պետք է լինի: Այս մոտեցումը մարդկային ողջ հասարակության հետագա նպատակահարմար զարգացումն ապահովելուն ուղղված առավել հիմնարար և հիմնավորված գաղափարն է: Այն մշտապես գտնվելու է ողջ մարդկության ուշադրության կենտրոնում, առաջնորդելու է բոլոր գործողություններում, քանի որ ոչ թե ժամանակավոր սկզբունք է, այլ տնտեսագիտական օրինաչափություն և մտածող էակին հատուկ մշտական գործելակերպ:

28. Բարձր գիտելիքահենքության մեծ կարևորությունը ծանրակշիռ պատճառ է, որպեսզի այն դառնա կառավարման օբյեկտ, որի գործառույթների իրականացման համար համապատասխան մարմինները պետք է ունենան պահանջվող իրավասություններ և համարժեք պատասխանատվություն: Նպատակահարմար պետք է համարվի տնտեսագիտությունում՝ գործունեության կամ այլ երևույթների գնահատման համակարգերում, ներառել *«գիտելիքահենքություն»* և *«գիտելիքահենքության մակարդակ»* հասկացությունները, դրանց գիտագործնական հետազոտության խնդիրներին լուրջ ուշադրություն դարձնելով կառավարման համակարգի բոլոր մակարդակների մարմիններում:

29. Նպատակահարմար է ձևավորել *գիտելիքահենք* բնութագրով առանձնացվող հասկացությունների ամբողջական համակարգ, կառուցել դրա կազմի հիերարխիկ պատկերը: Դա կօգնի համակարգ ներառվող հասկացությունների փոխադարձ կապերն ու պայմանավորվածությունները բացահայտելուն, գիտելիքահենքության գաղափարի և դրա իրականացման մոտեցումների ավելի *գիտելիքահենք* հետազո-

տությունը: Նկատի ունենալով այսպիսի համակարգն իր ընդհանրական տեսքով ձևավորելու դժվարությունները, սակայն և կարևորությունը գիտելիքահենքության հիմնախնդրի լուծման գործում, նպատակահարմար կլինի սկզբում ձևավորել այդ համակարգի մասնակի տեսակներ՝ գործունեության տարբեր ոլորտների համար, իսկ գիտելիքահենքության գաղափարի շուրջ գիտելիքի հարստացման հետ զուգահեռ աստիճանական անցում կատարել հասկացությունների ավելի լայն ընդգրկումով համակարգերի ձևավորմանը ու օգտագործմանը:

30. Մարդու և մարդկային հասարակության անշեղ զարգացումը բերում է գիտելիքի պաշարի հարստացման, դրա կիրառության ընդլայնման ու կիրառող սուբյեկտների կարողությունների աճի, ինչը չի կարող իր ազդեցությունը չունենալ գիտելիքահենքության մակարդակի վրա: Այն բերում է գործունեության գիտելիքահենքության բովանդակության ընդլայնման և մասշտաբի աստիճանական բարձրացման: Ուստի դրանք ժամանակի մեջ վերանայման և փոփոխված պայմաններին համապատասխանեցնելու կարիք ունեն: Դրա համար ևս անհրաժեշտ է պահանջվող նոտեցումների մշակում և որոշ բնութագրերի համար նորմատիվային մեծությունների սահմանում, դրանց գործնական կիրառման հանձնարարում:

31. Գործունեությունը նպատակային, արդյունավետ և գիտելիքի հիմքի վրա իրականացնելու պահանջները բավարարելու համար անհրաժեշտ է ուղղակիորեն կամ խորհրդատվության ձևով ուղղորդել, այսինքն՝ կառավարել այն: Կառավարող մարմնի կողմից մշակվող կամ առաջադրվող լուծումների հիմնավորվածության մակարդակից և իրականացման որակից կախված կլինի մարդկային գործունեության կարևորագույն բնութագիրը՝ գիտակացվածության աստիճանը: Ուստի կառավարումը ևս հանդիսանում է մարդկային գործունեությունը գիտակից լինելու անհրաժեշտ պայման, այդ գործունեության բաղադրատարր: Այսպիսով, մարդկության գլոբալ նպատակների՝ գոյատևման ու զարգացման իրագործումն ապահովող գիտակցված գործունեության հիմնարար պայմաններն ու տարրերն են. *նպատակայնությունը, դրա իրագործման բարձր արդյունավետությունը, գիտելիքահենք* ու *կառավարվող լինելու հանգամանքը*:

32. Մարդկային ցանկացած հանրության համար գիտակցված գործունեության և դրա տարրերի բարձր կարևորությունը պահանջում է վերջինի լիարժեք գիտակցում հասարակության և կառավարման տարբեր մակարդակների մարմիններում: Այդ տարրերի գիտագործնական բարձր մշակվածությանը, զարգացմանը, ինչպես և դրանց իրականացման համար պահանջվող պայմանների ապահովմանն ուղղված գործունեությունն օրենսդրորեն անհրաժեշտություն պետք է համարվի, ներառվի այդ մարմինների տիպային կանոնադրություններում որպես կարևոր գործառույթ:

33. Գործունեության գիտելիքահենքության բարձրացման կարևորագույն խնդրի լուծման ուղղությունների որոշման և միջոցառումների

մշակման համար պահանջվում է գիտելիքահենքության մակարդակի բավարար ճշտությամբ գնահատում: Գիտելիքահենք հասարակություն կառուցելու պայմաններում այդպիսի գնահատման մեթոդների մշակումն ու գործնական լայն կիրառությունը գործունեության ցանկացած ոլորտում, առավել ևս հանրային կառավարման վերին մակարդակներում, անհրաժեշտություն է, ուստի նաև անհրաժեշտ է դառնում այդ նպատակին ծառայող գիտական բարձրորակ հետազոտությունների իրականացումը, ստացվող մեթոդական մոտեցումների կիրառման կոնկրետ ցուցումների ձևավորումն ու հանձնարարումը կառավարման համապատասխան մարմիններին՝ ի կատարումն:

34. Գիտակցված գործունեության կառավարման համակարգ ձևավորելու, մարմինների ստեղծումը հիմնավորելու, գործունեությունը կանոնակարգելու և արդյունավետ իրականացնելու պայմաններ ստեղծելու համար անհրաժեշտ է նախապես պարզորոշել կառավարման յուրաքանչյուր մարմնի գործառույթների կազմն ու բովանդակությունը՝ գործունեության տվյալ ոլորտի առանձնահատկությունների հաշվառումով: Նկատի ունենալով գործունեությունների տեսակների բազմազանությունն ու մեծ թիվը՝ դրանց բոլորի համար առանձին-առանձին գործառույթների ցանկերի նախապես և միաժամանակ կազմումը հազիվ թե նպատակահարմար կարելի է համարել: Իսկ ընդհանրական ցանկը բավարար հստակություն և կոնկրետություն չի կարող ունենալ իր առանձնահատկություններն ունեցող գործունեության ճյուղում կիրառվելու համար: Նպատակահարմար կարելի է համարել բավարար մանրամասնությամբ գործառույթների ընդհանրական ցանկի ձևավորումը, ապա և դրա հիմքի վրա, ըստ անհրաժեշտության, կոնկրետ տեսակի գործունեության համար իր գործառույթների մանրամասնեցված ցանկի ձևավորումը: Կառավարման գործառույթների ինչպես ընդհանրական ցանկի, այնպես և կոնկրետ ոլորտներում մանրամասնեցված ցանկերի կազմման գործին մեծապես կարող է օժանդակել դրանց ձևավորման համար հիմք հանդիսացող հիմնական դրույթների մշակումն ու օգտագործումը:

35. Մարդկային գործունեության գիտելիքահենքության պահանջի իրագործումն անհրաժեշտաբար ենթադրում է նաև այդ գործունեությունը կառավարող մարմնի գործառույթների գիտելիքահենք լինելու, միանշանակ և ընկալելի ձևակերպում ստանալու, որպես ընդգրկված ցանկ ձևավորելու, կատարողների կողմից գիտակցված իրականացվելու, արդյունքների ու հետևանքների համար պատասխանատվություն կրելու, պարբերաբար վերանայվելու ու բարելավվելու պահանջները: Վերջինների կատարման անմիջական ազդեցությունը կառավարվող գործունեության և կառավարչական գործողությունների արդյունավետության մակարդակի վրա պահանջում է դրա կարևորությամբ համարժեք ուշադրություն, և կարող է դառնալ մեր երկրում գիտելիքահենք տնտեսություն ձևավորելու կարևոր պայմաններից մեկը:

36. Մարդկության զարգացման ինտենսիվությունը կախված է իր գիտակցված գործունեության մասշտաբից և գիտակցվածության աստիճանից, ինչն անհրաժեշտ է դարձնում այն գործոնների և ռազմավարական ուղղությունների խորը գիտական հետազոտությունն ու արդյունքների գործնական կիրառությունը, որոնց միջոցով հնարավոր կլինի ապահովել գործունեության մասշտաբի ընդլայնում, գիտակցվածության աստիճանի բարձրացում: Այս համատեքստում կարևորվում է գիտակցված գործունեության հիերարխիկ նկարագրի ձևավորումը՝ ներառած դրա կառուցվածքավորումը և դասակարգումը ըստ տարբեր բնութագրերի, տիպաբանությունների ձևավորումը և բազմակողմ գնահատումը համապատասխան մեթոդական մոտեցումների կիրառությամբ, որոնց մշակումը դասվելու է տնտեսագիտության առաջնայնությունների շարքին:

37. Բազմակողմ ու բարդ մարդկային գիտակցված գործունեության հիերարխիկ նկարագրի ձևավորումն իր ամբողջության մեջ մեծ դժվարությունների հետ է կապված, ուստի գործնականում ավելի նպատակահարմար է այդպիսի նկարագրեր ձևավորել գործունեության կոնկրետ ուղորտների համար՝ միայն ըստ անհրաժեշտության և ընդգրկելով հետազոտության կարևոր բնութագրերը: Այդպիսի նպատակային հիերարխիկ նկարագրերի ձևավորումն ընդհանրականի համեմատությամբ շատ ավելի փոքր աշխատատարություն և բարձր ճշտություն կունենա:

38. Նպատակայնություն, արդյունավետություն, գիտելիքահենքություն և կառավարում պարադիգմային պահանջների կատարումը միավորված ձևով պայմանավորում է գործունեության գիտակցվածության աստիճանը: Դրանցից յուրաքանչյուրն առանձին վերցրած ևս բնութագրում է այդ գործունեությունն իր որոշակի տեսանկյունից: Ուստի այդ պայմանները կարող են գործունեության տեսակավորման բնութագրեր դառնալ, ըստ որոնց կարելի է ձևավորել տվյալ գործունեության մասնակի կամ նաև ընդհանրային հիերարխիկ նկարագրերը: Այդ պարադիգմային պահանջների հաշվառումն անհրաժեշտ է նաև յուրաքանչյուր առանձին վերցրած պահանջի կատարման գործընթացում, ուստի դրանք բացի ողջ գործունեությունից, բնութագրեր են դառնում նաև յուրաքանչյուր առանձին պահանջի կատարման գործընթացի համար: Այս պայմանի գործնական իրագործումը կբարձրացնի ինչպես առանձին պարադիգմային պահանջի կատարման մակարդակը, այնպես և դրա միջոցով դրականորեն կազդի ողջ գործունեության գիտակցվածության աստիճանի վրա: Յետևաբար, այդ պայմանների կատարման աստիճանի բարձրացումը համապատասխան միջոցառումների մշակման և կիրառման միջոցով պետք է համարվի մարդկային գիտակցված գործունեության կառավարման գործառույթ և տարր:

39. Պարադիգմային պայմանների կատարման աստիճանի գնահատման կարևորությունը ինչպես ողջ գործունեության առումով, այնպես և առանձին պայմանների կատարման գործընթացներում անհրաժեշտ է դարձնում ներմուծել նոր հասկացություններ, ինչպես օրինակ՝

գործունեության պարադիգմի (տարբեր ընդգրկումներով) իրականացման աստիճան, պարադիգմային կառավարում, պարադիգմահենք գիտակցված գործունեություն, գործունեության նպատակայնություն, արդյունավետություն, գիտելիքահենքության աստիճան, կառավարում և այլ առնչվող հասկացություններ՝ տալով դրանց միանշանակ սահմանումներ:

40. Գիտակցված գործունեության հիերարխիկ նկարագրերի և տիպաբանությունների առկայությունը և պատշաճին օգտագործումը մեծապես կարող է նպաստել գործունեության կատարելագործման և բնութագրերի բարելավման շատ խնդիրների լուծմանը՝ որոշակի իրադրության ու պայմանների հաշվառումով: Ուստի որոշակի գործունեության համար համապատասխան տիպաբանությունների ձևավորումը պետք է համարվի կառավարող մարմնի գործառույթ:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. **Борисов А.Б.**, Большой экономический словарь. М., Книжный мир, 2006, 860 с.
2. Словарь современной экономической теории Макмиллана. Пер. с англ., М., ИНФРА-М, 1997, 608с.
3. **Բ. Դ. Եղիազարյան, Ա. Ս. Գյուրջյան**, Գիտակցված գործելու կարողության ձևավորումը՝ մարդկային ռեսուրսների զարգացման ռազմավարական ուղղություն, «Չանրային կառավարում», Երևան, 2007, N 1:
4. **Բ. Դ. Եղիազարյան, Ա. Ս. Գյուրջյան**, Մարդու գիտակցված գործելու կարողության կիրառումը՝ հասարակության զարգացման կարևորագույն գործոն, «Չանրային կառավարում», Երևան, 2007, N 2:

BENYAMIN YEGHIAZARYAN

*National Academy of Sciences,
Institute of Economics, Chief Scientific Researcher
Doctor of Sciences (Economics), Professor*

ARA GYURJYAN

*Presidency of the Republic of Armenia
Deputy Chief of Staff,
Doctor of Economics*

**CONSCIOUS ACTIVITY AND ISSUES RELATED TO
FORMATION OF KNOWLEDGE BASED ECONOMY**

The Nature has granted a human being with a greatest gift, i.e. the ability to think, as well as the capacity to use that ability and satisfy most of his/her demands through goods created thanks to conscious activity. During the centuries of existence, gradually the human being has increasingly recognized himself/herself through the capacity to think and act consciously, gradually developed and formed the current civilization. In these processes, s/he was able to reveal and investigate numerous issues related to mankind's existence and development, as well as suggest their solutions.

This process will continue in the future as well, bringing about many changes. Along with many existing problems, new issues will occur, which require solutions that promote the potential intensive development of a human being and his/her living conditions. Currently, the mankind is striving to formulate a **knowledge based economy** where each activity will be carried out based on the knowledge.

Transition to **knowledge based society**, along with the research of problems related to this process requires a new approach in the research to the solution of problems and, revision and clarification in case of necessity. The article touches upon a number of important and urgent problems for the society, our reflections on the directions of their solution.

ՀԱՅԿ ՄՈՎԱԽԱՅԱՆ

*ՀՀ պետական կառավարման ակադեմիայի
«Հանրային կառավարում և հանրային
ֆինանսներ» ամբիոնի ասպիրանտ*

**ՀՀ ԱՐՏԱՔԻՆ ԱՌԵՎՏՐԻ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ
ԴՐԱ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԿԱՌՈՒՑԱԿԱՐԳԸ**

Արտաքին տնտեսական գործունեության պետական քաղաքականությունը հետապնդում է մի շարք նպատակներ. պետության ինքնուրույնության պաշտպանություն, տնտեսական անվտանգության ապահովում, ազգային տնտեսության անխափան զարգացում և համաշխարհային տնտեսությանն ինտեգրվելու նախապայմանների ստեղծում: Աշխատանքի միջազգային բաժանման և մասնագիտացման խորացմանը զուգահեռ արտաքին առևտրային հոսքերի կարգավորման ու կառավարման հարցն ավելի կենսական է դառնում և արտաքին տնտեսական կապերն սկսում են տնտեսության կայուն զարգացման գործում մեծ դեր խաղալ: Արտաքին առևտրի կարգավորումը պետական միջամտության առանձին ոլորտ է, որն իրականացվում է արտաքին առևտրային քաղաքականության միջոցով:

Սոցիալիստական կարգերի փլուզումից հետո Հայաստանի Հանրապետությունում իրականացված տնտեսական և կառուցվածքային բարեփոխումների արդյունքում որդեգրվեց ազատական առևտրատնտեսական քաղաքականություն: Նման քաղաքականության կիրառումն ուղղված է արտահանման և ներմուծման կառուցակարգերի պարզեցմանը, ասպրանքարտադրողների շահերի պաշտպանությանը, արտահանման խթանմանը, արտաքին տնտեսական կապերի զարգացմանն ու սպառողների շահերի պաշտպանությանը: Այս առումով կարևորվում է Հայաստանի Հանրապետության անդամակցությունը Առևտրի համաշխարհային կազմակերպությանը (ԱՀԿ), որը երկրների միջև առևտրի կարգավորման կանոնների հարցերի դիտարկմամբ զբաղվող միակ միջազգային կազմակերպությունն է: Սա Հայաստանին հնարավորություն է ընձեռել 149 երկրի հետ առևտրային հարաբերություններ հաստատել «առավելագույն բարենպաստության ռեժիմի» շրջանակներում, ինչը լավ հիմք է հանդիսանում առաջին հերթին հայկական արտադրողների նկատմամբ խտրականության բացառման համար [1]: Բացի այդ, որպես ԱՀԿ անդամ, մեր երկիրն օգտվում է նաև այդ կազմակերպության շրջանակներում ընթացող բանակցությունների արդյունքում սակագնային և ոչ սակագնային արգելքների կրճատման շուրջ ձեռք բերված համաձայնություններից: Հարկ է նշել նաև, որ համաձայն ժնկի միջազգային հետազոտությունների որակավորման

ինստիտուտի ուսումնասիրության, ազատ առևտրատնտեսական համակարգի ձևավորման և թափանցիկության ապահովման առումով ԱՀԿ անդամ-երկրների շարքում Հայաստանը դասվել է երկրորդը՝ Նորվեգիայից հետո, ինչն ապացուցում է Հայաստանի հետևողականությունն ազատական սկզբունքների կյանքի կոչման գործում [2]:

Հայաստանի Հանրապետությունից արտահանումը ներկայումս ազատված է մաքսատուրքերից: ՀՀ օրենսդրությամբ դրանց համար սահմանված են որոշակի հարկային արտոնություններ: Մասնավորապես, արտահանվող ապրանքներից չի գանձվում ո՛չ ավելացված արժեքի հարկ և ո՛չ էլ ակցիզային հարկ: Նման հարկաթյուջետային քաղաքականության հիմնական նպատակն է խթանել արտահանումը և տնտեսավարող սուբյեկտների համար ստեղծել արտահանման հնարավորին նպաստավոր պայմաններ:

Հայաստանի Հանրապետությունում ապրանքների ներմուծման համար սահմանված է մաքսատուրքերի միասնականացված 2 դրույքաչափ՝ 0% և 10%, ընդ որում վերջին դրույքաչափը հիմնականում կիրառվում է պատրաստի արտադրանքի ներմուծման դեպքում:

Ամիրաժեշտ է նշել, որ Հայաստանում, փաստորեն, ամբողջովին վերացվել է և ներկայումս բացակայում է արտահանման և ներմուծման լիցենզավորումն ու քվոտավորումը, բացառությամբ Եվրամիության պահանջով գոյություն ունեցող տեքստիլ ապրանքների արտահանման լիցենզավորմանը: Սահմանափակումներ են գործում նաև մարդու կամ շրջակա միջավայրի համար վտանգավոր առարկաների՝ զենքի, զինամթերքի և պետական գաղտնիք հանդիսացող իրերի արտահանման և ներմուծման ոլորտում:

Ակցիզային հարկով հարկման ենթակա ապրանքները (ալկոհոլային խմիչքներ, ծխախոտ և վառելանյութեր՝ բացառությամբ բնական գազի) ՀՀ ներմուծվելիս ենթակա են հարկման մաքսային մարմինների կողմից: Այս դեպքում հարկման բազա է համարվում դրանց քանակը կամ ծավալը՝ արտահայտված օրենքով սահմանված չափման միավորներով: Ներմուծողը պարտավոր է վճարումները կատարել ներմուծման օրվանից 10 օրվա ընթացքում:

Հայաստան ներմուծվող ապրանքները հարկվում են նաև ԱԱՀ-ով, սակայն միայն «Ներմուծում ազատ շրջանառության համար» մաքսային ռեժիմի դեպքում: Հայաստանի Հանրապետություն ներմուծվող ապրանքներից ԱԱՀ հաշվարկվում և գանձվում է մաքսային մարմինների կողմից Հայաստանի Հանրապետության սահմանին, բացառությամբ՝ կազմակերպությունների և անհատ ձեռնարկատերերի կողմից ներմուծվող՝ օրենքով հաստատված ցանկում ընդգրկված այն ապրանքների, որոնց ներմուծման համար մաքսատուրքի դրույքաչափը սահմանված է 0%, և որոնք ենթակա չեն ակցիզային հարկով հարկման: ԱԱՀ-ի դրույքաչափը սահմանված է 20% ապրանքների ու ծառայությունների հարկվող շրջանառության նկատմամբ: ՀՀ օրենսդրությամբ սահմանված է նաև այն ապրանքների ցանկը, որոնց դեպքում

ԱԱՀ-ի վճարումը ներմուծման օրից կարող է հետաձգվել մինչև 1 տարի ժամկետով: Հարկ է նշել նաև, որ, ըստ ՀՀ մաքսային օրենսգրքի, բենզին և դիզելային վառելիք ներմուծողների համար ՀՀ-ում սահմանված է միասնական ֆիքսված վճար և՛ ակցիզային հարկի, և՛ ԱԱՀ-ի գծով [3]:

Մաքսային արժեքի որոշումը մեր երկրում սահմանված է ՀՀ Մաքսային օրենսգրքով, որը լիովին համապատասխանում է ԱՀԿ պահանջներին: Մաքսային սահմանով տեղափոխվող ապրանքի մաքսային արժեքն այն գումարն է, որը փաստացի վճարվել է, ենթակա է վճարման կամ պետք է վճարվեր ապրանքը ներմուծման երկիր արտահանելու նպատակով ձեռք բերելու և մինչև Հայաստանի Հանրապետության մաքսային սահմանը տեղափոխելու համար [4]: Հայաստանի Հանրապետության մաքսային սահմանով տեղափոխվող ապրանքների մաքսային արժեքը որոշվում է հայտարարատուի կողմից տրամադրված փաստաթղթերի հիման վրա: Այս մեթոդի անհնարինության դեպքում օրենսգրքով սահմանավում են նաև այլ դրույթներ: Դրանք են.

- մաքսային արժեքի որոշումն ըստ նույն ապրանքների գործարքի գնի,
- մաքսային արժեքի որոշումն ըստ համանման ապրանքների գործարքի գնի,
- ՀՀ ներքին շուկայում ապրանքի միավորի իրացման գնով,
- մաքսային արժեքի որոշումն ըստ հաշվարկային արժեքի,
- մաքսային արժեքի որոշման պահուստային մեթոդը, որը կիրառվում է նախորդ բոլորի անհնարինության դեպքում:

ՀՀ օրենսդրությամբ սահմանված ներմուծվող որոշ ապրանքների բացթողումն իրականացվում է միայն ստանադարտներին և տեխնիկական նորմերին համապատասխանության հավաստագրերի առկայության դեպքում, որոնք տրվում են անասնաբուժական, ֆիտոսանիտարական և էկոլոգիական փորձաքննությունների արդյունքում: Բացի այդ ՀՀ կառավարության կողմից հաստատված է նաև այն ապրանքների ցանկը, որոնց ներմուծումը ենթակա է պարտադիր հավաստագրման:

Հարկ է նշել, որ Հայաստանի արժույթային քաղաքականությունը նույնպես հիմնված է ազատական սկզբունքների վրա: 1997թ. մայիսին ՀՀ-ն ընդունել է Արժույթի միջազգային հիմնադրամի համաձայնագրի VIII հոդվածի 1-ին, 3-րդ և 4-րդ բաժիններով նախատեսված պարտավորությունները: Այս քայլով Հայաստանը պարտավորվել է չկիրառել ընթացիկ գործառնությունների և կապիտալի շարժի գործառնությունների հետ կապված սահմանափակումներ: Ապահովված է նաև դրամի լրիվ փոխարկելիությունը: Այսպիսի լիբերալ քաղաքականությունը ուղղված է արժույթային համակարգի առավել ազատականացմանը, ինչը նպաստում է ապրանքների և կապիտալի միջազգային հոսքերի մեծացմանը:

1994-ից Հայաստանը հանդիսանում է ԱՊՀ «Ազատ առևտրի գոտի ստեղծելու մասին» համաձայնագրի կողմ: Բացի այդ մեր երկիրը երկ-

կողմ ազատ առևտրի պայմանագրեր է կնքել Ռուսաստանի, Ուկրաինայի, Բելոռուսի, Վրաստանի, Թուրքմենստանի, Մոլդովայի, Ղրղզստանի, Ղազախստանի և Տաջիկստանի հետ [5]:

Այսպիսով, ՀՀ կողմից ազատական առևտրային քաղաքականության ձևավորումը և հետևողական իրականացումը հանգեցրեց երկրի արտահանման ու ներմուծման ծավալների տարեցտարի մեծացմանը, առևտրի աշխարհագրության ընդլայնմանը, ինչը նոր հնարավորություններ ստեղծեց Հայաստանում արտադրության զարգացման և արտահանման ներուժի բացահայտման համար: Ակնհայտ է, որ սահմանափակ ներքին շուկայի պայմաններում հանրապետության տնտեսությունն իր ապագա զարգացման խնդիրների լուծման ընթացքում պետք է մեծապես կողմնորոշվի դեպի արտաքին շուկաներ: Այս պայմաններում պետության խնդիրն է արտաքին առևտրային հավասարակշիռ քաղաքականության շնորհիվ ապահովել ներքին արտադրողների մրցունակությունն արտաքին շուկաներում: Միջազգային անհաշտ մրցակցության պայմաններում հույժ կարևոր է, որ պետությունն առևտրային պատշաճ պայմաններ ստեղծի ներքին արտադրողների համար, որպեսզի վերջիններս համաշխարհային շուկայում իրենց կայուն տեղը գտնեն:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. www.arm-wto.am
2. «Միջազգային առևտրի հիմնախնդիրները և Հայաստանը», (Միջազգային գիտաժողովի նյութեր), Երևան 2005:
3. «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենք:
4. ՀՀ Մաքսային օրենսգիրք:
5. ՀՀ միջազգային պայմանագրերի պաշտոնական տեղեկագիր, ՀՀ արտաքին գործերի նախարարության պաշտոնական տեղեկագիր, 2006:

HAYK MOVSISYAN

*Post-graduate Student of the
Public Administration Academy
of the Republic of Armenia*

THE FOREIGN TRADE POLICY OF RA AND THE MECHANISMS OF ITS REGULATION

The state policy to foreign economic activity has some certain purposes: provision of state independence and economic safety, development of the national economy and formation of prerequisites for integrating to world economy. Parallel with deepening the international division of labor and specialization, more actual becomes the question about regulation and management of foreign trade flows. The regulation to foreign trade is a separate sphere of state interference, which is realized by means of foreign trade policy.

After the collapse of Soviet Union Armenia has adopted liberal foreign trade policy, allows to simplify the mechanisms of the export and import, develop the foreign economic relations, stimulate the export and to protect the interests of the consumers. In this context an important role gains the membership of Republic of Armenia to World Trade Organization, which is the single international organization concerned with the rules of foreign trade regulation.

ՍՈՒՐԵՆ ԹՈՐՈՍՅԱՆ

ՀՀ պետական կառավարման
ակադեմիայի ասպիրանտ

ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՓՈԽՋԱՐՎԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՊԵՏԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՀԵՏ

Տեղական ինքնակառավարման իրավական հիմք համարվում է ՀՀ Սահմանադրությունում և օրենքներում պարունակվող իրավական նորմերի ամբողջությունը, որով ամրագրում են տեղական նշանակության խնդիրների լուծմանը նպատակաուղղված իրավական, ֆինանսատնտեսական և կազմակերպակառավարչական գործունեության, համայնքների համար առավել սկզբունքային, կարևոր, ընդհանուր գործառույթները: Օրենքը դրանով իսկ ամրագրում է տեղական ինքնակառավարման մարմինների (այսուհետ՝ ՏԻՄ) լիազորությունները, որոնց բնորոշիչներն են՝

- օրենքով ամրագրված ՏԻՄ-երի լիազորություններն իրավունքների և պարտականությունների միասնությունն են.

- ՏԻՄ-երի լիազորություններն ամրագրվում են օրենքով.

- ՏԻՄ-երի ցանկացած լիազորություն իրագործվում է վարչակարգադրիչ կամ նորմասահմանիչ բնույթի իշխանական գործողությունների կատարման միջոցով.

- տեղական նշանակության հարցերը լուծելու համար ՏԻՄ-երն օժտված են սեփական իշխանական լիազորություններով:

Այստեղից, ՏԻՄ-երի լիազորությունները կարելի է սահմանել որպես այդ մարմինների՝ տեղական նշանակության հարցերի լուծման համար անհրաժեշտ ամրագրվող իրավունքների և պարտականությունների ամբողջություն:

Այդ լիազորությունները ստորաբաժանվում են պետության կողմից *պատվիրակված և սեփական* լիազորությունների: Վերջիններս իրենց հերթին ստորաբաժանվում են *պարտադիր և կամավոր* լիազորությունների:

ՏԻՄ-երի պարտադիր լիազորությունները և դրանց իրականացման կարգը սահմանված են օրենքով: Պետական մարմիններին վերապահված լիազորությունների իրականացումը կարող է, ըստ օրենքի, փոխանցվել համայնքներին՝ որպես պետության պատվիրակված լիազորություններ: Պետության պատվիրակված լիազորություններն իրականացվում են օրենքով կամ ՀՀ կառավարության սահմանած կարգով: Պետության պատվիրակված լիազորություններն ամբողջովին և պար-

տադիր ֆինանսավորվում են պետական բյուջեից պետության պատվիրակած լիազորությունների ֆինանսավորման նպատակով նախատեսված հատկացումների հաշվին: Պարտադիր և պետության պատվիրակած լիազորությունները ենթակա են համայնքի կողմից առաջնահերթությամբ և օրենքով սահմանված կարգով կատարման:

Կամավոր լիազորություններն իրականացվում են համայնքի բյուջեով նախատեսված հատկացումներին համապատասխան և ավագանու սահմանած կարգով:

«Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքում թվարկված կամավոր լիազորությունները սպառիչ չեն: Այլ օրենքներով տեղական ինքնակառավարման մարմիններին վերապահված լիազորությունները համայնքները կարող են իրականացնել միայն որպես կամավոր լիազորություններ: Տեղական ինքնակառավարման մարմինները կարող են նաև իրականացնել համայնքային շահերին վերաբերող, օրենքին չհակասող ցանկացած գործունեություն:

Այս համատեքստում փորձենք ներկայացնել ՏԻՄ-երի փոխհարաբերությունների համակարգը:

Օրենքների ընդունման առումով ԱԺ-ում տեղական ինքնակառավարման հարցերով զբաղվող հանձնաժողով է համարվում պետական-իրավական հարցերի մշտական հանձնաժողովը: Որպես կանոն՝ այդ հանձնաժողովը դիտվում է գլխադասային տեղական ինքնակառավարման բոլոր օրենսդրական նախաձեռնությունների քննարկման ժամանակ: Իսկ եթե ԱԺ-ի քննարկմանն են ներկայացվում օրինագծեր, որոնք առնչվում են ֆինանսական համահարթեցմանը, բյուջետային հատկացումներին, բյուջետային հարաբերությունները կարգավորող խնդիրներին, ապա պետաիրավական հարցերի հանձնաժողովի հետ միաժամանակ որպես գլխադասային հանձնաժողովներ են ճանաչվում նաև ֆինանսավարկային և բյուջետային, ինչպես նաև տնտեսական հարցերի մշտական հանձնաժողովները [1, էջ 39]:

Այժմ ընդունված օրենքում հստակեցվում են նաև մի շարք այլ պարզաբանումներ՝ կապված համայնքների և պետության փոխհարաբերությունների հետ: Նոր օրենքով սահմանվում է մեկ դրույթ, ըստ որի այսուհետ յուրաքանչյուր տարվա պետական բյուջեն հաստատելիս Ազգային ժողովը պետք է հաստատի նաև եկամտահարկի, շահութահարկի և բնապահպանական վճարների մասհանումների այն դրույթաչափերը, որոնք ուղղվելու են համայնքային բյուջեներ: «ՀՀ վարչատարածքային բաժանման մասին» ՀՀ օրենքով [2, էջ 423] օրենսդիրն ունի բացառիկ և կարևորագույն իրավասություն. որոշում է համայնքների թիվը, անվանում ու վերանվանում, միավորում ու տարանջատում դրանք, այխիսնքն՝ երկրի վարչատարածքային բաժանման հետ կապված հարցերը գտնվում են ԱԺ-ի իրավասության ներքո: Ի դեպ, սա այն բացառիկ դեպքերից է, երբ օրենսդրական նախաձեռնության իրավունքը պատկանում է բացառապես ՀՀ կառավարությանը, այսինքն՝ ԱԺ-ի

պատգամավորները չեն կարող նախաձեռնել վարչատարածքային բաժանման փոփոխություն կամ նոր բաժանման սահմանում:

Ազգային ժողովի ընդունած մի շարք օրենքներ ուղղակի կամ անուղղակի առնչվում են տեղական ինքնակառավարման համակարգում ծառայած խնդիրներին: Այդ խմբին են պատկանում «Աղետի գոտու վերականգնման համալիր միջոցառումների մասին օրենքը», «Սահմանամերձ տարածաշրջանների մասին օրենքը», որոնք միտում ունեն բարելավելու համապատասխան համայնքի սոցիալ-տնտեսական վիճակը՝ հենվելով պետության աջակցություն վրա: «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքը սահմանում է նաև, որ համայնքի շահերին վերաբերող, բայց իր իրավասությունից դուրս գտնվող հարցերի առնչությամբ ավագանին կարող է ընդունել ուղերձ՝ ուղղված համայնքի բնակչությանը, ղեկավարին, մարզպետին կամ պետական այլ մարմնին: Նման գաղափարը ենթադրում է, որ «պետական այլ մարմինների» շարքում համայնքի ավագանին ուղերձով կարող է դիմել նաև Ազգային ժողովին: Ըստ օրենքի՝ պետական մարմիններն ավագանու ընդունած ուղերձը ստանալու օրվանից մեկամսյա ժամկետում պարտավոր են քննության առնել և արդյունքների մասին պաշտոնապես տեղեկացնել ավագանուն:

Հատուկ ուշադրության է արժանի օրենսդիր իշխանության և ՏԻՄ-երի փոխհարաբերությունների օրենքի այն ձևակերպումը, համաձայն որի ՀՀ Ազգային ժողովի կողմից ընդունած օրենքներով՝ համայնքների եկամուտների նվազեցումը և ծախսերի ավելացումը պետք է փոխհատուցի պետությունը: Այս դրույթը բխում է պրակտիկ կիրառման հետևությունից, որտեղ շատ են դեպքեր, երբ Ազգային ժողովը հարկային արտոնություններ է տրամադրում տարբեր ընկերություններին: Տվյալ արտոնությունները վերաբերվում են նաև համայնքի արդեն իսկ պլանավորած բյուջեի նախատեսված եկամտի աղբյուրներին: Սրանով իսկ հստակեցվում է, որ այսուհետ նման արտոնություններ սահմանելու դեպքում համայնքների բյուջեներին պետական բյուջեից պետք է փոխանցվի այն գումարի տարբերությունը, որոնք առաջացել են արտոնությունները սահմանելիս: Նման դրույթը երաշխավորում է համայնքի բյուջեի ֆինանսական անկախությունը պետական, քաղաքական լոբբինգից, միակողմանի շահութաբեր գործարքներից և այլն:

Տեղական ինքնակառավարման գործընթացն արդյունավետ իրականացնելու նպատակով օրենքով նախատեսված է համայնքների վերահսկողությունը Ազգային ժողովի և ՀՀ կառավարության կողմից:

Ազգային ժողովի վերահսկողական գործառույթն իրագործում էր ՀՀ Վերահսկիչ պալատը ոչ ավել քան տարին մեկ անգամ, որով ստուգվում են համայնքային և միջհամայնքային միավորներին տրամադրված ֆինանսական միջոցների նպատակային օգտագործումը: ՀՀ սահմանադրության բարեփոխված տարբերակում Վերահսկիչ պալատը ստացել է անկախ մարմնի կարգավիճակ, որից կարելի է ենթադրել, որ փոփոխության կենթարկվեն Վերահսկիչ պալատի որոշ գործա-

ռուլթներ, սակայն, բոլոր դեպքերում, այն կկատարի իր հիմնական գործառույթը, այսինքն՝ կիրականացնի վերահսկողություն բյուջետային միջոցների և պետական ու համայնքային սեփականության օգտագործման նկատմամբ:

Հարաբերություններն այլ են գործադիր իշխանության հետ: Դրանք կարելի է տարանջատել ըստ մակարդակների (*տես Գծանկար 1.1*), որոնք են.

- կառավարության հետ փոխհարաբերություններ,
- նախարարությունների հետ փոխհարաբերություններ,
- գերատեսչությունների հետ փոխհարաբերություններ,
- գործակալությունների հետ փոխհարաբերություններ,
- հանրապետական գործադիր մարմինների տարածքային ծառայությունների հետ փոխհարաբերություններ,
- մարզպետների հետ փոխհարաբերություններ:


ՏԻՄ-երի և գործադիր իշխանության փոխհարաբերությունները հիմնականում առնչվում են համայնքի ղեկավարի գործունեությանը, որի իրավասությունների բնագավառն են հանդիսանում համայնքի պաշտպանությունը, հողօգտագործումը, ֆինանսական ոլորտը և այլն: Տվյալ խնդիրներն իրականացնելիս համայնքի ղեկավարն ուղղակի և անուղղակի գործնական և աշխատանքային հարաբերությունների մեջ է մտնում հանրապետական գործադիր մարմինների հետ: ՀՀ օրենքով համայնքի ղեկավարին, գործադիր իշխանության հետ փոխհարաբերություններով պայմանավորված, վերապահված են մի շարք լիազորություններ՝ ըստ տարբեր բնագավառների: Մի շարք խնդիրներ ՏԻՄ-երը կարող են լուծել միայն պետական լիազորված մարմնի համաձայնությամբ, որոնք են՝ համայնքի սեփականություն համարվող հողի, գույքի, այդ թվում նաև հաղորդակցության ուղիների օտարումը, համայնքի ղեկավարի կողմից համայնքի սոցիալական ենթակառուցվածքը զարգացնելու նպատակով ներդրումներ կատարելու համար վարկ ստանալու պայմանագրեր կնքելը, արժեթղթեր թողարկելը և այլն:

Մի շարք բնագավառներում, ինչպիսին են՝ ֆինանսները, քաղաքաշինությունը, հողօգտագործումը, հասարակական կարգի պահպանությունը, տրանսպորտը, համայնքի ղեկավարն իր լիազորություններն իրականացնում է նաև ՀՀ կառավարության սահմանած կարգերին, պահանջներին և չափանիշներին համապատասխան:

Առանձնահատուկ տեղ է գրավում ՏԻՄ-երի հետ բյուջետային բնագավառում գործադիր իշխանության փոխհարաբերությունը [4]:

Գծանկար 1.1

Տեղական ինքնակառավարման մարմինների հիմնական փոխհարաբերությունների համակարգի կառուցվածքը [3, էջ 291]



Համապատասխան մարզպետարանը և լիազորված մարմինը մեթոդական և խորհրդատվական օգնություն են ցույց տալիս համայնքի բյուջեի նախագծի մշակման նախապատրաստման ընթացքում և սահմանված կարգով վերահսկում գործընթացը: Ուղեցույցները յուրաքանչյուր տարի մշակվում են պետական լիազորված մարմնի կողմից՝ ՏԻՄ-երի տվյալ տարվա օրենսդրական և ենթօրենսդրական փոփոխությունները

իրազեկելու նպատակով: Սակայն մեթոդական օգնություն ցույց տալուց մարզպետարանն իրավասու չէ որոշելու համայնքի եկամուտների ձևավորման աղբյուրները կամ ծախսման բնագավառները:

«Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքով նախատեսվում է, որ համայնքի բյուջեի եկամտի աղբյուր են հանդիսանում նաև եկամտահարկից, շահութահարկից մասհանումներ և բնապահպանական վճարներից, որոնց տոկոսաչափերը սահմանվում են յուրաքանչյուր տարվա բյուջեի մասին օրենքով: Քանի որ պետական բյուջեի նախագիծը մշակվում է ՀՀ կառավարության կողմից, ապա դրանց սահմանումը պայմանավորված է Կառավարության և ՏԻՄ-երի փոխհարաբերությամբ, ինչպես նաև տվյալ բնագավառում այն քաղաքականությամբ, որը վարում է Կառավարությունը: Սրա արդյունքով է նույնպես պայմանավորվում ֆինանսական համահարթեցման սկզբունքով պետական բյուջեից տրամադրվող դոտացիաների և սուբվենցիաների չափերը: Համաձայն օրենքի՝ համայնքի բյուջեի կատարման սպասարկումն իրականացվում է ՀՀ ֆինանսների և եկամտնիկայի նախարարության միասնական գանձապետական համակարգի՝ տեղական գանձապետական բաժանմունքների միջոցով: ՏԻՄ-երի կողմից համապատասխան գանձապետական բաժանմունք է ներկայացվում համայնքի բյուջեն, իսկ վերջինս ապահովում է նախատեսված միջոցների հատկացումը:

ՏԻՄ-երը համայնքի բյուջեի մուտքերի ապահովման կապակցությամբ փոխհարաբերությունների մեջ են մտնում պետական հարկային մարմինների [5] հետ, որոնք ապահովում են շահութահարկի, եկամտահարկի մասհանումների մուտքը համայնքի բյուջե¹: Բյուջեի մյուս եկամտատեսակների, այդ թվում հողի հարկի, գույքահարկի, տեղական տուրքերի և վճարների և այլն եկամտատեսակների հավաքագրումն իրականացնում են համայնքների համապատասխան ստորաբաժանումները: Նախքան այս օրենսդրական փոփոխությունները, հողի հարկի և գույքահարկի հավաքագրումն իրականացնում էին հարկային տեսչության աշխատակիցները: Սակայն ներկա գործող օրենքը ենթադրում է պետական հարկային մարմինների և ՏԻՄ-երի միջև սերտ համագործակցություն ու տվյալների բազայի ստեղծման, և դրանց հավաքագրման համակարգում:

Բացի վերոհիշյալ կառավարություն - համայնք հարաբերություններից, հարաբերություններ են հաստատվում նաև այլ մակարդակներում, օրինակ՝ ավագանու և միջհամայնքային միավորման խորհրդի որոշումների օրինականության և գործող իրավական դաշտի համապատասխանության նպատակով իրավական վերահսկողություն է իրականացնում մարզպետը: Սա չի ենթադրում մարզպետի կողմից դրանցում փոփոխությունների կամ ուղղումների գործառնություն: Եթե

¹ Հարկ ենք համարում նշել, որ դեռևս տեղական ինքնակառավարման համակարգի ձևավորման պահից սկսված ԱԺ-ի կամ ՀՀ կառավարության կողմից տեղական ինքնակառավարման մարմինների բյուջեներ մասհանումներ չեն նախատեսվել:

մարզպետի առաջարկությամբ օրենքին հակասող այս կամ այն փոփոխությունն ավագանու կամ միջհամայնքային միավորման խորհրդի կողմից չի իրականացվում, ապա նա կարող է դիմել դատարան խնդրի վերջնական լուծում համար:

Իշխանության մարմինների և ՏԻՄ-երի միջև գոյություն ունեն նաև, ինչպես նշեցինք՝ խորհրդատվական բնույթի հարաբերություններ, որոնք իրականացվում են մարզի խորհրդի (Երևանի խորհրդի) [6] միջոցով: Վերջինս, խորհրդատվական մարմին լինելուց բացի, օժտված է նաև որոշումներ ընդունելու իրավասությամբ: Մարզի խորհրդի (Երևանի խորհրդի) կազմում ընդգրկվում են մարզպետը (Երևանի քաղաքպետը) և համայնքների ղեկավարները: Մարզերի խորհուրդներում կարող են բարձրացնել և քննարկման առարկա դառնալ համայնքների և մարզի սոցիալ-տնտեսական հիմնախնդիրներին առնչվող ցանկացած հարց, որոնք հետագայում, անհրաժեշտության դեպքում, մարզպետի միջոցով քննարկման են ուղարկվում համապատասխան ատյաններ:

Մարզպետների միջոցով է հիմնականում իրականացվում ՏԻՄ-երի և գործադիր իշխանության մյուս մարմինների փոխհարաբերությունները, քանի որ նրանք համայնքներում առավել մոտ կանգնած գործադիր իշխանության մարմիններն են և վերջիններիս է վերապահված համակարգման և ՏԻՄ-երի գործունեության ներդաշնակության ապահովման իրավասությունը: Մարզպետների և ՏԻՄ-երի փոխհարաբերությունները կարող են առնչվել համայնքային նշանակության խնդիրների լուծման ընթացքում պետությունից ակնկալվող աջակցության ապահովման, Կառավարության կողմց իրականացվող վերահսկողության և այլ հարցերին:

Մարզպետների և ՏԻՄ-երի փոխհարաբերությունները նախկինում առնչվում էին նաև համայնքի ղեկավարին պաշտոնանկ անելու կամ նրա լիազորությունները վաղաժամկետ դադարեցնելու գործընթացների հետ, իսկ այժմ 2005-ի սահմանադրական բարեփոխումներից [7] հետո, համայնքի ղեկավարին պաշտոնանկ անելու իրավունքը տված է ՀՀ կառավարությանը, որն օրենքով նախատեսված դեպքերում սահմանդրական դատարանի եզրակացության հիման վրա կարող է պաշտոնանկ անել համայնքի ղեկավարին:

Սրանով սակայն չեն սահմանափակվում ՏԻՄ-երի և պետական կառավարման մարմինների փոխհարաբերությունները: ՏԻՄ-երն իրենց գործունեության ընթացքում որոշակի հարաբերությունների մեջ են մտնում դատական և դատախազական մարմինների հետ:

Հիմնական եզրակացությունն այն է, որ և՛ բյուջետային մի շարք հարցերում, և՛ սեփական լիազորությունների կատարման տեսանկյունից համայնքները դեռևս բազմաթիվ թելերով կապված են պետական կառավարման տարբեր մարմինների հետ, որի արդյունքում առաջին հերթին խախտվում է ՏԻՄ-երի ինքնուրույն գործելու սկզբունքը, ինչպես նաև կենտրոնացման և ապակենտրոնացման համամասնությունները: Այնուամենայնիվ, տեղական ինքնակառավարման համա-

կարգը մեր երկրում զարգանում է, կատարելագործվում են և առավել բարձր մակարդակի վրա են դրվում փոխհարաբերությունները համապետական կառավարման ու տարածքային կառավարման մարմինների միջև, որն անշուշտ իր դրական անդրադարձն է թողնում համայնքային մի շարք հիմնախնդիրների լուծման գործում:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. *Ղազարյան Է.*, Պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների փոխհարաբերությունները ՀՀ-ում, Եր., Դար, 2006:
2. «Հայաստանի Հանրապետության վարչատարածքային բաժանման մասին» ՀՀ օրենքը ՀՀ ԱԺՏ 1995/99 ՀՀ 05.12.95/300 էջ 423:
3. Տեղական ինքնակառավարման հիմունքներ: Ուսումնական ձեռնարկ, Է.Յ. Օրոյան ընդհ. խմբ., Երևան, «Պետական ծառայություն», 2000:
4. ՀՀ Նախագահի 16.03.2002 «ՀՀ կառավարության գործունեության կարգը սահմանելու մասին» ՆՀ-1064 հրամանագրում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին 8.04.2004, ՀՀ ՊՏ N 22 (321), 16.04.2004:
5. «ՀՀ կառավարությանն առընթեր հարկային պետական ծառայության կանոնադրությունն ու աշխատակազմի կառուցվածքը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշում N 1926-Ն 21.11.2002թ. ՀՀ ՊՏ N 58 (223), 26.12.2002:
6. «Հայաստանի Հանրապետության մարզերում պետական կառավարման մասին» ՀՀ Նախագահի 06.05.97թ. ՆՀ-728 հրամանագիրը, և «Երևան քաղաքում պետական կառավարման մասին» ՀՀ Նախագահի հրամանագիրը 6.05.1997թ. ՆՀ - 727:
7. «ՀՀ Սահմանադրություն» (փոփոխություններով), ՀՀ ՊՏ (հատուկ թողարկում) ընդունվել է 27.11.2005, ուժի մեջ է մտել 05.12.2005:

SUREN TOROSYAN

*Post-graduate Student of the
Public Administration Academy
of the Republic of Armenia*

**LOCAL SELF-GOVERNMENT INSTITUTIONS RELATIONSHIP
WITH PUBLIC ADMINISTRATION BODIES**

The article deals with local self-government institutions relationship with public administration bodies. Analysis of the existing relationship we find many unsolved problems that we have to solve for further development of local self-government system. Local self-government in many communities is formal. There is no clear distribution of functions between levels of public administration system, which often making various problems. One of these problems are connected with financing local self-government bodies. The experience of local self-governance in Armenia shows that communities are quiet weak in financial terms. Further development of local self-governance system would be impossible without strengthening its financial sustainability.

ՄԱՐԻԱՄ ՄԱՐԳԱՐՅԱՆ

*ՀՀ պետական կառավարման ակադեմիայի
քաղաքագիտության ամբիոնի վարիչ,
քաղաքական գիտությունների դոկտոր*

**ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԽՄԲՈՒՄԸ ՈՐՊԵՍ ՀԱՆՐԱՅԻՆ
ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԿԱՅԱՑՄԱՆ ԳՐԱՎԱԿԱՆ**

Հանրային կառավարման համակարգը հասարակության ինքնակազմակերպման, ինքնավերարտադրման, ինքնաֆինանսավորման և այլ համակարգերի հետ համագործակցության ժամանակ ի հայտ եկած փոփոխությունները վերլուծող, ծրագրավորող, շահադրող, արդիականացնող համալիր ամբողջություն է: Որպես այդպիսին այն բացահայտում է հանրային քաղաքականության բազմաչափությունն ու բնականոն փոփոխությունների նորարարական բնույթը: Քաղաքական գիտության կառուցվածքում հանրային կառավարման համակարգը դիտարկվում է որպես սոցիալական դերակատարների միջև եղած փոխազդեցությունների և փոխհամագործակցությունների ցանց, որի արդյունքում հաստատվում է ժողովրդավարության համախմբում: Վերջինս վերաբերում է քաղաքական զարգացման ողջ գործընթացին, ներկայացուցչական ժողովրդավարության հաստատման մրցակցության կանոններին՝ քաղաքական ուժերի փոխհարաբերությունների, քաղաքական մշակույթի կերպափոխմանը բնորոշ առանձնահատկություններին և օրինաչափություններին: Ժողովրդավարության համախմբումը հնարավորություն է տալիս ուսումնասիրել հանրային կառավարման համակարգի կայացման մոդելի բազմաչափությունը որպես քաղաքական զարգացման գործընթաց: Այստեղից էլ հանրային կառավարման համակարգն *ուճիվերսալ* է, քանի որ ներառում է ամբողջ հասարակությունը: Միաժամանակ այն իրականացնում է լիակատար *վերահսկողություն*՝ ոչ միայն հարկադրանք, այլև համոզման, շահադրման այլընտրանքային մեթոդներ կիրառելով, իսկ որոշումներ *մշակելու, ընդունելու և իրականացնելու* նրա իրավունքը համարվում է *լեզալ*, քանի որ իրենց մեջ կրելով լեգիտիմության ուժը, հավատը և վստահությունը՝ անվերապահ ընդունվում են քաղաքացիների կողմից:

1.1 Ժողովրդավարության համախմբման հիմնախնդիրները և գործոնները

Ժողովրդավարության համախմբումը կառավարման մենիշխանական ձևից ժողովրդավարականին անցնելու վճռորոշ փուլն է: Այն սկսվում է նախորդ վարչակարգի հետ վճռական խզումից հետո, երբ նոր ժողովրդավար ընտրանիներն ու առաջնորդները հանդես են գալիս հանրային կառավարման նոր համակարգի կայացման օգտին:

Ժողովրդավարության համախմբման հետազոտության մեջ դիտարկվում են մի քանի մոտեցումներ՝ *կառուցվածքային, անցումագիտական, ինստիտուցիոնալ*: Ինչպես նշում է ռուս քաղաքագետ Լ. Սնորգունովը, «*կառուցվածքային մոտեցումն* ուշադրությունը սևեռում է ժողովրդավարացման գործընթացն որոշող արտաքին պայմանների վրա: *Անցումագիտական մոտեցումը* կապված է քաղաքականության մեջ գործող դերակատարների՝ քաղաքական կյանքի ժողովրդավարական ձևեր ընտրելու տեսության հետ: *Ինստիտուցիոնալ մոտեցումը* նշում է տարբեր ինստիտուցիոնալացված վարչակարգերի դերը ժողովրդավարության ամրապնդման գործընթացում» [1, c. 224]:

Անցումագետները վարչակարգային փոփոխության մեջ սկզբունքային են համարում երեք հանգամանք. *1. ազատականացում, 2. քաղաքացիական հասարակության ձևավորում կամ վերականգնում, և այս ենթատեքստում, 3. նախօրոք անհայտ արդյունքներով արդար ընտրությունների անցկացում*: Սակայն վարչակարգային անցումները հնարավոր չէ բացատրել բացառապես ընտրությունների անցկացման միջոցով կամ դրանց արդյունքներով, քանի որ իրավիճակային կառավարման պայմաններում անտեսվում են բազում ազատական և ժողովրդավարական փոփոխություններ, որն էլ հանգեցնում է «*ընտրազանգվածային ժողովրդավարության*»: Ինչպես նշում են Տ. Լ. Կարլը և Ֆ. Շմիտտերը, «նման սխալը բնորոշ է աշխարհում բոլոր տարածաշրջանների ժողովրդավարության ուսումնասիրություններին, ոչ միայն ԿԱԵ (Կենտրոնական և Արևելյան Եվրոպայի) և ՆԽՄ-ի (Նախկին Խորհրդային Միության) երկրներում, հնարավոր է այն պատճառով, որ շատ հեշտ է ընտրություններին հետևել, դրանց արդյունքները դժվար չէ ներկայացնել թվային տեսքով և դասակարգել: Բայց սա բոլորովին այն չէ, ինչի մասին խոսվում է անցումային գրականության մեջ, և նման պրակտիկան կասկածելի է ինչպես էմպիրիկ, այնպես էլ նորմատիվ տեսանկյունից» [2, c. 6]: Հանրային կառավարման համակարգի կայացման տրամաբանությունն ուսումնասիրելու համար անհրաժեշտ է պարզել «անցման պայմանը»: Օրինակ, եթե ժողովրդավարացման սկզբնական փուլում «անցման պայմանը» ազատականացման գործընթացն է, որին մի դեպքում բնորոշ է ընտրանու տարանջատվածությունը՝ «կոշտ» և «փափուկ» զծերի, ապա մյուս դեպքում՝ ոչ: Այս առումով ուշագրավ ենք համարում Մ. Մաքֆուլի էմպիրիկ եզրահանգումը,

որ ընտրանիների տարանջատումը «նախկին կոմունիստական երկրների ազատականացման» գլխավոր պատճառը չէ [3, p. 8]:

Ընտրանու նման տարանջատվածությունը *իրական, պոտենցիալ* կամ նույնիսկ *երևակայական* հասարակական ընդվզումների արդյունք է, և հենց դրանով է պայմանավորված այն հանգամանքը, թե արդյոք դա հնարավորություն կտա քաղաքացիական հասարակության ինստիտուտների ստեղծմանը կամ վերականգնմանը: Ըստ «Ազատությունների տան» [4] փորձագիտական հետազոտությունների՝ Ալբանիայում, Ադրբեջանում, Բելոռուսում, Բուլղարիայում, Էստոնիայում, Լիտվայում, Մակեդոնիայում, Ռումինիայում, Ռուսաստանում, Սերբիայում, Սլովենիայում և Ուկրաինայում հասարակության ժողովրդավարական կերպափոխման վաղ շրջանում դրա անցկացման գլխավոր գաղափարախոսները կոմունիստական կուսակցության *ներսում* գործող «նոր ժողովրդավարներն» էին, որոնք փորձում էին օգտագործել կուսակցության կազմակերպչական ենթակառուցվածքները՝ ընթացող վարչակարգային փոփոխությունների աճի վրա վերահսկողություն սահմանելու համար: Մեր կարծիքով համանման սխեմա փորձվեց իրականացվել նաև ՀՀ-ի հանրային կառավարման համակարգի ձևավորման համար, սակայն այստեղ կոմունիստական կուսակցության ներսում գործող «նոր ժողովրդավարները» ուժեղ չէին:

Հանրագումարելով XX դարի 50-60-ական թվականներին Աֆրիկայում և Լատինական Ամերիկայում ընթացող ժողովրդավարացման փորձը՝ դեռ 1986թ. Գ. Օ'Ղոննելը և Ֆ. Շմիտտերը [5, p. 73] ստիպված էին խոստովանել, որ այդ երկրները թևակոխել են «կախյալ զարգացման» փուլ, իսկ ձևավորված հանրային կառավարման համակարգն անարդյունավետ է, քանզի չի հաստատվել ժողովրդավարության համախմբում: Ուստի այդ երկրներում ժողովրդավարական հանրային կառավարման համակարգի կայացման տեսական նոր դրույթներ մշակելու ակնկալիքով նրանք քննարկեցին «ժողովրդավարության համախմբում» հասկացությունը որպես կատեգորիալ գիտաբան: Այս առումով Ֆ.Շմիտտերը գրում է, որ ժողովրդավարացման մասին ներկայիս բանավեճը «բացասական վերաբերմունք է ներառում լայնորեն տարածված նախորդ դատողության նկատմամբ, ըստ որի, ժողովրդավարությունը գործառական պայման է կամ բարոյական հրամայական: Ո՛չ տնտեսական զարգացման մակարդակը, ո՛չ էլ բուրժուազիայի գերիշխանությունը չեն կարող ինքնաբերաբար երաշխավորել ժողովրդավարության առաջացումը ու, առավել ևս, ամրապնդումը: Այդ վարչակարգը նաև քաղաքակրթության, գրագիտության, կրթական հաջողությունների կամ առանձնահատուկ քաղաքական մշակույթի՝ նվաճված նախորդ մակարդակի ակնհայտ արդյունքը չէ: Սա չի բացառում այն փաստը, որ բարեկեցությունը, հարստության հարաբերականորեն հավասար բաշխումը, միջազգային շուկայում մրցունակ տնտեսությունը, լավ կրթված բնակչությունը, մեծ միջին խավը, ինչպես նաև բազմազանությունն ընդունելու, մրցակցին վստահելու և բախումները

փոխգիջմամբ լուծելու պատրաստակամությունն առավելություններ են. սա նշանակում է հենց այն, որ ժողովրդավարությունը դեռևս պետք է ընտրվի, մարմնավորվի ու հավերժացվի «գործակալների», իրատես ապրող քաղաքական դերակատարների կողմից՝ իրենց հատուկ շահերով, կրքերով, հիշողությամբ և, ինչու՞ *ոչ, բախտով ու խիզախությամբ (fortuna u virta)*» [6, p.158-159] Ակնհայտ է, որ ժողովրդավարության համախմբման հետազոտողները տարբերություն են դնում հանրային կառավարման համակարգի ձևավորման և կայացման ժամանակային պարույրի միջև՝ «անցում-համախմբում» հարացույցի համատեքստում: Անցման ժամանակ ձևավորվում են հանրային համակարգի հիմնական ինստիտուտները, որոնք սկսում են աշխատել ու փոխգործակցել խաղի նոր կանոնների համաձայն: Մինչդեռ համախմբումը պահանջում է նոր նորմերի ու վարչակարգի կառույցների ինստիտուցիոնալացում, լեգիտիմացման ընդլայնում և սկզբնական փուլերում ձևավորված հանրային ինստիտուտների բնականոն գործունեությանը խոչընդոտող դժվարությունների վերացում: Ժողովրդավարության համախմբման գործընթացն իր մեջ ներառում է չորս ուղղություն. 1) արագ սահմանափակել, նվազագույնի հասցնել կամ կապակցել իր գաղափարական ու ինստիտուցիոնալ անհամապատասխանությունները. 2) հաստատել իր ինքնավարությունը հին իշխանությունների, հատկապես, գինվորական ուժերի առջև. 3) մոբիլիզացնել քաղաքացիական հասարակությանը՝ իր արտահայտման ձևերով. 4) զարգացնել ժողովրդի առջև պատասխանատու, կառավարություն կազմավորելու ընդունակ, հարաբերականորեն կայուն կուսակցական համակարգ [5, p. 89]:

1.2 Հանրային կառավարման կերպափոխման գործընթացում ժողովրդավարության համախմբման օրինաչափությունները

ԽՍՀՄ-ի փլուզումից հետո քաղաքական գիտության մեջ ծառայել է մեկ հարց. կարելի է, արդյոք, նորանկախ երկրներում ժողովրդավարական հանրային կառավարման համակարգի կայացման ժամանակ օգտագործել Լատինական Ամերիկայի և Հարավային Եվրոպայի երկրների ուսումնասիրության փորձի վրա կուտակված գիտելիքները: Առաջացած տարակարծությունները համակողմանի վերլուծության ենթարկելով՝ Ս. Լ. Կարլը և Ֆ. Շմիտտերը փորձել են օրինաչափություններ տեսնել երկու տարբեր տարածաշրջաններում ընթացող կերպափոխման գործընթացներում: Հարցի քննարկման շրջանակներում նման հանրագումարը հնարավորություն է տալիս ՀՀ կերպափոխման գործընթացները ուսումնասիրել մի կողմից հետկոմունիստական տարածքներում ձևավորված հանրային կառավարման համակարգերը իրար հետ համեմատելով, մյուս կողմից ստեղծագործաբար (որոշ դեպքերում նաև քննադատաբար) օգտագործել նախկին անցումները

և համախմբումները նկարագրող տեսությունները՝ որոշ դեպքերում նույնիսկ նմանությունների ու տարբերությունների վերհանման միջոցով կատարելով բավականին ռիսկային «կրոսս-տարածաշրջանային» համեմատություններ: Այս նկատառումներով էլ ցանկացել ենք հիմնավորել ՀՀ հանրային կառավարման համակարգի կայացման գործընթացի ուսումնասիրումը «անցում-համախմբում» հարացույցի ենթատեքստում: Վերջինիս շրջանակներում, մշակված կանխադրույթների համաձայն, վարչակարգի փոփոխությունը պետք է դիտարկվի որպես առանձին առարկայական ոլորտ, այսինքն՝ ցանկացած դեպքում համախմբում ենթադրող վարչակարգի փոփոխությունն այսօր ընդունված է մեկնաբանել որպես հանրային կառավարման համակարգի կայացման համեմատաբար ինքնուրույն փուլ:

Այս նկատառումներով անդրադառնա՞նք այն խնդիրներին, որոնք ժողովրդավարացման ձևաչափերը քննարկելիս առաջացնում են տարածայնություններ: Առաջին հերթին կցանկանայինք ընդգծել «անցում-համախմբում» հարացույցին վերաբերող մի համակարգային ընդհանրություն. անցումագիտությանը վերաբերող գրականության մեջ երբեք միարժեք չի գնահատվում այն փաստը, որ բոլոր այն երկրներում, որտեղ փոխվում են լիդերները, հավաքագրվում է նոր ընտրանի, ազատականացվում են քաղաքական կյանքի առանձին չափորոշիչները, ընդունվում են նոր սահմանադրություններ, անցկացվում են այլընտրանքային ընտրություններ, տեղի է ունենում վարչակարգի փոփոխություն: Այս նկատառումներով Տ. Լ. Կարլը և Ֆ. Շմիտտերը փաստում են, որ. «Հարավային Եվրոպայի և Լատինական Ամերիկայի պատմությունն ուսումնասիրողներից ոչ ոք (որի իմաստավորումից էլ առաջացան անցումագիտության հայեցակարգերն ու վարկածները) նման բան չէր հայտարարի: Այս երկու տարածաշրջանները հատկապես «հարուստ» են մենիշխանական վարչակարգի դեմ «հեղափոխություններով», որոնք առաջացնում են մենիշխանության նոր կամ վերափոխված ձևեր» [2, շ. 6]: Լատինամերիկյան երկրներում զինվորական ընտրանին ստեղծել է սեփական սահմանադրությունը, նախաձեռնել հանրաքվեներ, հիմնադրել քաղաքական կուսակցություններ, ձևավորել նոր խորհրդարան: Այնուհանդերձ այդ երկրներից ոչ մեկում այսօր չի ուսումնասիրվում ժողովրդավարական հանրային կառավարման համակարգի կայացման փորձը: Այս ամենը հիմք ընդունելով կարող ենք պնդել, որ վարչակարգային անցումն ամենևին էլ չի նշանակում անցում ժողովրդավարության: Ընդհակառակը, անցման տարբեր տեսակների ուսումնասիրությանը մվիրված գրականության մեջ հստակ համակարգված է, որ վարչակարգային փոփոխությունների սկսելուց հետո անգամ զարգացման հետագծերը կարող են լինել ամենատարբեր. որոշ երկրներ կշարժվեն դեպի ժողովրդավարության համախմբում, մյուսները՝ դեպի մենիշխանական կառավարման նոր ձևեր, երրորդներում կհաստատվի «խառնածին» վարչակարգի այս կամ այն ձևը: Հենց այս պատճառով «անցում-համախմբում» հարացույցը ձևա-

վորվեց հանրային կառավարման մենիշխանական համակարգից անցնան գործընթացի քննարկումների ժամանակ: Քննադատել անցումագետներին այն բանի համար, որ նրանք չեն զբաղվում ժողովրդավարացման ընհանուր ձևաչափի մշակման հարցերով, արդարացի չէ, քանի որ յուրաքանչյուր երկիր ունի «անցում-համախմբում» հարացույցի իրականացման սոցիալ և էթնա-մշակութային իր առանձնահատուկ պայմանները: Այս պայմանների հաշվառումը կառուցվածքային բնույթ չունի, այսինքն՝ «անցում-համախմբում» հարացույցի շրջանակներում հնարավոր չէ համակարգել *ենթակառուցվածքների ինչ-որ ընդհանուր խումբ, որն անհրաժեշտ է կառավարման մենիշխանական համակարգից անցման համար և ինչը կարող է բացատրել այդ անցումը*: Այնուամենայնիվ, գոյություն ունեն կառուցվածքային պայմաններ, որոնք օգնում են հասկանալու, թե ինչու է այս կամ այն երկրում առաջացել *հասարակական համակեցության կենսունակությամբ և քաղաքական կարգի կայունությամբ* աչքի ընկնող բարձրորակ և հաստատուն ժողովրդավարություն: Մեր կարծիքով կառուցվածքային պայմանների ուսումնասիրման համար ուշագրավ է, ժողովրդավարացման տեսաբանների մեծամասնության կողմից ընդունված, Ռաստոուի կողմից հայտնաբերած. «եթե չկա ազգ, ապա չկա ժողովրդավարություն» օրինաչափությունը:

Ելակետ ընդունելով այս մոտեցումը՝ կարող ենք ընդհանրացնել, որ *ժողովրդավարացումը եզակի ուղով զարգացող գործընթաց չէ, այլ՝ այլընտրանքային զարգացման ուղիների մի համակարգ, որի օգնությամբ էլ ուրվագծվում է ժողովրդավարության համախմբման ծրագիրը*:

Այս ուղիներն ուսումնասիրելիս պետք է հաշվի առնել երկու գործոն. մի կողմից՝ *ընտրանու և զանգվածների ռազմավարությունը*, մյուս կողմից՝ *կառավարող խմբերի և իրենց ընդդիմադիրների միջև գոյություն ունեցող ուժերի հարաբերությունը*: Նշված գործոնների հայեցակարգումը և դրանց ենթադրական ազդեցության գնահատականը նկատի ունենալով էլ անցումագետներ Տ. Լ. Կարլը և Ֆ. Շմիտտերն անցումները բաժանել են չորս կատեգորիայի՝ *1. դաշինք (պակտ), 2. փաթաթում, 3. հեղափոխություն և 4. բարեփոխություն*:

Անցման ձևերի և դրանց ազդեցության «նմանություններ-տարբերություններ» համակարգի բացահայտումն անկասկած կախված է դրանց դասակարգումից: Փաստորեն, Տ. Լ. Կարլի և Ֆ. Շմիտտերի առաջարկած դասակարգման համաձայն, «անցումը» պետք է դիտարկել ոչ թե որպես կարճաժամկետ, այլ՝ համակարգված գործողությունների երկարաժամկետ գործընթաց, որի ընթացքում *դաշինքը, փաթաթումը, հեղափոխությունը և բարեփոխությունը* կարող են հանդես գալ կամ առանձին-առանձին, կամ էլ՝ միասին: Թե որ գործընթացը գերակա կլինի՝ «պակտային», թե «բարեփոխական», պայմանավորված է ներքևների ճնշմամբ, համեմատաբար խաղաղ տրամադրվածությամբ, ինչպես նաև կռվին մոբիլիզացված (և խիստ) վարչակարգի ընդդիմադիրների (կոշտ կամ փափուկ) բանակցային արվեստով, և անցումներով, որոնք

«պարտադրված» են վերևից՝ քաղաքական ընտրանու ներսի որոշ խմբավորումների կողմից: Ըստ անցումագետ Մ.Մաքֆոլի՝ լատինամերիկյան և ասիական երկրներում անցումների մեծ մասը «պարտադրված էր» վերևից և իրականացվում էր ընտրանու կողմից: Այդ տեսակի անցումներն ունեին մի «հիանալի» հատկություն. դրանք հաճախ հանգեցրել են անկանխատեսելի հետևանքների, և այն բանից հետո, երբ ազատականացման ազդեցության տակ առաջանում կամ վերածնվում է քաղաքացիական հասարակություն և ստեղծվում է հնարավորություն՝ անորոշ արդյունքներով ընտրություն անցկացնելու համար, դեպքերը սկսում են զարգանալ ամենևին ոչ այնպես ինչպես ակնկալում էին փոփոխությունների նախաձեռնողները: Հենց սա էլ տեղի ունեցավ Չիլիում, Պարագվայում, Պորտուգալիայում և Մեքսիկայում: Իսկ թե արդյոք Արևելքում գոյություն ունի սահմանված օրինաչափություն, վիճելի հարց է, համենայն դեպս Մ.Մաքֆոլը պնդում է, որ հետկոմունիստական երկրներում ամենատարածվածը (և հաջողվածը) «ներքևից պարտադրված» անցումներն էին [3]:

Ակնհայտ է, որ անցումային երկրների դասակարգման Մ. Մաքֆոլի առաջարկած համակարգը հիմնովին տարբերվում է Տ.Լ.Կարլի և Ֆ.Շմիտտերի համակարգերից: Քննելով «ներքևից պարտադրված անցումները», որոնք մեր կարծիքով որոշակի առավելություններ ունեին ժողովրդավարացման սկզբնական շրջանում, Մ.Մաքֆոլը չի վերլուծում անցման ձևերի բազմազանությունը, որը կատարել են Տ.Լ.Կարլը և Ֆ. Շմիտտերը: Փաստորեն վերջիններս, հանրագումարելով XX դարի 50-ականներից մեկնարկած քաղաքական արդիականացման գործընթացը, սոսկ կարևորել են անցման ձևերը: Մինչդեռ, Մ.Մաքֆոլի դասակարգման մեջ տիպավորված են այն արդյունքները, որոնք առաջանում են առաջին ընտրություններից հետո (անկախ այն բանից, դրանք «սահմանադիր» են, թե ոչ), և, այս արդյունքներից դատելով, վերոհիշյալ հեղինակը գնահատում է տվյալ պահին գոյություն ունեցող իշխանական հարբերությունները, երբ նախաձեռնություն է սկսվել (կամ չի սկսվել) վարչակարգային փոփոխություններ կատարելու համար: Ի տարբերություն Մ.Մաքֆոլի՝ Տ.Լ.Կարլը և Ֆ.Շմիտտերը փորձում են վերլուծել և հասկանալ բոլոր այն որոշումների, գործողությունների կամ ուժային հարբերությունների հաջորդականությունը, որոնք ուղեկցվում են ազատականացմամբ և վարչակարգային ներուժի փոփոխությունների սկիզբ են հանդիսանում:

Այս համատեքստում, ժողովրդավարացման գործընթացում ծագած անորոշության գործոնների բազմազանությունը հաշվի առնելով, ոչ մի հիմք չկա ակնկալելու, որ կատարված ընտրությունը կհանգեցնի սպասվող արդյունքների: «Դերակատարները (հիմնականում պետական դիրք զբաղեցնողները) հակված են գերազնահատելու սեփական համբավը և թերագնահատելու իրենց հակառակորդների մոբիլիզացիոն ներուժը և այդ պատճառով էլ «իրատեսորեն» պարտադրում են խաղի այնպիսի կանոններ կամ գնում են այնպիսի փոխզիջումների,

որոնք էլ ի վերջո ջախջախում են նրանց» [2, c. 15]: Դիտարկումները թույլ են տալիս եզրակացնելու, որ այս օրինաչափությունն առավել հստակ դրսևորվում է հետկոմունիստական երկրների ընտրազանգվածի վարքաբանությունում: Շատ դեպքերում դերակատարները չեն կարողանում հաշվարկել ապագա ընտրությունների արդյունքները, նույնիսկ այն դեպքում, եթե ճշգրիտ հաշվարկել են իրենց ընտրազանգվածային հնարավորությունները: Արդյունքում մրցակցող ուժերի հարաբերակցությունը հենց ընտրությունների ընթացքում էլ կարող է փոխվել: Ըստ էության՝ Մ.Մաքֆուլը իր դասակարգման մեջ ոչ միայն ներմուծում է Տ.Լ.Կարլի և Ֆ.Շմիտտերի դասակարգումից տարբերվող փոփոխական, այլ առաջ է քաշում սկզբունքորեն այլ վարկած: Համաձայն նրա, հետկոմունիստական երկրներում, ի հակակշիռ Լատինական Ամերիկայի և Հարավային Եվրոպայի երկրների, առավել մեծ տարածում են ստացել ոչ թե «պակտային» կամ «թելադրված» անցումները, այլ «բարեփոխականը»՝ նախածեռնված ներքևից, որոնք էլ հանգեցնում են «գունավոր հեղափոխությունների»: Ըստ էության՝ Մ.Մաքֆուլը վերադարձ է կատարել ազատական- ժողովրդավարացման նախկին «պահպանողական» տեսություն, որը հենվելով մեծ կերպափոխություններ առաջացրած հեղափոխությունների պատմական փորձի վրա, քաղաքական զարգացումը դիտարկում է որպես անջատողական ձգտումներ ունեցող սոցիալական խմբերի գործունեություն: Այստեղ հատկապես կարևորված է վերջիններիս ընդունակությունը ներթափանցել քաղաքական գործընթացներ և պայքարել հանրային կառավարման համակարգի ժողովրդավարացման համար: Ակնհայտ է, որ Մ.Մաքֆուլի վարկածը ժողովրդավարացման գործընթացում գտնվող երկրներին պահում է հեղափոխականացված վիճակում, որը մեր կարծիքով, չնպաստելով քաղաքական կայունացմանը, միաժամանակ հնարավորություն չի տալիս ժողովրդավարության համախմբումը դիտարկել որպես հանրային կառավարման համակարգի կայացման գրավական: Համաձայնելով Տ. Լ. Կարլի և Ֆ. Շմիտտերի հետ, որոնք չեն ընդունում Մ. Մաքֆուլի վարկածը, նշենք, որ մեր գնահատմամբ հետկոմունիստական անցումների մեծամասնությունը «թելադրված» էր վերևից, սակայն չբացառելով հանդերձ, որ անցման գործընթացը մի քանի երկրներում «թելադրված» է եղել նաև ներքևից: Փաստորեն ներկայացված դասակարգումներն ենթադրում են տարաբնույթ քաղաքական զարգացումներ: Սակայն եթե ընդունելու լինենք Տ. Լ. Կարլի և Ֆ. Շմիտտերի անցման ձևերի դասակարգումը, ապա Մ. Մաքֆուլի բացահայտած առանձնահատկություններն որոշիչ չեն, որովհետև, ըստ «Ազատության տան» [4], ժողովրդավարական կերպափոխումների Հայաստանը, Խորվաթիան, Չեխիան, Սլովակիան, Վրաստանը և Լիտվան արմատապես չեն տարբերվում Բուլղարիայից, Հունգարիայից, Լեհաստանից, Մոլդովայից կամ Մոնղոլիայից: Այս համատեքստում ուշադրության են արժանի Բրազիլիան և Մեքսիկան, իսկ Ասիայում՝ Թայվանը և Թայլանդը: Հանրային կառավարման համակարգի փո-

փոխություններն այս երկրներում տևել են բավական երկար, ընթացել դանդաղ, սակայն նրանց ինստիտուցիոնալ կերպափոխումների արդյունավետությունն այսօր ակնհայտ են: Հանրագումարելով վերոհիշյալ երկրների ժողովրդավարացման փորձը՝ Տ. Լ. Կարլը և Ֆ. Շմիտտերը կարևորելով ժամանակի գործոնը, գրում են, որ «ԿԱԵ և ՆԽՄ երկրների՝ Ալբանիա, Ադրբեջան, Բելոռուս, Էստոնիա, Լիտվա, Մակեդոնիա, Ռումինիա, Ռուսաստան, Սերբիա, Սլովենիա և Ուկրաինա, ժողովրդավարական ձեռքբերումներն առավել քիչ տեսանելի են (իսկ երբեմն էլ՝ կասկածելի), բայց պետք է նշել, որ վերոհիշյալ պետություններից ոչ մեկը, բացառությամբ երկի Սերբիայից, չեն վերադարձել (դեռևս) մենիշխանության նախկին ձև հիշեցնող ինչ-որ վիճակի, և դրանք բոլորը, բացի Ադրբեջանից, շարժվում են (թող որ միշտ հետևողականորեն) դեպի ժողովրդավարության համախմբում» [2, c. 16]:

Հանրային կառավարման համակարգի իրատես կերպափոխման համար Ֆ.Շմիտտերը մեծ ուշադրություն է հատկացնում «ժողովրդավարության որակի» ուսումնասիրմանը՝ այն սերտորեն կապելով «սոցիալական համախմբվածություն» հասկացության հետ, որը ենթադրում է «Ընդհանուր արժեքների և համայնքների ստեղծում, որոնք կրճատում են հարստության ու եկամուտների անհավասարությունը և սովորաբար օգնում մարդկանց զգալու, որ իրենք ներգրավված են ընդհանուր մեկ նախաձեռնության մեջ, ընդհանուր մարտահրավերների առաջ են կանգնած և միևնույն համայնքի անդամ են» [7]: Համաձայնելով Ֆ. Շմիտտերի կարծիքին՝ Մ. Բիգսը գտնում է, որ սոցիալական համախմբվածությունը նմանություն ունի նաև «սոցիալական միություն» հասկացության հետ, որը սահմանվում է որպես «Քաղաքացիների իրավունքների և պարտականությունների մի շարք, որը հանգեցնում է նրան, որ մարդիկ միանման ձևով են ընկալում սոցիալական նպատակները և ընդհանուր քաղաքականությունը» [8]: Վերջինս ենթադրում է, որ տվյալ հասարակությունը «դուրս չի մղում», «չի օտարում» իր այն անդամներին, որոնք տարաբնույթ պատճառներով (հաշմանդամներ, ծերեր, հիվանդներ, օտարվածներ) խոցելի են: Այս նկատառումներով ուսանելի է Մեծ Բրիտանիայի և Կանադայի փորձը. այսպես, Թ. Բլերի կառավարությունը սոցիալական համախմբվածության ծրագրի իր սեփական տարբերակն մշակելով, 1997թ. վարչակազմի գրասենյակին կից ստեղծել է «Հասարակությունից մեկուսացված խավերի» հարցերի ուսումնասիրման բաժին: 2002թ. այդ բաժինը տեղափոխվեց վարչապետի տեղակալի նոր գրասենյակ, որպեսզի կարողանա սերտորեն համագործակցել համապատասխան նախարարությունների հետ: Նման կառույց կա նաև Կանադայում, որը, ուսումնասիրելով ժողովրդավարական արժեքների կառավարման հիմնախնդիրը, մշակել է արդյունքների կառավարման համակարգ՝ այն զուգամիտելով սոցիալական կապիտալի զարգացման հետ: Այս հասկացության ժամանակակից տարբերակն ի սկզբանե առաջարկվել է 1960-ական թվերին [8], բայց այն սկսվել է բազմակողմանի ուսումնասիրվել Իտա-

լիայի հանրային կառավարման ժողովրդավարության վերաբերյալ Ռոբերտ Փութնամի աշխատությունից հետո: Ռ. Փութնամի համաձայն սոցիալական կապիտալը վերաբերում է. «Անհատների միջև եղած կապերին՝ սոցիալական ցանցերին և փոխադարձության ու վստահելիության նորմերին...», այսինքն՝ այն ուշադրություն է հրավիրում ոչ միայն այն փաստին, թե հասարակության որ խավերի ներգրավվածությունն է ավելի ուժեղ հանրային կառավարման համակարգ, այլև նրան, որ ներգրավված սոցիալական խմբերը կարողանում են զսպել իրենց ամբիցիաները և ընկալում, պահպանում են իրենց պարտավորությունների նորմերը, ինչպես նաև քաղաքական ու տնտեսական գործունեության փոխազդեցության հիմքերը» [9, p. 19]: Փաստորեն սոցիալական համախմբվածության հաստատման ակնկալիքով Ռ. Փութնամը գտնում է, որ սոցիալական կապիտալը պետք է աշխատի հասարակության առողջության, ինչպես նաև հանդուրժողականության, համագործակցության ուղղությամբ: Ուստի սոցիալական կապիտալը ոչ միայն սոցիալական համախմբվածության հիմնական բաղադրիչն է, այլև հանրային քաղաքականության վերլուծության մեջ կատարվող փոփոխությունների հիմնական նպատակը: Խնդիրն այն է, որ սոցիալական կապիտալը կարող է արդյունավետ գործել, եթե հանրային կառավարումը բնականոն է կերպափոխվում, իսկ շարունակական բարեփոխումները հաշվի են առնում «ներքևից եկած» առաջարկները՝ հանուն ժողովրդավարության համախմբման: Ակնհայտ է, որ «ժողովրդավարության համախմբում» հասկացությանը կարելի է դիտարկել որպես ժողովրդավարական վարչակարգի գոյության տևողության և կայունության չափորոշիչ: Այնուհանդերձ, այս պարագայում գերակա է այն հարցը, *թե ինչու՞ որոշ ժողովրդավարություններ ավելի կայուն են (կամ ավելի երկար են պահպանվում), քան մյուսները*: Հանրագումարելով ժողովրդավարացման «երրորդ ալիքի» շրջանակներում գտնվող երկրների փորձը՝ կարող ենք ասել, որ «անցում – համախմբում» հարացույցը կիրառելիս հարկավոր է հասարակական-քաղաքական այլ իրողություններ, քան անցումն սկսելու համար: Գործընթացի բազմաչափությունը թույլ է տալիս պնդել, որ մի դեպքում ժողովրդավարության անորակությունը սոցիալական բևեռվածության, մյուս դեպքում՝ քաղաքացիական հասարակության որակի արդյունք է, հաջորդ դեպքում որոշիչ են բարեփոխումների շարունակականությունը, և վերջապես՝ ժողովրդավարություն կարող է չհաստատվել, եթե արդյունավետ չէ սերունդների համերաշխությունը, իսկ համախմբման պատասխանատվությունը ընկած է միայն պետության վրա [10, p. 6-7]: Այս բազմազանությունն անընդհատ նոր անորոշություն է ստեղծում ժողովրդավարության համախմբումը՝ որպես հանրային կառավարման համակարգի կայացման գրավական դիտարկելու առումով: Մեր կարծիքով, եթե նոր ժողովրդավարությունների իրատես գնահատման նպատակով հիմնվենք սոցիալական համախմբվածության զարգացման մակարդակի՝ որպես հանրային կառավարման ժողովրդավարացման հիմնական

բանաձևի, ապա հնարավորություն ենք ստանում դիտարկել այնպիսի ցուցանիշ, ինչպիսին **«ժողովրդավարության որակն» է:**

Սակայն ժողովրդավարացման տեսաբանները լրջորեն չեն ուսումնասիրել «ժողովրդավարության որակի» հիմնահարցը գուցե և այն պատճառով, որ համաձայն են Մ. Մաքֆոլի այն կարծիքին, որ հետկոմունիստական տարածքներում անցման գործընթացում պետք է գերակայի *«հեղափոխությունը ներքևից»:* Մինչդեռ ժողովրդավարացման «երրորդ ալիքի» շրջանակներում գտնվող կերպափոխվող հասարակությունները պետք է ժողովրդավարության համախմբման փուլ անցնեն և դրանից հետո միայն կարելի է դատողություններ անել նման արդյունքների հանգեցրած այն պայմանների մասին, որոնք ձևավորել են նոր ժողովրդավարությունների առկա որակը: Ակնհայտ է, որ այդ երկրները հասել են համախմբման որոշակի մակարդակի, այդ պատճառով էլ կարելի է գնահատել այն, ինչը վերջնական արդյունքում ստացվել է, և ոչ թե պլանավորել նոր անցում, ինչպես կարծում է Մ. Մաքֆոլը՝ *«հեղափոխություն ներքևից»:* Փաստ է, որ ժողովրդավարացման «երրորդ ալիքի» շրջանակներում գտնվող երկրներում արմատական փոփոխությունների փուլն ավարտված է և անհրաժեշտ է ոչ թե *«հեղափոխություն ներքևից»*, այլ այնպիսի համակարգային փոփոխություններ, որը ենթադրում է ժողովրդավարական հանրային կառավարման համակարգի կայուն զարգացում: Հետևաբար, հետագա ինստիտուցիոնալ և վարքաբանական փոփոխություններն ենթադրում են անցում ժողովրդավարության մի ձևից մյուսին՝ ժողովրդավարության որակի բարձրացման ակնկալիքով: Այս մոտեցման օգնությամբ հետկոմունիստական տարածքներում հնարավոր է բացահայտել «ժողովրդավարության որակի» բարձրացման խնդիրը, որը, մեր համոզմամբ, հնարավոր է դիտարկել որպես ժողովրդավարացման նոր ալիք: Այս ամենն էլ հնարավորություն կտա դուրս գալ Մ. Հանթինգթոնի ժողովրդավարացման «երրորդ ալիքի» շրջանակներում ձևավորված ժողովրդավարացման մեթոդաբանական, խորհրդանշային, քաղաքակրթական և վարքաբանական սարդոստյանից: Ակնհայտ է, որ «նոր ժողովրդավարությունները» անհրաժեշտ է գնահատել եզակի չափանիշներով, ընդ որում դրանք պետք է բխեն «իրական, ձեռքբերելի» և ոչ թե «իդեալական» նորմերից, որոնք իրականացնելու համար նույնիսկ ամենազարգացած ժողովրդավար երկրներում անզան դարեր են անհրաժեշտ եղել: Այլ կերպ ասած, ժողովրդավարական անցման պայմաններում հավասար իրավունքներով օժտված քաղաքացիները կարող են տիրապետել ոչ հավասար ռեսուրսների: Արդյունքում ոչ միշտ է հաջողվում երկրի ողջ տարածքում և սոցիալական ենթակառուցվածքների բոլոր մակարդակներում ապահովել կամ լիովին պահպանել սահմանադրական երաշխիքները: Եկամուտների, կյանքի որակի և մակարդակների տարբերությունները կարող են լինել այնքան նշանակալից, որ երկրի միջին ցուցանիշները չարտացոլեն իրերի իրական վիճակը: Քաղաքական այն «բարիքների» տնօրինումը, որը քաղաքացուն հնարավորութ-

յուն է ընձեռուն ընտրանի «նուտքագրվել», կարող է լինել անձնական, ընտանեկան կամ կլանային կապերի արդյունք: Քանի որ, անդամագրվելով քաղաքական միություններին, շարժումներին և կուսակցություններին, քաղաքական նոր իրողություններում հայտնված ոչ բոլոր քաղաքացիներն են գիտակցում ժողովրդավարության համախմբումը որպես հանրային կառավարման համակարգի կայացման գրավական դիտարկելու անրաժեշտությունը: Բնականաբար հարց է առաջանում՝ այս ամենը ենթադրում է ժողովրդավարացման նոր ալիք, թե ոչ: Այս հարցին Մ. Մաքֆոլը մեր կողմից դիտարկվող իր մենագրությունում առաջադրում է «ժողովրդավարացան չորրորդ ալիք» հասկացությունը: Չցանկանալով արմատապես ընդդիմանալ Մ. Մաքֆոլին՝ նշենք միայն, որ նրա կողմից «բացահայտված» ժողովրդավարացման նոր «չորրորդ ալիքի» մասին խոսում են նաև Տ. Լ. Կարլը և Ֆ. Շմիտտերը: Ակնհայտ է, որ Մ. Մաքֆոլը հենվում է Ս. Յանթինգթոնի «երրորդ ալիքի» հայեցակարգի վրա: Սակայն մաքֆոլյան դրույթի հայեցակարգային անկատարելությունը նրանումն է, որ ալիքների փոխհարաբերությունը ինչ-որ իմաստ են ստանում միայն այն պարագայում, երբ ընդհանրապես սեղմում են քաղաքական ժամանակը:

Յետկոմունիստական անցումները, որպես «ժողովրդավարացման հատուկ ալիք» դիտարկելով, Մ. Մաքֆոլը գտնում է, որ այս անցումը հեղափոխական բնույթ ունի, քանի որ Եվրոպայի հարավում և Լատինական Ամերիկայում իբր դրանք բնականոն զարգացող էին: Յետկոմունիստական երկրներում իրականացված կերպափոխումների նման ընդհանրացումը Հարավային Եվրոպայի և Լատինական Ամերիկայի վարչակարգային փոփոխություններին դրանց հակադրումը և՛ տեսական և՛ փորձնական առումով մեզ սխալ է թվում: Չնայած փոփոխությունների լայնամասշտաբ լինելուն, իրավիճակների միջև ենթադրվող նմանությունը օրինաչափ չէ: Խոսքը վերաբերում է ոչ միայն ազատական գաղափարների թույլ տարածվածությանը կամ բռնության դեպքերի (այդ թվում սեփականության իրավունքի ոտնահարում) և մոբիլիզացման ընդլայնման հարաբերական սակավությանը, այլ նաև նրան, որ հին կոմունիստական վարչակարգի կողմնակիցներից շատերը մնացել են իրենց երկրներում՝ պահպանելով զգալի նյութական և քաղաքական ռեսուրսներ: Ժողովրդավարության փորձը թույլ է տալիս հանգել հետևյալ եզրակացությանը. «Իսկական» հեղափոխությունից հետո նման իրողություն բացարձակապես անհնար է, քանի որ դրա ավարտի ժամանակ դերակատարները կամ զրկվում են իրենց կարողությունից, կամ ամբողջովին հեղինակագրկվում, կամ էլ նույնիսկ սպանվում ու արտաքսվում: Մինչդեռ հետկոմունիստական տարածքի երկրներում բոլորովին այլ իրավիճակ ստեղծվեց: Այդ երկրներից շատերում «դիմակայության» ընթացքում պարտություն կրած ուժերը շուտով կարողացան իշխանության վերադառնալ՝ օգտվելով իրենց հայեցողության տակ եղած ռեսուրսներից (անձնական և մեկուսախմբային): Եթե քննարկվող տարածաշրջանում իսկապես տեղի են ունեցել հեղա-

փոփոխություններ, ապա դրանք ավելի շատ եղել են հեղափոխություններ «վերևից» կամ «դրսից», քան «ներքևից»:

Մեր կողմից կատարված նման եզրակացությունը լիովին ներառվում է ժողովրդավարության համախմբման ընդհանուր մոդելի մեջ: Ժամանակին Տ. Լ. Կարլը, Ֆ. Շմիտտերը և Օ'Դոննելլ համեմատության մեջ վերլուծելով լատինամերիկյան և աֆրիկական «չընդունված» անցումները, եզրակացրին, որ նրանց արդյունքում ձևավորված բուրժուազիայի սեփականության իրավունքն անվիճարկելի է: Իսկ ինչ վերաբերում է հետկոմունիստական երկրներին, ապա այստեղ, որոշակի բացառություններով, գործեց մասնավոր սեփականության նկատմամբ պարտոկրատիկ – նոմենկլատուրային ընտրանու ունեցության անվիճարկելիության սկզբունքը: Վերոնշյալով պայմանավորված՝ կարելի է առաջ քաշել նոր վարկած, որն էլ ավելի է հակադրվում արմատավորված պատկերացումներին: Ինչպես արդեն նշվել է, «Արևելաեվրոպական բացառիկության» հիմնական փաստարկ է հանդիսանում թեզն այն մասին, որ իբր հետկոմունիստական երկրներում ավելի դժվար է փոխել վարչակարգը, և իր հերթին այս թեզը կառուցվում է միաժամանակյա ձևափոխումների կանխադրույթի վրա (simultaneity): Ընդունված է համարել, որ «եռաչափ» կամ «քառաչափ» անցում-համախմբման ժամանակ ավելի դժվար է հասնել կայուն արդյունքի, մանավանդ՝ ժողովրդավարական, եթե նույնիսկ հանրային կառավարման համակարգի կերպափոխությունները տեղի ունենան միաժամանակ: Ակնհայտ է, որ խնդիրների զուգահեռ լուծումը, որը կապված է հանրային կառավարման արժեքային համակարգի փոփոխության հետ, նվազեցնում է ինչպես կառավարող ընտրանու, այնպես էլ ընդդիմության միջև սոցիալական կապիտալի բաշխման հետ կապված տարաձայնությունները: Այս առումով անհրաժեշտ է կարևորել հատկապես «եռաչափ» անցումները, որոնց, դեպքում պահանջվում է միաժամանակ լուծել *և՛ սեփականության լեզիտիմության, և՛ ազգային նույնականության, և՛ պետական սահմանների խնդիրը:*

Հանրագումարենք. ԽՍՀՄ-ի փլուզումից հետո կերպափոխման գործընթացում գտնվող հասարակությունները ստիպված են հաղթահարել անցյալի ժառանգությունը և պայքարել քաղաքական զարգացման ճգնաժամերի դեմ՝ ժողովրդավարական հանրային կառավարման համակարգի կայացման ակնկալիքով: Հենց այս ամենն էլ նկատի ունենալով՝ գտնում ենք, որ ժողովրդավարության համախմբման որպես հանրային կառավարման համակարգի կայացման գրավականի դիտարկումը հնարավորություն է տալիս համակողմանի ուսումնասիրել կերպափոխվող հասարակություններին բնորոշ օրինաչափությունները և առանձնահատկությունները՝ հանուն ժողովրդավարության որակի:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. **Сморгунов Л.В.**, Сравнительная политология: теория и методология измерения демократии. СПб.: Изд. С.-Петербур. ун-та, 1999.
2. **Карл Т. Л., Шмиттер Ф.**, Демократизация: концепты, постулаты, гипотезы. Полис, 2004, № 4.
3. **McFaul** The Fourth Wave of Democracy and Dictatorship. Paper prepared for the Annual Meeting of the America Political Science Association. San Francisco, 2001.
4. Freedom House. Report **Karatnycky A., Motyl A., Schnetzer a.** (eds.), . Nations in Transit. Civil Society, Democracy and Markets in East Central Europe and the Newly Independent States, New Brunswick, 2003.
5. **O'Donnel G., Schmitter Ph., and Whitehead L.**, (eds). Transitions from Authoritarian Rule: Prospects for Democracy. Baltimore: The Johns Hopkins University, 1986.
6. **Schmitter Ph.**, Interest Systems and the Consolidation of Democracies // Reexamining Democracy. Essays in Honor of Seymour Martin Lipset / Ed. by L. Diamond. Newbury Park, London, New Delhi: Sage Publications, 1992.
7. **Schmitter Ph.**, From an Iron Curtain of Coercion to a Paper Curtain of Concepts: Grounding Transitologist or Confining Students of Postcommunism?- Slavic Review, 1995, vol 54, № 4.
8. **Biggs M.**, Building blocks for Canada's new social union. Ottawa: Canadian Policy Research Networks, Working Paper, 1996, N F02.
9. **Putnman R. D.**, Bowling alone: The collapse and revival of Armenia community. New York: Simon and Schuster, 2000 .
10. **Меркель В., Круассан А.**, Формальные и неформальные институты в дефектных демократиях. Полис, 2002, № 1.

MARIAM MARGARYAN

*Head of the Chair of Political Science of Public
Administration Academy of the RA,
Doctor of Sciences (Political Sciences)*

UNITY OF DEMOCRACY AS A TOKEN OF REALIZATION OF PUBLIC ADMINISTRATION SYSTEM

The universality of public administration system is observed, taking into account the fact that by including the whole society, it carries out full control not only by means of compulsion, but by uses alternative democratic means of cogency, interest-inducement. In this multi-range process, the unity of democracy as a token of realization of public administration system is attached importance to, because by its assistance all layers of the society, regardless of their social-cultural and ethno-cultural dependence, overcome alienation. By analyzing the democratic transformation of the public administration system, we make a difference between the formation and accomplishment of that system within the time spirals in the “transition-unity” paradigm context. Using transitionalists T.L. Karl’s and F. Shmitter’s conceptions “reforms from above” as well as M. Macfoll’s “reforms from bottom”, the author of the abstract has justified the study of accomplishment of public administration system of the RA in paradigm implication. In this consideration, the interrelations of the conceptions “unity of democracy”, “social unity”, “quality of democracy” and “social capital” in the process of accomplishment of public administration system are discovered.

ԳՈՌ ՍԵՎՈՍՅԱՆ

*ՀՀ պետական կառավարման ակադեմիայի
քաղաքագիտության ամբիոնի ասպիրանտ*

ԷԹՆԻԿ ԻՆՔՈՒԹՅԱՆ ԱՐԴԻՎԿԱՆԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ՔԱՂԱՔԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԵՆԹԱՏԵՔՍՈՒՄ

Համաշխարհային հանրությունը, որպես բազմաէթնիկ և միաէթնիկ տարածական հարթությունների համակարգային ամբողջություն, գտնվելով քաղաքական զարգացման գործընթացի մեջ, պետք է ի վիճակի լինի հստակ պատասխանել ժամանակի մարտահրավերներին: ԽՍՀՄ-ի փլուզումից հետո այս գործընթացը խախտել է ժամանակի և տարածության մեջ ձևավորված տարաբնույթ էթնոմշակութային, սոցիոմշակութային, դավանաբանական ու բնապահպանական արժեքային համակարգերի քաղաքական էության համամասնությունը:

XX դարի 50-ական թվականներին քաղաքական զարգացման տեսության օգնությամբ բազմակողմանի վերլուծության ենթարկելով ԱՖ-րիկայի և Լատինական Ամերիկայի նորանկախ երկրների արդիականացման գործընթացները՝ տեսաբանները (Ս. Հանթինգթոն, Ֆ. Ֆուկույամա, Ռ. Դալ, Ա. Պշևորովսկի, Ա. Լեյպհարտ) վերանայեցին էթնոմշակութային և սոցիոմշակութային արժեքային համակարգերի քաղաքական էության կերպափոխման տրամաբանությունը: Վերջիններս մշակեցին ավանդական հասարակությունից դեպի արդիականի անցման համընդհանուր կերպափոխության կառուցակարգերը՝ աշխարհիկացման (սեկուլյարիզացիա), ինդուստրացման, սոցիալական շարժունակության, կենսամակարդակի բարձրացման, գրագիտության, կրթության և զանգվածային լրատվության միջոցների տարածման, ազգային համախմբվածության, բնակչության քաղաքական մասնակցության ընդլայնման ենթատեքստում: Ըստ իսրայելցի քաղաքագետ Շ. Այզենշտադի՝ արդիականացումը մարտահրավեր է, որին յուրաքանչյուր հասարակություն պատասխանում է երկարատև զարգացման շնորհիվ՝ իր հիմքերում ձևավորված սկզբունքների, կառույցների ու խորհրդանիշների համակարգերին համապատասխան [1, c. 240]:

Համաձայնվելով Շ. Էյզենշտադի հետ և կարևորելով դիտարկվող գործընթացներում քաղաքական հաղորդակցության դերը՝ քաղաքագետ Կ. Դոյչն այն կարծիքին է, որ արդիականացումը, անխուսափելիորեն ակտիվացնում է էթնիկ գիտակցությունը՝ նպաստելով ազգային ինքնորոշումն ապահովելու քաղաքական նպատակադրվածության ձևավորմանը:

Ազգային ինքնորոշման իրավունքը, որպես միջազգային իրավունքի կարևորագույն սկզբունք, ենթադրում է, որ ժողովուրդներն ազատ պետք է ընտրեն ոչ միայն իրենց **ինքնակազմակերպման, ինքնահրացման, ինքնադրսևորման** քաղաքական, տնտեսական, սոցիալական և մշակութային զարգացման հիմնական ուղենիշները, այլև ինքնուրույն որոշեն համագործակցության մշակույթի սեփական արժեքային համակարգը: Ինքնորոշման իրավունքի համատեքստում դրսևորելով համապատասխան քաղաքական դիրք և նպատակադրվածություն՝ այս կամ այն էթնիկ խմբերը մի կողմից փորձում են ներազդել տվյալ քաղաքական համակարգի որոշումների կայացման գործընթացի վրա, իսկ մյուս կողմից սեփական էթնոմշակութային, պատմական կամ տարածքային ինքնության պահպանման, ինչպես նաև տվյալ աշխարհագրական տարածության սահմաններում գոյություն ունեցող բնական պաշարներից և հարստություններից օգտվելու նկատառումներով փորձում են հնարավորինս ինքնիշխան և ինքնուրույն քաղաքականություն վարել [2]:

Փաստորեն, քսաներորդ դարի վերջին քառորդում Կենտրոնական և Արևելյան Եվրոպայում (ԿԱԵ), ինչպես նաև նախկին Խորհրդային Միության (ՆԽՄ) տարածքում տեղի ունեցող քաղաքական տարածության վերաձևումների արդյունքում ազգային ինքնորոշումը, որպես գերակա արժեք, պատճառ է դառնում էթնոազգայնական և միջէթնիկական բնույթի այնպիսի բախումների, որոնք ընդգրկելով բազմազգ պետություններն ու տարածաշրջանները՝ նրանց հավանական տրոհումն առանձին շրջանների դարձնում են անխուսափելի [3, p. 4-7, 67-69]: Այս առումով հատկանշական է ավստրիացի գիտնական Ու. Ալտերմատի այն մոտեցումը, համաձայն որի Եվրոպայում էթնոազգայնականության հերթական բռնկումը կապված է արդիականացման գործընթացների հետ: Եվ վերոնշյալ երևույթի պայթունավտանգ բնույթն արտահայտվում է հենց դրա երկու բաղկացուցիչ՝ ազգայնականացման և էթնիկականացման գործընթացների համաժամանակյա արտահայտման արդյունքում: Այս ենթատեքստում Արևմտյան և Արևելյան Եվրոպան միմյանցից տարբերվում են նրանով, որ վերջիններս գտնվում են արդիականացման տարբեր փուլերում, և այդ գործընթացում գերակա նշանակություն ունի ազգային պետության ստեղծման գաղափարը [4, c. 14-15]: Իսկապես, պատմության հոլովությունում արդիականացման արժեքային համակարգի փոփոխությունը պայմանավորված է տվյալ հասարակության ուրբանիզացման, գրագիտության, ինդուստրիալացման մակարդակով:

Քաղաքագետ Յ. Ս. Քոթանջյանը, արդիականացման նկատմամբ ցուցաբերելով քաղաքակրթական մոտեցում, նշում է, որ արդիականացումը գերակա նշանակություն ունի էթնոազգային երևույթների զարգացման գործում, քանի որ այն արմատապես փոխում է ազգի կամ էթնիկ խմբի գործառնության պայմանները: Իր մոտեցումն առավել հիմնավորելու համար Յ. Ս. Քոթանջյանը արդիականացումը դիտարկում է

որպես արժեքային համակարգի փոփոխության բազմաչափ գործընթաց, որը ենթադրում է համալիր փոփոխություններ հասարակության քաղաքական, տնտեսական, սոցիալական, հոգեբանական, բնապահպանական, ժողովրդագրական և տեխնոլոգիական հարաբերություններում [5, c. 114-122]: Համաձայնվելով քաղաքագետ Հ.Ս. Քոթանջյանի հետ՝ նշենք, որ այս բազմաչափ գործընթացը ԽՍՀՄ-ի փլուզումից հետո նոր որակներ է ձեռք բերել: Եվրոպա մայրցամաքում քաղաքական տարածության ազգայնացման գործընթացների ուսումնասիրությանը զբաղվող Ռ. Բրուբեյքերն առանձնացնում է վերոնշյալ երևույթի զարգացման երեք հիմնական աղբյուր. ա) ազգային փոքրամասնությունները, բ) ազգայնացվող պետությունները, որտեղ ապրում են այս կամ այն ազգային փոքրամասնությունները և գ) արտաքին «հայրենիք»-ները, որոնք էլ էթնոմշակութային ազգական կապերի մեջ են գտնվում այլ ազգ-պետություններում բնակվող էթնիկ փոքրամասնությունների հետ [3]: Եվ չնայած ցանցային հասարակություններին բնորոշ տարածություն-տեխնոլոգիա-հասարակություն փոխազդեցության բարդ կառուցվածքին, վերոնշյալ երեք կողմերի միջև տեղի ունեցող բազմաչափ գործընթացները ևս ենթարկվում են ցանցային հասարակությունների զարգացման ներքին տրամաբանությանը: Տվյալ բարդությունը նախևառաջ կապված է տարածական և ժամանակային նոր հարթություններում այս կամ այն էթնիկ խմբին տեղ, դեր և կարգ ապահովելու հնարավորությունների հետ: Ինչպես նշում է Մ. Կաստելլո. «...ժողովուրդները շարունակում են ապրել առօրեականության ռիթմով հաշվարկվող ժամանակի մեջ և կոնկրետ լոկալ, հատվածային տարածություններում..., որոնք թույլ են կապված միմյանց հետ և վերջիններիս համար գնալով ավելի դժվար է դառնում օգտվել ընդհանուր մշակութային ծածկանիշերից» [6, c. 394-398]:

Ելակետ ընդունելով այս ամենը՝ նշենք, որ նպատակահարմար ենք համարում այդ բազմաչափությունը դասակարգել երկու ընդհանուր խմբում.

- Սոցիալական հավաքագրում (մոբիլիզացիա). որի ընթացքում տեղի է ունենում հաղորդակցական նախկին կապերի հիմնական հանգույցների քայքայում, ինչի արդյունքում մարդիկ ի վիճակի են ընկալելու նոր արժեզանգի համակարգի շրջանակներում իրենց վարքը սոցիալականացնող արմատական կերպափոխությունները: Փաստորեն, արժեզանգի համակարգի փոփոխության գործընթացն ուղեկցվում է ոչ միայն գրագիտության, կրթության և հեռահաղորդակցության, զանգվածային լրատվամիջոցների և ուրբանիզացման որակական աճով, այլ իր մեջ ներառում է նորարարության հնարավորություն:

- Տնտեսական զարգացում. այն խթանում է ընդհանուր տնտեսական ակտիվությունը և աշխատանքի միջազգային նոր բաժանման գործընթացում տվյալ էթնիկ «ես»-ի մրցունակ մասնակցությունը, որով էլ պայմանավորված է սոցիալական երկխոսության, սերունդների համերաշխության սկզբունքների կիրառումը՝ մեկ շնչին ընկնող ՀՆԱ-ի,

ինդուստրիալացման, նոր տեխնոլոգիաների ներդրման և համընդհանուր բարեկեցության մակարդակի աճի նկատառումներով: Վերջիններիս առկայության պայմաններում բարձրանում է կյանքի որակը, մակարդակը և միջին տևողությունը, որոնք էլ հնարավորություն են տալիս բազմաէնիկ տարածաշրջաններում գտնվող էնիկ «Ես»-ին ինքնահաստատվել, ինքնաիրացվել, ինչպես սեփական տեսակի կայուն զարգացման, այնպես էլ բնականոն արդիականացման երաշխիքով:

Այնուամենայնիվ, ամեն մի սոցիալական փոփոխություն չէ, որ հանգեցնում է քաղաքական արդիականացման, և այսօր արդեն ԿԱԵ և ՆԽՄ «հասնող զարգացման» կարգավիճակում գտնվող երկրների համար հիմնականում շրջանառվում է «մասնակի արդիականացում», «արդիականացման սինդրոմ», «փակուղային արդիականացում» հասկացությունները: Իսկապես, ժողովրդավարացման «երրորդ ալիքի» շրջանակներում քաղաքական զարգացման ճգնաժամերի առկայությունը հասարակությանը դնելով «հասնող զարգացման» կարգավիճակի մեջ՝ անորոշությունների, անկայունությունների և հատվածայնությունների պատճառ է դառնում, որն էլ իր հերթին հանգեցնում է «արատավոր ժողովրդավարությունների» հաստատմանը [7]: Անցումային երկրների քաղաքական անկայուն իրավիճակների համեմատական ուսումնասիրությամբ զբաղվող քաղաքագետ Մ. Մարգարյանը վկայում է. «...որ պատրաստի մոդելների հանպատրաստից ներդրումը որևէ հասարակության սոցիալ-պատմական ենթատեքստում (որը չի հասցրել արդիականանալ սեփական արժեքային համակարգի հաշվին), անհամատեղելիություն առաջ բերելով տվյալ հանրույթի անցյալի, ներկայի և ապագայի միջև ստեղծում է պատահականության և քաոսի մեծ հնարավորություն [8, էջ 11]:

Ավելին, սոցիալական և տնտեսական արդիականացումն արմատապես փոխելով քաղաքական ինստիտուտների արժեշահային համամակարգը՝ անխուսափելիորեն քայքայում են ավանդական քաղաքական խմբավորումների միջև առկա ցանցային հանգույցները և խախտում ավանդական հասարակություններում սոցիալական ժամանակի ընթացքում ձևավորված վստահությունը հեղինակությունների զրաված տարածությունների նկատմամբ: Ավանդական հասարակության կարևորագույն սոցիալական ինստիտուտին՝ տարածության և ժամանակի աստիճանակարգման սկզբունքով գործառնվող նահապետական ընտանիքին փոխարինելու է գալիս գերժամանակի մեջ ձևավորված՝ ցանցային կառավարում ենթադրող տեղեկատվական տարաբնույթ հոսքերի արժեքայնությունը գնահատող ընտանիքը: Ավանդական ինստիտուտների փլուզումը մի կողմից հանգեցնում է հոգեբանական ապակողմնորոշման, մյուս կողմից քաղաքական զարգացման ճգնաժամերից առավել ընդգծուն է դարձնում նույնականացման ճգնաժամը, քանի դեռ նոր իրավիճակը հնարավորություն չի տվել էնիկ «Ես»-ին ընդունելով նոր խորհրդանիշները՝ միաժամանակ կերպափոխել պատմության հոլովությունը ձևավորված սեփական արժե-

շահային համակարգը: Այնուամենայնիվ, համեմատական քաղաքագիտության շրջանակներում ուսումնասիրելով բազմաէթնիկ տարածաշրջանների քաղաքական զարգացման առանձնահատկությունները Ս. Հանթինգթոնը կարևորում է այն հանգամանքը, որ մի շարք ավանդական ինստիտուտներ կարող են վերածնվել և դառնալ նոր կազմակերպության հիմք, ինչպիսիք են՝ ցեղային միություններն աֆրիկյան շատ պետություններում կամ կաստայականությունը Հնդկաստանում: Քաղաքական կարգի փոփոխությունների հատույթում նոր արժեշահային համակարգի հիման վրա ստեղծված տարածությունների ձևավորման առանձնահատկություններն ուսումնասիրելով՝ Ս. Հանթինգթոնը արդիականացման գործընթացում գերակա է համարում հետևյալ երեք առանցքային փոփոխությունը [9, c. 50-56].

1. **Ռացիոնալացվում են ավանդական ինստիտուտների գործառույթները.** կրոնական, արյունակցական, տոհմացեղային հեղինակությամբ փոխարինելու է գալիս միասնական, աշխարհիկ, էթնոազգային քաղաքական կերպարը: Այսպիսի փոփոխությունը ենթադրում է, որ իշխանությունն որոշակի էթնիկ պատկանելիություն ունեցող մարդու համար գործողությունների, հարաբերությունների՝ հարաբերական անկախության մեջ գտնվող ամբողջություն է, որն իր խաղային տրամաբանությամբ հնարավորություն է տալիս էթնիկ «ես»-ին բազմաչափ քաղաքական ժամանակի մեջ տեղ ապահովել իշխանական հարաբերություններում՝ արդիականանալով անցյալ-ներկա-ապագա եռաչափ արժեշահային համակարգում:

2. **Հաստատվում են նոր ինստիտուտներ,** որոնք տարբերակում են քաղաքական գործառույթները և նախադրյալներ ստեղծում ներկայացուցչական ժողովրդավարության ձևավորման ու հաստատման համար: Այս գործընթացում քաղաքական ոլորտից առանձնացվում են իրավական, ռազմական, վարչարարական, գիտական բնագավառները, իսկ պաշտոնների ու լիազորությունների բաշխումն իրականացվում է մրցունակ գիտելիքներ և ձեռքբերումներ ունեցող կադրերի ներգրավմամբ, այլ ոչ տիտղոսավոր ազգային կամ էթնիկ պատկանելությունից ելնելով:

3. **Ապահովվում են ամենատարբեր էթնիկ խմբերի ոչ միայն մասնակցությունը, այլև ակտիվությունը,** որը հնարավորություն է տալիս բազմաէթնիկ կառուցվածք ունեցող հասարակության յուրաքանչյուր անդամի վերահսկողություն սահմանել և կենտրոնական իշխանության, և տեղական ինքնակառավարման մարմինների նկատմամբ:

Ելակետ ընդունելով այս մոտեցումը՝ քաղաքական արդիականացման գործընթացներն ուսումնասիրող Ֆ. Ֆուկույաման, Ռ. Դալը, Ա. Պշտրոկովսկին, Ա. Լեյպհարտը վերլուծելով Աֆրիկայի, Լատինական Ամերիկայի և ՆԽՄ բազմաէթնիկ տարածքներում տեղի ունեցող բազմաչափ գործընթացները դիտարկում են նրա դրսևորման հետևյալ փուլերը.

XX դարի 50-60-ական թթ.: Սկսվեց զարգացած երկրներում սոցիալական հեղափոխությունների արդյունքում հաստատված արժեքների (հատկապես ազատական) մեխանիկական փոխառումն աֆրիկյան, ասիական և լատինաամերիկյան նոր անկախացած երկրների կողմից՝ իրենց հասարակական օրգանիզմում արիեստականորեն ներդնելու գաղափարը: Այս ամենը հանգեցրեց քաղաքական գործընթացի կառավարման այնպիսի ունիվերսալ մոդելի հաստատման գաղափարին, որի էությունը ցանկացած երկրի ավանդական արժեշահային համակարգի ուղղագիծ արդիականացումն է, այսինքն՝ անցում դեպի արևմտյան չափանիշներով արդիական հասարակության: Այս փուլում արդիականացման տեսությունը մեծապես սկսեց քննադատվել մի կողմից՝ զարգացման գաղափարն այդչափ պարզեցնելու և դիտարկվող հասարակությունների յուրահատկությունները՝ հատկապես մշակութային առանձնահատկությունները հաշվի չառնելու համար, որոնք պատճառ հանդիսացան նոր ինստիտուտների ու հարաբերությունների ներդրման արգելակմանը և նախագծի տապալմանը, մյուս կողմից՝ արդիականացումը որպես գաղութատիրական նոր եղանակ և արևմտյան ազդեցության տարածման միջոց օգտագործելու համար:

XX դարի 70-80-ական թթ.: Սկսեցին առաջնային համարվել սոցիալ-տնտեսական և քաղաքական կառուցվածքային այնպիսի փոփոխություններ, որոնք կարող են ընթանալ ոչ միայն ժողովրդավարացման արևմտյան մոդելով: Այս նկատառումներով քաղաքական զարգացման գործընթացը դիտարկվեց որպես կայուն զարգացման նախապայման, որը ենթադրում է.

- **հարմարվողականություն** (ադապտացիա), որը պայմանավորված է շրջակա միջավայրի առանձնահատկություններով (հատկապես պատմական հիշողությամբ) և կերպափոխության տարիքով,

- **բազմակառուցվածքայնություն**, որն արդյունք է ինչպես քանակական, այնպես էլ որակական հատկանիշների տարաբաժանման,

- **ինքնորոշվածություն**, որն արտահայտում է քաղաքական ինստիտուտների և ընթացակարգերի անկախության մակարդակը՝ այլ հասարակական կազմակերպություններից,

- **համախմբվածություն**, որը մի կողմից, հանուն անվտանգության, ենթադրում է քաղաքական ինստիտուտների (այդ թվում նաև բանակի) գործառույթների արդյունավետություն, մյուս կողմից քաղաքացիների այնպիսի քաղաքական գիտակցություն, որն ապահովում է բարոյական ոգի և կարգապահության բարձր մակարդակ՝ նպաստելով սոցիալական երկխոսությանը, սերունդների համերաշխությանը, շարունակական բարեփոխություններին և կայուն զարգացմանը:

Վերոնշյալ նախապայմաններից կարևորելով համախմբվածությունը՝ կարող ենք եզրակացնել, որ քաղաքական արդիականացման և զարգացման բազմաշերտ գործընթացների առաջնային խնդիրը ոչ այնքան ազատության ապահովումն է, որքան օրինական քաղաքական

կարգի հաստատումը (քանի որ նախքան իշխանությունը սահմանափակելը պետք է ստեղծել այն) և այդ նպատակին հնարավոր է հասնել հասարակության նպատակամետ բաց հավաքագրման, քաղաքական կյանքին նրանց մասնակցության և նրանց շահերի արտիկուլյացման ու ազդեցացման համար անհրաժեշտ քաղաքական կառույցների ինստիտուցիոնալացման հավասարակշիռ հարաբերակցության միջոցով:

Ազատական ուղղության ամենաակնառու ներկայացուցիչ Ռ. Դալը քաղաքական արդիականցման հիմնական չափանիշ է համարում քաղաքական ներկայացչության համակարգում բնակչության ներգրավվածության աստիճանը, ըստ որի՝ արդիականացումը ենթադրում է բաց սոցիալական և քաղաքական համակարգի ձևավորում և սոցիալական հավաքագրման բարձր մակարդակ ու քաղաքական համայնքին բնակչության ինտեգրման ապահովում [10]: Ընդ որում, արդիականացման բնույթն ու շարժընթացը կախված են ազատ ընտրանիների բաց մրցակցությունից և քաղաքական գործընթացին շարքային քաղաքացիների մասնակցության աստիճանից: Պայմանավորված այս երկու գործոնների հարաբերակցությամբ՝ հեղինակն առաջարկում է զարգացման մի քանի տարբերակներ:

Միևնույն ժամանակ ազատականացման փուլում քաղաքական զարգացման ճգնաժամերը նվազագույնի հասցնելու (կամ բացառելու, ինչպես նաև համեմատաբար քիչ կորուստներով) նկատառումներով Ռ. Դալը կարևորում է մարդու քաղաքական գիտակցության, մշակույթի, ավանդական և քաղաքական նոր արժեքների փոխներդաշնակման անհրաժեշտությունը: Արդիականացման տեսության հեղինակներից շատերը համոզվելով ավանդույթների և ժամանակակից գաղափարների հակադրման անկենսունակության մեջ եկան այն եզրակացության, որ անհրաժեշտ է ոչ թե արմատախիլ անել ավանդույթները, այլ կերպափոխել դրանց վերաբերյալ առկա տեղեկատվահաղորդակցական համակարգը՝ նպաստելով արդիականացման գործընթացի բնականոնությանը:

Այսպիսով, 80-ական թթ. երկրորդ կեսին քաղաքագետների շրջանում մեծ տարածում գտավ «արդիականացում՝ շրջանցելով արդիականը» հայեցակարգը, ըստ որի քաղաքական զարգացումը պետք է զերծ մնա արևմտյան ժամանակակից արժեքների (ռացիոնալիզմ, անհատական ազատություն և սոցիալական արդարություն, ազատական ժողովրդավարության սոցիալական պետության, իրավական պետության և քաղաքացիական հասարակության գաղափարներ) փաթաթումից և հաշվի առնել տվյալ հասարակության սոցիոմշակութային ավանդույթները, քանի որ, ինչպես նշում է Ե. Էյզենշտադը. «...նախկինի քայքայումն անպայմանորեն չի ենթադրում նորի ձևավորում: Հաճախ ավանդական կապերի խզումը և ավանդական արժեքների կորուստը հանգեցնում են դեզինտեգրման, ապակողմնորոշման և քաոսի, և ոչ՝ նոր արժեքների ու ինստիտուտների հաստատման» [11, p. 99]:

Այսպիսով, հանրագումարելով վերոշարադրյալը, պետք է նշենք, որ արդիականության տեսությունը կորցնում է իր երբեմնի ունիվերսալությունը և այն դիտարկվում է որպես ինքնազարգացող գործընթաց, որը կախված է մի կողմից քաղաքական ընտրանիների նպատակաուղղված գործունեությունից, մյուս կողմից՝ օբյեկտիվ պայմանների ազդեցությունից (բաց սահմաններ, միգրացիոն գործընթացներ, տեղեկատվա-հաղորդակցական տեխնոլոգիաների և համացանցի տարածում) և հասարակության շարքային անդամների վարքագծից (քաղաքական գիտակցություն, մասնակցություն, համախմբվածություն): Հաշվի առնելով գլոբալ աշխարհում տեղեկատվահաղորդակցական տեխնոլոգիաների, ինչպես նաև գլոբալիզացման և լոկալիզացման համաժամանակյա գործընթացների զարգացման ներկայիս միտումները՝ պետք է սոցիոմշակութային և ֆիզիկական-ժամանակային կանոններ կառուցել ավանդական հասարակություններին բնորոշ **լոկալ** և ցանցային հասարակություններին հատուկ **հոսքերի տարածությունների** միջև, ինչն էլ իր հերթին հնարավորություն կտա խուսափել սոցիալական հիպերտարածության ժամանակային բազմամակարդակ չափումներից:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. *Эйзенштадт Ш.*, Революция и преобразование обществ. Сравнительное изучение цивилизаций. Пер. с англ. А.В. Гордона, под ред. Б.С. Ерасова, М., Аспект Пресс, 1999.
2. *Jongman A.J., Schmid A.P.*, Monitoring Human Rights. Manual for Assessing Country Performance. Leiden: LISWO, 1994. Part III: Glossary (software version).
3. *Brubaker Rogers.*, Nationalism Reframed. Nationhood and the National Question in the New Europe. Cambridge University Press, 1996.
4. *Альтерматт У.*, Этнонационализм в Европе, М.: Российск. гос. гуманит. ун-т, 2000.
5. *Котанджян Г.С.*, Этнополитология консенсуса-конфликта: Цивилизационный аспект национальной безопасности,- 2-е изд., доп. Перераб.- М.: Луч, 1992.
6. *Кастельс М.*, Информационная эпоха: экономика, общество и культура, Перевод с англ. под редакцией О.И.Шкаратана, М.: 2000.
7. *Меркель В., Крауссан А.*, Формальные и неформальные институты в дефектах демократии, Полис, 2002, (N1, N2).
8. *Սիրճարյան Ս.*, Քաղաքական արդիականացման և զարգացման հիմնահարցեր, Երևան, «Պետական ծառայություն», 2004.
9. *Хантингтон С.П.*, Политический порядок в меняющихся обществах, Перевод с англ. В.Р. Рокитянского, Прогресс-Традиция, М., 2004.
10. *Даль Р.*, Демократия и ее критики, Пер. с англ. Под ред. М.В.Ильина, М., (РОССПЭН), 2003.
11. *Eisenstadt Sh.*, Tradition, Change and Modernity, New York: Willey, 1973.

GOR SEVOSYAN

*Post-graduate Student of the
Public Administration Academy
of the Republic of Armenia*

The article deals with the peculiarities of political development and modernization of polyethnic regions after the collapse of USSR.

We discuss S. Hantington's and M. Castells's theoretical approaches about political modernisation and political *areas* and *time* in modern network societies.

«Հանրային կառավարում» գիտական հանդեսն իր էջերում հրապարակում է հոդվածներ, որոնցում առաջնային են ՀՀ հիմնախնդիրների վերաբերյալ թեմաները:

Խմբագրությանն ուղարկված հոդվածները չեն վերադարձվում, հանդեսի պայմաններին չհամապատասխանող նյութերը չեն ընդունվում: «Հանրային կառավարում» հանդեսի հրապարակումներում ներկայացված մոտեցումներն արտահայտում են հեղինակների տեսակետը:

Հոդվածների ներկայացման ձևը

1. Հոդվածները ներկայացվում են հայերեն, ռուսերեն կամ անգլերեն, տպագիր (1 օրինակ) և համակարգչային շարվածքով՝ կրիչով (*MS WORD* ծրագրով), հայերենը՝ «Arial Armenian», ռուսերենը՝ «Times New Roman» (*Unicode*) և անգլերենը՝ «Times New Roman» տառատեսակներով, 11 տառաչափով (Font): Պարտադիր է «և» տառի օգտագործումը: Բացակը (*space, пробел*) համարվում է առանձին նիշ: Բառերը տարանջատել միայն մեկ բացակով:

2. Էջը պետք է համապատասխանի A5 (Width 14.8 cm, Height 21 cm) չափսին, ունենա լուսանցքեր՝ ձախից, աջից, վերևից ու ներքևից՝ 1 սմ: Էջերը պետք է համարակալված լինեն էջի ներքևում կենտրոնում: Տողերի միջև բացվածքը՝ 1,5 (1,5 lines): Ձեռագիրը պետք է ունենա կողմնորոշում էջի աջ և ձախ եզրերից (Justify):

3. Հոդվածն սկսվում է վերնագրով առաջին տողի կենտրոնում՝ մեծատառերով, որին հետևում է **հեղինակ(ներ)ի անունը և ազգանունը, պաշտոնը և կոչումը**: Հոդվածի վերջում ներկայացվում է ամփոփագիրն անգլերեն՝ ոչ ավելի, քան 0.5 էջ ծավալով (անգլերեն ներկայացված հոդվածների ամփոփագիրը պետք է լինի ռուսերենով): Հոդվածի ընդհանուր ծավալը՝ ոչ ավելի, քան 15 էջ:

4. Հոդվածը պետք է ձևակերպված լինի հստակ, վերջում պետք է տրվի գրականության ցանկը: Հոդվածը եզրափակվում է հեղինակ(ներ)ի ստորագրությամբ (ձախից) և աջից՝ նյութը խմբագրության հանձնելու թվականը (օրինակ՝ 15.04.2007 թ.):

5. Նկարները, գրաֆիկները և այլ վիզուալ նյութերը ներկայացվում են էլեկտրոնային տեսքով՝ առանձին ֆայլով կամ ներմուծված հոդվածի մեջ WORD ծրագրում իբրև նկարներ (*paste special/as picture*) և առանձին EXCEL ֆայլով (գրաֆիկների, դիագրամների և այլ դեպքերում): Միևնույն նյութի ներկայացումն աղյուսակի և նկարի ձևով չի թույլատրվում: Հոդվածում նկարների հղումները բերվում են հապավումով [օրինակ՝ «(տես նկ. 8)» կամ «ինչպես հետևում է նկ. 4-ից»:

6. Ընդունված խորհրդանշանների (% , \$) օգտագործումն անհրաժեշտ է: Թվականի հապավումները բերվում են բացակով և կետով (օրինակ՝ «1824 թ. պայմանագրով» կամ «1980-2000 թթ. ընթացքում»):

7. Հոդվածում օգտագործված աղբյուրների և գրականության հղումները բերվում են քառակուսի փակագծերում՝ միացյալ և հաջորդական համարակալումով, այդ համարի կողքին նշելով հղված էջ(եր)ը, եթե հղման աղբյուրը մե-

կից ավելի անգամ է օգտագործվում ամբողջ հոդվածում: Եջը պետք է նշել աղբյուրի բնագրի լեզվով՝ «էջ» (հայերեն), с. (ռուսերեն), р. (անգլերեն, ֆրանսերեն կամ այլ լեզվով աղբյուրներ), օրինակ՝ [1], [2, с. 11-12]: Հոդվածի վերջում, «Գրականություն» բաժնում, նույն հաջորդականությամբ բերվում է գրականության ցանկը, 10 տառաչափով, բնագրի լեզվով: Հաջորդաբար նշվում են կարգային համարը (առանց քառակուսի փակագծերի), հեղինակների ազգանուններն ու անվանատառերը՝ **մզացված (Bold)** և *շեղ (Italic)*, հրատարակության վերնագիրը, հրատարակչության անունը, վայրը (քաղաքը), թվականը և էջերի ընդհանուր թիվը: Պարբերական հրատարակությունների համար հեղինակի անվան և ազգանվան ու հրապարակման վերնագրին հաջորդում են պարբերականի անվանումն առանց չակերտների, հրատարակման թվականը, հատորի հ/կամ թողարկման համարները, վայրը, հերթական համարը և էջ(եր)ը: Էլեկտրոնային աղբյուրների դեպքում վերնագիրը (եթե կա), web-հասցեն ամբողջությամբ և անսաթիվը, ամիսը, տարին: Օրինակ՝

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. *Հարությունյան Ա.*, Եվրոպական Միության հանրային ծառայությունը, «Հանրային կառավարում», 2004 թ., թիվ 3-4, էջ 4:

2. *Борисов А.Б.*, Большой экономический словарь, М., Книжный мир, 2006, 860 с.

3. *Yasha Lange*. Media in the CIS, Center for Civil Society International, Amsterdam, 1997, from <http://www.internews.ras.ru/books/media>,

4. <http://www.oecd.org/dsti/sti>.

8. Ենթատողային մեկնաբանությունները կամ հավելումները (footnotes) բերվում են տվյալ էջի ստորին հատվածում՝ յուրաքանչյուր էջում սկսելով 1 թվային համարակալումով (Restart each page), 9 տառաչափով:

9. Հոդվածի վերջում գրել հոդվածի վերնագիրը 3 լեզուներով՝ հայերեն, ռուսերեն և անգլերեն (մեծատառերով):

10. Անձնական տվյալներ.

- անուն, ազգանուն, պաշտոն, կոչում՝ 3 լեզուներով,
- հեռախոսի համարը, էլեկտրոնային հասցեն:

Խմբագրական խորհուրդ

Խմբագիր՝
Համակարգչային շարվածքը և
ձևավորումը՝

ԼԱՎՐԵՆՏԻ ՄԻՐԶՈՅԱՆ

ԱՆՆԱ ՂՈՒՇՉՅԱՆԻ

Չափսը՝ 70x100^{1/16}, թուղթը՝ օֆսեթ, տպագրությունը՝ օֆսեթ,
ծավալը՝ 6.1 մամուլ, տպաքանակը՝ 300:

Տպագրվել է «Տիգրան Մեծ» տպագրատանը
(հասցեն՝ Երևան, Արշակունյաց 2)